ՓՈՔՐԻԿ ԱՂՈԹԱԳԻՐՔ

Էջմիածին
Հեղինակային հրատարակություն
2022

Թարգմանիչն իր համեստ աշխատանքը նվիրում է վաղամեռիկ սիրելի կնոջ՝ Գևորգյան Արփինեի անմոռաց հիշատակին և խոնարհաբար խնդրում բարեպաշտ ընթերցողներին աղոթել նրա՝ Աստծո Արքայությանն արժանանալու համար:

Թարգմանիչն իր երախտագիտությունն է հայտնում սիրելի ընկերոջը՝ Քրիստոսով եղբայր Գրիգոր Մովսիսյանին, որի անգնահատելի օգնությունը ծանր և դժվարին ժամանակներում հնարավոր դարձրեց Աղոթագրքի ծնունդը:

ՓՈՔՐԻԿ ԱՂՈԹԱԳԻՐՔ

Նաև աղոթքներ հիվանդների համար
և հոգևոր օգնություն հիվանդապահներին
ու խնամողներին

Թարգմանությունը եկեղեցասլավոներենից և
ռուսերենից՝ Կարեն Գևորգյանի

Խմբագիր՝ Մարիետա Խաչատրյան

МАЛЕНЬКИЙ МОЛИТВОСЛОВ

(На армянском языке)

Перевод с церковнославянского и русского языков
Карена Геворгян

Էջմիածին - 2022

ՀՏԴ 27-534.3
ԳՄԴ 86.37
Ա 490

Թարգմանությունը եկեղեցասլավոներենից և ռուսերենից՝ Կարեն Գևորգյանի

Խմբագիր՝ Մարիետա Խաչատրյան

ՓՈՔՐԻԿ ԱՂՈԹԱԳԻՐՔ

Ա 490 Նաև աղոթքներ հիվանդների համար և հոգևոր օգնություն հիվանդապահներին և խնամողներին / Թարգմ. եկեղեցասլավոներենից և ռուսերենից՝ Կարեն Գևորգյանի; Խմբագիր՝ Մարիետա Խաչատրյան.– Էջմիածին: Հեղինակային հրատարակություն.– 2022.– 172 էջ:

Բարեպաշտ և աղոթասեր հայ հասարակությանը ներկայացվող աղոթքների ծաղկաքաղը, որը թարգմանված է ուղղափառ աղոթագրքից, բաղկացած է մի քանի մասերից՝ աղոթական կանոններից, հիվանդների համար և հիվանդի կողմից կարդացվող աղոթքներից, ամենատարբեր պետքերի համար և դեպքերում կարդացվող աղոթքներից և հիվանդապահներին ու խնամողներին ուղղված հոգևոր խոսքերի ծաղկաքաղից, որոնք ընտրված են XX դարի վկայասեր հայր Միտրոֆան Սրեբռյանսկու՝ մինչհեղափոխական Ռուսաստանի գթության քույրերին ուղղված ուսուցումներից և հորդորումներից: Կարծում ենք՝ աղոթագրքի այդ բաժինը հոգեշահ և օգտավետ կլինի նաև մերօրյա հավատացյալների համար՝ մյուսներին ծառայելով որպես մերձավորին նվիրվելու վսեմ հորդոր և օրինակ: Աղոթագրքում տեղ են գտել նաև «Փառք Աստծուն ամեն ինչի համար», «Ամենաքաղցր Հիսուսին», Տիրամորը և սուրբ Գևորգ Զորավարին նվիրված ակաֆիստները:

Կանոնները, երեք ակաֆիստները և աղոթքների մեծ մասը թարգմանված են եկեղեցասլավոներենից, մնացյալը՝ ռուսերենից:

ՀՏԴ 27-534.3
ԳՄԴ 86.37

Տպագրվում է մեկենասությամբ
Գրիգոր Մովսիսյան և Նաիրա Կարապետյան *ամուսինների*

ISBN 978-9939-0-4068-4

© Գևորգյան Կ., 2022

Կազմողի նախաբանը

«Մեկօրյա պատերազմի» դաժան հանգամանքը ստիպեց չհետաձգել նախաբանը գրելը, այն գրվեց դեպքերի հաջորդ օրը՝ հոգեմաշ տխրության և անձկության մեջ:

Փորձում ես գտնել պատճառներ, արմատներ, այստեղից էլ՝ հետևանքներ և ճյուղավորումներ: Մի բան պարզ է. ըստ Աստվածաշնչի՝ հոգևորի բացակայությունը՝ ճշմարիտ Աստվածապաշտության բացակայությունը լրացվում է աղետներով և դժբախտություններով: Սա կեցության անողոք, բայց և արդարացի ու անսասան օրինաչափությունն է: Եվ այս օրինաչափությունն ազդում է մեզնից յուրաքանչյուրին՝ առանց բացառության. մանուկից մինչև զառամյալ՝ կյանքի վերջին օրն ապրող ծերունի: Նույն կերպ, ինչպես որ ֆիզիկական օրենքներն են գործում և ազդում, օրինակ, երկրի ձգողականության օրենքը, անխտիր, բոլորի վրա: Որոշ ժողովուրդներ այս կամ այն չափով սա գիտակցում են. օրինակ, Հնդկաստանի ժողովուրդների մոտ արմատացած է «Կարմայի օրենք» հասկացությունը: Նրանք քրիստոնյաներ չեն, հեթանոսներ են: Իսկ մե՞նք:

Ժամանակն է, ժամանակն է դարձի գալու առ Տեր մեր Աստված՝ Սուրբ Երրորդությամբ փառաբանելի և երկրպագելի, և փրկություն աղերսել պաշտելի Որդի Աստծուց՝ Քրիստոսից: Այլապես ումի՞ց աղերսել փրկություն, եթե ոչ՝ Փրկչից: Բայց փրկությունը ստանալու համար յուրաքանչյուրս պետք է մտնենք Ուխտի մեջ: Ուխտել նշանակում է պահել Աստծո պատգամները, հրաժարվել այն ամենից, ինչն արգելված է Տիրոջ կողմից՝ արժանավորապես հաղորդվելով Տիրոջ Մարմնին և Արյանը՝ Նոր Ուխտի Արյանը: Այդ դեպքում մենք էլ համարձակություն կունենանք Տեր Աստծուց խնդրելու փրկություն, խաղաղություն, սեր, բարեկեցություն...

Այսօր ողջ աշխարհն է խելակորույս, տարված փողամոլության՝ արծաթասիրության ախտալից և մոլի՝ Ոսկե հորթի կռապաշտությամբ: Մարդկանց խելքը և ուշքը գնում է փողի համար՝ բառացիորեն: Հին Կտակարանը մեզ հուշում է, թե ինչ դժբախտություններով է հղի կռապաշտությունը. պատերազմներ, պատերազմներում՝ պարտություններ, զանազան դժբախտաբեր և կորնչական հարվածներ: Մի՞թե հնարավոր չէ թոթափել կռապաշտության դառնագույն լուծը, մի՞թե հնարավոր չէ ապրել Աստվածապաշտությամբ: Համաձայն Աստվա-

ծաշնչի՝ «արծաթը»՝ փողը[1] երջանկություն է բերում միայն ու միայն արդարորեն վաստակված լինելու դեպքում: Եվ այս արդարությունը զերծ է պահում կուռքի՝ «արծաթի»՝ Ոսկե հորթի իշխանությունից: Անարդար վաստակումները մարդուն ավելի ու ավելի են դարձնում անազատ, ի վերջո՝ ստրուկ: Արծաթի հանդեպ այրող տենչը հասցրեց մարդուն՝ Հուդային, մինչև աստվածամատնության: Եվ ի՞նչ. իր Տիրոջը, Փրկչին, Ուսուցչին, Ընկերոջը մատնողը վայելե՞ց երեսուն արծաթը: Բնավ ո՛չ, բոլորս գիտենք նրա կյանքի տխրագույն, դառնագույն վերջաբանը. նա շտապեց վերադարձնել այդ արծաթադրամները, որոնք նրան պատճառում էին աննկարագրելի հոգեկան տվայտանքներ, ի հետևանս նա կախվեց: Կարծում եմ՝ բոլորս ենք հասկանում, որ հայրենուրացությունն այնքան էլ հեռու չէ աստվածուրացումից: Այս ուրացումները արծաթասիրության սարսափելի հետևանքներն են:

Եկեղեցու սուրբ հայրերն ունեն մի տպավորիչ և շատ պատկերավոր համեմատություն. նրանք աշխարհի նյութական բարիքներ ձեռք բերելու մարմաջը նույնացնում են այն մարդու ծարավի հետ, որ հայտնվել է անծայրածիր օվկիանոսում, իսկ նավակի մեջ չունի ջրի և ոչ մի պաշար: Դժբախտը փորձում է հագեցնել իր ծարավը ծովի աղի ջրով, սակայն դրանից նրա ծարավն ավելի ու ավելի է սաստկանում: Եվ այսպես՝ մինչև վերջ: Բյուզանդացի սուրբ հայրերից Մաքսիմոս Խոստովանողը սիրում էր կրկնել. «Իմն այն է, ինչը տվել եմ»: Ուստի, հասկանալի են այն բազմաթիվ դեպքերը, որոնց մասին կարդում ենք սուրբ այրերի և կանանց վարքերում, երբ մեծահարուստ և անգամ գերհարուստ անձինք, վաճառելով իրենց ինչքերը՝ պալատներ, գանձեր, կալվածքներ, նվիրվել են բարի գործերի՝ ընտրելով սրբացման լուսաճեմ ուղին: Օրինակները քիչ չեն. հիշենք միջնադարում ապրած հայ իշխանազուն Ներսես Լամբրոնացուն, մեր ժամանակներում սրբադասված մեծ իշխանուհի Ելիզավետա Ռոմանովային, դանիացի ազնվականուհի Կարեն Եպպեին, որ, թողնելով անխռով և բարեկեցիկ կյանքը Եվրոպայում, մեկնում է Արևմտյան

[1] Ֆրանսերենում «l'argent»՝ արծաթ բառը հենց փող է նշանակում. ռուսերենում «серебролюбие»-ն՝ բառացի արծաթասիրություն, նշանակում է «փողասիրություն». հայերենում «արծաթասիրություն» բառն ունի «փողասիրություն», «փողամոլություն» նշանակությունը, իսկ «անարծաթը»՝ համապատասխանաբար փողից, փողի իշխանությունից ազատ, ինչպես, օրինակ, անարծաթ բժիշկները՝ Եկեղեցու կողմից սրբադասված:

Հայաստան՝ իր ողջ կյանքը նվիրելու Մեծ եղեռնից առաջ և հետո հայ ժողովրդին անմնացորդ ծառայելուն, և այլ դեպքեր:

Հույս ենք տածում, որ սույն Աղոթագիրքը գեթ փոքր-ինչ կծառայի հայրենի ժողովրդին՝ ի մխիթարություն նրա զավակների: Առավել ևս, որ համաշխարհայնացման ուղին բռնած ներկա աշխարհն իր ողջ թափով և զորությամբ հարձակման է անցել անհատի վրա: Անցել է ստրուկների որսի: Տարբեր կրքերի գերգրգռումը, դրանց պաշտամունքը և անգամ առաքինություն դարձնելն այն միջոցներն ու հնարներն են, փոխաբերորեն ասած՝ «պարանները», որոնցից էլ հյուսված է որսացանցը: Գոյություն ունի հին, իմաստուն մի ասացվածք. «Կապիկին կապում են ոտքից, արջին՝ թաթից, շանը՝ վզից, իսկ մարդուն՝ «գլխից»»: Այսօր արդեն աշխարհի իշխանների գործը հեշտացել է. այլևս մարդկանց կապում են ոչ թե գլխից, այլ գոտկասրբանային հատվածից (հների պատկերացմամբ՝ «երիկամունք»): Այսպես, տասնիններորդ դարից սկսեցին սպանել կանացին կնոջ մեջ: Հիշում եմ՝ դեռևս ութսունականներին գոյություն ուներ կանացիության մասին պատկերացում և այն գնահատվում էր որպես բարձր, առաքինի հատկություն: Այսօր այդ մասին հիմնականում մոռացել են: Բացակայող կանացիությունն աշխարհի կողմից կոմպենսացվեց արտաքին սեռականությամբ: Համապատասխանաբար հերոսականության, առնականության, քաջության և արդարադատության ոգին՝ գովերգված դեռևս Հոմերոսի կողմից երեք հազար տարի առաջ, մեր ժամանակներում նենգափոխվում է կնանմանության կամ էլ դաժանության, կոպտության և նենգության պիղծ ոգով: Այս կերպ ստրկացվում է մարդը: Տա՛ Աստված, որ սույն Աղոթագրքի աղոթքներն առ մեր Ազատարար Քրիստոս Փրկիչը, Ով մեր Կյանքն է, Ճանապարհն ու Ճշմարտությունը, նպաստեն մեր ազատությանն ու պահպանությանը Տիրոջով բոլոր ցանցերից, քանզի՝ «Դուք կճանաչեք Ճշմարտությունը, և Ճշմարտությունը կազատագրի ձեզ» (Հովհ. 8:32):

Ցանկանում ենք հուսալ նաև, որ, Աղոթագիրքը, լինելով թարգմանություն եկեղեցասլավոներենից, կնպաստի հայ և սլավոնական քրիստոնյա ժողովուրդների փոխադարձ ավելի լավ ճանաչմանը և եղբայրական կապերի ամրապնդմանը: Այս առումով տեղին է մեջբերել մերօրյա ականավոր աստվածաբան, թարգմանիչ և կոմպոզիտոր, միտրոպոլիտ Իլարիոն Ալֆեևի համահունչ խոսքերը, գրված հայտնի ուղղափառ հետազոտող, շվեյցարացի Քրիստին Շայոի «Արևելյան

Ուղղափառ Եկեղեցիների հոգևոր կյանքը (սիրիական, հայկական, ղպտի և հաբեշական ավանդույթների)» գրքի առաջաբանում. «Մեր օրերում, երբ գրքում հիշատակված որոշ տարածաշրջաններում քրիստոնյաները ենթարկվում են հալածանքների և ապրում են ամենօրյա վերահաս վտանգների սպասման մեջ, մենք պետք է նրանց նկատմամբ դրսևորենք եղբայրական համերաշխություն: Սակայն քրիստոնեական համերաշխությունը՝ քրիստոնեական սիրո դրսևորումներից մեկը, պետք է հենվի ճանաչման վրա, քանզի այդ սերը ոչ թե անանուն, այլ կոնկրետ մարդկանց հանդեպ է»:

Տե՛ր Աստված, զորավի՛գ եղիր քրիստոնյաներին, փրկի՛ր մեզ, մեր Հայրենիքը բոլոր արհավիրքներից և օրհնի՛ր: Քրիստո՛ս Փրկիչ, ազատի՛ր մեզ կուրացնող և ստրկացնող նյութապաշտությունից, որպեսզի մեր սրտերում և հոգիներում թագավորի Լույսը:

Կարեն Գևորգյան, 2021 թ.

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ ՄԱՏՅԱՆ ԱՂՈԹՔԻ ՄԱՍԻՆ

Տեր Հիսուս Քրիստոսը և աղոթքը

Մարկ. 1:35 *Եվ առավոտյան մոտ, լույսը բացվելուց առաջ, վեր կացավ և ելավ գնաց ամայի մի տեղ ու այնտեղ աղոթում էր։*

Ղուկ. 6:12 *Եվ այդ օրերին Հիսուս լեռ բարձրացավ աղոթելու և ամբողջ գիշերն անցկացրեց Աստծուն աղոթելով։*

Մատթ. 14:23 *Եվ երբ ժողովրդի բազմությունն արձակեց, առանձին լեռ բարձրացավ աղոթելու համար։*

Հավատ և աղոթք

Տոբիթ 12:8 *Բարի են աղոթքները՝ պահեցողություններով, ողորմություններով և արդարություններով. բարի է քիչ ունեցվածքը արդարությամբ, քան շատը՝ անիրավությամբ. լավ է ողորմություններ անել, քան ոսկու գանձ կուտակել։*

Մատթ. 21:22 *Եվ ամեն ինչ, որ ուզեք աղոթքի մեջ հավատով, կստանաք։*

Հակոբ. 1:6-7 *Միայն թե նա հավատո՛վ թող խնդրի և թող չերկմտի, որովհետև, ով երկմիտ է, նման է ծովի հողմակոծ և տարուբերվող ալիքներին։ Այդպիսի մարդը թող չակնկալի Աստծուց որևէ բան ստանալ, քանի որ երկմիտ մարդը իր արած բոլոր քայլերում անհաստատ է։*

Մարկ. 11:24 *Դրա համար ասում եմ ձեզ. ամեն ինչ, որ աղոթք անելով խնդրեք և հավատաք, թե կստանաք, կտրվի ձեզ։*

Հակոբ. 5:15 *Եվ հավատով եղած աղոթքը կփրկի հիվանդին, ու Տերը նրան ոտքի կկանգնեցնի։*

Աղոթքի անհրաժեշտության մասին

1 Պետ. 4:7 *Ամեն ինչի վախճանը մոտեցել է։ Զգաստացե՛ք ուրեմն և արթու՛ն եղեք աղոթքի համար։*

Կող. 4:2 *Հաճա՛խ աղոթեցեք՝ աղոթքի մեջ արթուն մնալով գոհությամբ։*

1 Թեսաղ. 5:17 *Անդադար աղոթեցե՛ք։*

Ղուկ. 21:36 *Արթո՛ւն կացեք այսուհետև, ամեն ժամ աղո՛թք արեք, որպեսզի կարողանաք զերծ մնալ այն ամենից, որ լինելու է, և արժանի լինեք կանգնելու մարդու Որդու առաջ։*

Սաղմ. 87:14 *Ես, Տեր, առ Քեզ աղաղակեցի, առավոտյան իմ աղոթքը Քեզ պիտի հասնի։*

Սաղմ. 5:2-3 *Ականջ դիր իմ խոսքերին, Տե՛ր, և ուշ դարձրու աղաղակիս, ընդունիր ձայնն աղոթքներիս, Թագավոր իմ և Աստված իմ։*

Դան. 6:10 *Դանիէլը... օրական երեք անգամ ծնրադրում էր և աղոթում, գոհություն էր հայտնում իր Աստծուն, ինչպես առաջ էր անում։*

Փիլիպ. 4:6 *Հոգ մի՛ արեք, այլ աղոթքներով և աղաչանքներով ձեր խնդրանքները գոհաբանությամբ հայտնի թող լինեն Աստծուն։*

Սաղմ. 68:14 *Ընդունելի ժամին ես աղոթում էի Քեզ, Տե՛ր։ Լսիր ինձ, Աստված, Քո առատ ողորմությամբ, Քո փրկության ճշմարտությամբ։*

Սաղմ. 64:3 *Լսի՛ր աղոթքս, քանզի Քեզ մոտ է գալու ամեն մարմին։*

Համեստություն աղոթելիս

Մատթ. 6:5-6 *Եվ երբ աղոթես, չլինե՛ս կեղծավորների նման, որոնք սիրում են ժողովարաններում և հրապարակների անկյուններում աղոթքի կանգնել, որպեսզի մարդկանց երևան. ճշմարիտ եմ ասում ձեզ, ա՛յդ իսկ է նրանց վարձը։ Այլ դու երբ աղոթես, մտի՛ր քո սենյակը, փակի՛ր քո դռները և ծածո՛ւկ աղոթիր քո Հորը, և քո Հայրը, որ տեսնում է, ինչ որ ծածուկ է, կհատուցի քեզ հայտնապես։*

Մերձավորները և աղոթքը

1 Թագ. 12:23 *Քավ լիցի, որ ես մեղանչեմ Տիրոջ դեմ՝ հրաժարվելով ձեզ համար աղոթելուց։ (Սամուէլ մարգարեի խոսքերը)*

Հակոբ. 5:16 *Ձեր մեղքերը միմյանց խոստովանեցե՛ք և միմ-*

յանց համար աղո՛թք արեք, որպեսզի բժշկվեք. քանզի արդարի աղոթքը շատ ազդեցիկ է և օգնում է։

Սիրաք. 28:2 *Ների՛ր քո եղբոր (որոշ թարգմանություններում՝ մերձավորի) անիրավությունը, և միայն այն ժամանակ աղոթելիս քո մեղքերը կներվեն։*

Սիրաք. 3:5 *Ով պատվում է հորը, ինքն էլ կուրախանա իր որդիներով, և նրա աղոթքը լսելի կլինի։*

1 Տիմոթ. 2:1 *Արդ՝ ամենից առաջ աղաչում եմ աղոթք անել, խնդրել, պաղատել, գոհություն մատուցել բոլոր մարդկանց համար։*

Աղոթք և չարակամներ

Մարկ. 11:25 *Եվ երբ աղոթքի կանգնեք, թե մեկի դեմ մի բան ունեք, ներեցե՛ք, որպեսզի ձեր Հայրն էլ, որ Երկնքում է, ների ձեզ ձեր հանցանքները։*

Մատթ. 5:44 *Իսկ ես ձեզ ասում եմ. սիրեցե՛ք ձեր թշնամիներին, օրհնեցե՛ք ձեզ անիծողներին, բարությո՛ւն արեք ձեզ ատողներին և աղոթեցե՛ք նրանց համար, որ չարչարում են ձեզ և հալածում։*

Կյանքի դժվարությունները և աղոթքը

Մատթ. 26:41 *Արթո՛ւն մնացեք և աղո՛թք արեք, որպեսզի փորձության մեջ չընկնեք։*

Ղուկ. 22:43 *Նա տագնապի մեջ էր, և ամբողջ հոգով էր աղոթում։*

Ղուկ. 18:1 *Ամեն ժամ պետք է աղոթել ու չձանձրանալ։*

Ղուկ. 21:36 *Արթո՛ւն կացեք այսուհետև, ամեն ժամ աղո՛թք արեք, որպեսզի կարողանաք զերծ մնալ այն ամենից, որ լինելու է, և արժանի լինեք կանգնելու մարդու Որդու առաջ։*

Հակոբ. 5:13 *Ձեզնից մեկը վշտի՞ մեջ է ընկել, թող աղոթի. մեկը բերկրանքի՞ մեջ է, սաղմոս թող ասի։*

Հռոմ. 12:12 *Հույսով ուրախացեք. նեղության համբերեցեք, հաճախակի աղոթեցեք։*

Հոգի և աղոթք

Հռոմ. 8:26 ... *Հոգին օգնության է հասնում մեր տկարություններին. որովհետև մենք աղոթում ենք և չգիտենք, թե ինչպես արժան է աղոթել. բայց Հոգին Ինքը բարեխոս է լինում մեզ անմռունչ հառաչանքով։*

Եփես.6:18 *Ամենայն աղոթքներով և աղաչանքներով ամեն ժամ աղոթեցե՛ք Հոգով։*

Հովհ. 6:64 *Հոգին է կենդանարար. մարմինը ոչ մի բան չի կարող անել։ Այն խոսքը, որ Ես ձեզ ասացի, հոգի է և կյանք։*

1 Կորն. 14:15 ... *պիտի աղոթեմ հոգով, պիտի աղոթեմ նաև մտքով։ Սաղմոս պիտի ասեմ հոգով, սաղմոս պիտի ասեմ և մտքով։*

Աստված երբ չի ընդունում մեր աղոթքները

Հակոբ. 4:3 *Խնդրում եք և չեք ստանում, որովհետև չարամտորեն եք խնդրում, որպեսզի այն ծառայեցնեք ձեր ցանկություններին։*

Առակ. 15:29 *Աստված հեռու է ամբարիշտներից, բայց Նա լսում է արդարների աղոթքը։*

Հովհ. 9:31 *Գիտենք, որ Աստված մեղավորներին չի լսում, բայց եթե մեկը աստվածապաշտ է և Նրա կամքը կատարում է, նրան լսում է։*

Երբ է Աստված պատասխանում մեր աղոթքներին

Հովհ. 14:13 *Եվ ինչ որ ուզեք Իմ անունով, այն կանեմ, որպեսզի Հայրը փառավորվի Որդու միջոցով։*

Սաղմ. 101:18 *Ուշ դարձրեց Տերը խոնարհների աղոթքին, և չարհամարհեց խնդրանքը նրանց։*

Հովհ. 15:7 *Եթե Իմ մեջ մնաք, և Իմ խոսքերն էլ մնան ձեր մեջ, ինչ որ ուզենաք, խնդրեցե՛ք Աստծուց, և ձեզ կտրվի։*

1 Պետ. 3:12 *Որովհետև Տիրոջ աչքը արդարների վրա է, և Նրա ականջները բաց՝ նրանց աղոթքին. բայց Տիրոջ երեսը չարագործների դեմ է։*

ԱՂՈԹԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Առավոտյան աղոթական կանոն
(Կանոնը տրվում է կրճատումով)

Հանուն Հոր և Որդու և Սուրբ Հոգու։ Ամեն։

Մաքսավորի աղոթքը *(Ղուկաս, 18:13)*
Աստվա՜ծ, ողորմած եղիր մեղավորիս (խոնարհում)։

Նախամուտքի աղոթք

Տեր Հիսուս Քրիստոս, Որդի՜ Աստուծո, հանուն Քո Մաքրամաքուր Մոր և բոլոր սրբերի աղոթքների, ողորմիր մեզ։ Ամեն։ Փա՜ռք Քեզ, Աստված մեր, փա՜ռք Քեզ։

Աղոթք Սուրբ Հոգուն[1]

Երկնային Արքա, Մխիթարիչ, Ճշմարտության Հոգի, որ ամենուր ես, ամենայն ինչ Քեզանով է, բարիքների Աղբյուր և կյանքի Պարգևատու. եկ և բնակվիր մեր մեջ, մաքրիր մեզ ամեն մի պղծությունից, Աստված Բարի, փրկիր հոգիները մեր։

Երեքսրբեան աղոթք[2]

Սուրբ Աստված, Սուրբ և Հզոր, Սուրբ և Անմահ, ողորմեա մեզ։
(Կարդացվում է երեք անգամ, ամեն անգամ՝ խաչակնքումով և խոնարհումով)։

Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից։ Ամեն։

---

[1] *Իսկ Զատկից մինչև Համբարձում այս աղոթքի փոխարեն կարդացվում է Զատկի կցուրդը.* «Քրիստոս հարեավ ի մեռելոց՝ մահով մահին հաղթելով և շիրիմներում պառկածներին կյանք պարգևելով» (երեք անգամ)։

[2] Սուրբ Համբարձումից մինչև Հոգեգալուստ աղոթքները սկսվում են «Սուրբ Աստված...» երեքսրբեանից՝ բաց թողնելով առաջին աղոթքները։

Աղոթք Ամենասուրբ Երրորդությանը

Ամենասուրբ Երրորդություն, ողորմեա մեզ.
Ամենակալ Տեր, մաքրիր մեր մեղքերը,
Ամենիշխան Տեր, ներիր մեր անօրենությունները,
Ամենասուրբ Տեր, այցելիր և փարատիր մեր տկարությունները՝
Քո Անվան սիրույն։

Տեր ողորմեա, Տեր ողորմեա, Տեր ողորմեա։

Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. Ամեն։

Տերունական աղոթք

Հայր մեր, որ յերկինս ես,
սուրբ եղիցի Անուն Քո։
Եկեսցէ Արքայութիւն Քո։
Եղիցին կամք Քո
որպէս յերկինս եւ յերկրի։
Զհաց մեր հանապազորդ
տուր մեզ այսօր.
եւ թող մեզ զպարտիս մեր,
որպես եւ մեք թողումք
մերոց պարտապանաց։
Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն,
այլ փրկեա զմեզ ի չարէն։
Զի Քո է Արքայութիւն եւ զօրութիւն
եւ փառք յաւիտեանս. Ամէն։

Հայր մեր, որ երկնքում ես, սուրբ թող լինի Քո Անունը, Քո Արքայությունը թող գա, Քո կամքը թող լինի երկրի վրա, ինչպես որ երկնքում է։ Մեր հանապազօրյա հացը տուր մեզ այսօր։ Եվ թող մեզ մեր պարտքերը, ինչպես և մենք ենք թողնում մեր պարտապաններին։ Եվ մի տանիր մեզ փորձության, այլ

փրկիր մեզ չարից, քանզի Քոնն է Արքայությունը և զորությունը և փառքը հավիտյանս հավիտենից: Ամեն[1]:

Կցուրդներ Ամենասուրբ Երրորդությանը

Հառնելով քնից՝ Քեզ ենք ծնրադրում և գովերգում Բարուդ և Հզորիդ հրեշտակային երգով. Սու՛րբ, Սու՛րբ, Սու՛րբ ես, Աստված. Աստվածածնի շնորհիվ ողորմեա մեզ:

Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն. *Քնի մահճից հանեցիր ինձ, Տեր. լուսավորիր միտքս ու սիրտս, և բաց շուրթերս, որպեսզի գովերգեմ Քեզ՝ Սուրբ Երրորդությանդ. Սու՛րբ, Սու՛րբ, Սու՛րբ ես, Աստված. Աստվածածնի շնորհիվ ողորմեա մեզ:*

Այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից: Ամեն: *Անսպասելի կգա Դատավորը, և յուրաքանչյուրի գործերը կբացահայտվեն. ուստի ահուդողով կանչում ենք կեսգիշերին. Սու՛րբ, Սու՛րբ, Սու՛րբ ես, Աստված. Աստվածածնի շնորհիվ ողորմեա մեզ:*

Տեր ողորմեա (12 անգամ)

Աղոթք Ամենասուրբ Երրորդությանը

Քնից հառնելով՝ գոհանում եմ Քեզանից, Ամենասուրբ Երրորդություն, քանզի Քո մեծ բարերարության և երկայնամտության շնորհիվ չզայրացար և չկործանեցիր ծույլիս և մեղավորիս իմ անօրենություններով, այլ Քո մշտական մարդասիրությամբ անզգա և անօգնական պառկածիս հանեցիր Քեզ վաղորդայնից ժամերգելու և իշխանությունը Քո փառաբանելու համար: Այժմ էլ լուսավորիր մտքիս աչքերը, բաց իմ շուրթերը՝ Քո խոսքերը սովորելու, Քո պատգամները հասկա-

[1] Տերունական աղոթքը և հիսուներորդ սաղմոսը վերցված են 1992 թվին Երևանում «Գանձասար» հանդեսի կողմից հրատարակված Աղոթագրքից:

նալու, Քո կամքը կատարելու, սրտանց Քեզ երգելու և պաշտելու և Քո՝ Հոր և Որդու և Սուրբ Հոգու Ամենասուրբ Անունը փառաբանելու համար այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից: Ամեն:

Եկե՛ք, երկրպագենք մեր Աստծուն՝ մեր Թագավորին (խոնարհում)

Եկե՛ք, երկրպագենք – ոտքերն ընկնենք Քրիստոսի՝ Աստծո մեր և Թագավորի (խոնարհում)

Եկե՛ք, ծնրադրենք և երկրպագենք Իրեն՝ Քրիստոսին՝ Աստծուն մեր և Թագավորին (խոնարհում):

Սաղմոս 50

Ողորմիր ինձ, Աստված, ըստ Քո մեծ ողորմության, ըստ Քո առատ գթության քավիր իմ անօրենությունները:

Առավել լվա ինձ իմ անօրենություններից և մաքրիր ինձ իմ մեղքերից:

Իմ անօրենությունները ես ինքս գիտեմ, և իմ մեղքերն իմ առջև են ամեն ժամ:

Քո դեմ միայն մեղանչեցի, Տեր, և Քո առջև չարիք գործեցի, այնպես որ արդար կլինես Քո խոսքերում և հաղթող՝ դատելիս:

Անօրենությամբ հղացավ և մեղքի մեջ ծնեց ինձ իմ մայրը:

Դու, Տեր, ճշմարտությունը սիրեցիր, անհայտներն ու ծածկվածները Քո իմաստությամբ հայտնեցիր ինձ:

Ցողիր ինձ մշտիկով, և ես մաքուր կլինեմ, լվա ինձ, և ես ձյունից էլ սպիտակ կլինեմ:

Լսել տուր ինձ ցնծություն և ուրախություն, և կցնծան ոսկորներն իմ տառապած:

Դարձրու երեսդ իմ մեղքերից և քավիր իմ բոլոր անօրենությունները:

Սուրբ սիրտ հաստատիր իմ մեջ, Աստված, և ուղիղ հոգի նորոգիր իմ ներսում:

Մի զրկիր ինձ, Տեր, Քո երեսից, և մի հանիր ինձանից Քո Սուրբ Հոգին:

Տուր ինձ Քո փրկության ցնծությունը և Քո Տիրական Հոգով զորացրու ինձ։

Անօրեններին կսովորեցնեմ Քո ճանապարհը, և ամբարիշտները դեպի քեզ կդառնան։

Փրկիր ինձ արյունահեղությունից, Աստված, Աստված իմ փրկության, կցնծա իմ լեզուն Քո արդարությամբ։

Տեր, եթե իմ շուրթերը բանաս, իմ բերանը կերգի Քո օրհնությունները։

Թե կամենայիր, զոհեր կմատուցեինք, բայց Դու ողջակեզներն իսկ չհաճեցիր։

Զոհն Աստծուն խոնարհ հոգին է, սուրբ սիրտն ու խոնարհ հոգին Աստված չի արհամարհում։

Բարի արա, Տեր, Քո կամքով Սիոնին, և թող շինվեն Երուսաղեմի պարիսպները։

Այնժամ կհավանես արդարության զոհերը, երբ զվարակները՝ որպես ուխտի պատարագներ, բարձրացնեն Քո սեղանին։

Սուրբ Մակար Մեծի առաջին աղոթքը

Աստված իմ, մաքրիր մեղավորիս, քանզի երբեք Քո առջև բարիք չգործեցի, և ազատիր ինձ չարից, և թող Քո կամքը կատարվի ինձանում, որպեսզի անդատապարտ բացելով անարժան շուրթերս՝ գովերգեմ Քո՝ Հոր և Որդու և Սուրբ Հոգու սուրբ Անունը, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից։ Ամեն։

Սուրբ Մակար Մեծի երկրորդ աղոթքը

Քնից արթնանալով՝ Քեզ եմ բերում, Փրկիչ, կեսգիշերային ձոներգությունս և ոտքերդ ընկնելով կանչում Քեզ. մի տուր ինձ քնել մեղսական քնով, այլ առատորեն ողորմիր ինձ, Տեր, որ խաչվել ես կամավորապես, և ծույլ թուլությամբ պառկածիս փրկիր, կանգնեցրու աղոթքի և պաշտամունքի. գիշերային քնից հետո ծագեցրու վրաս Քո լուսավոր օրն առանց մեղքերի, Քրիստոս Աստված, և փրկիր ինձ։

Սուրբ Մակար Մեծի երրորդ աղոթքը

Քնից արթնանալով՝ Քեզ եմ շտապում, մարդասեր Աստված, և Քո պատգամած գործերին ձեռնամուխ լինում Քո ողորմությամբ և աղաչում Քեզ. օգնիր ինձ ամեն ժամ և ամեն ինչում և ազատիր ամենայն աշխարհիկ ազդեցությունից ու սատանայական բոլոր նպաստումներից, և փրկիր ու առաջնորդիր ինձ Քո հավերժական Արքայությանը: Քանզի Դու ես իմ Արարիչն ու ամենայն բարիքի Աղբյուրն ու Պարգևողը, և ես ողջ հույսս դրել եմ Քո վրա՝ Քեզ փառք վերառաքելով, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից: Ամեն:

Սուրբ Մակար Մեծի չորրորդ աղոթքը

Տեր իմ, որ Քո անչափ բարեսիրությամբ և մեծագույն ողորմությամբ տվեցիր Քո ծառային գիշերվա խավարային ժամանակն անցնել չար հակառակորդի բոլոր հարձակումներից զերծ և անվնաս, Դու, Տեր, Արարիչդ համայնի, արժանի արա ինձ՝ Քո ճշմարիտ լույսով լուսավորված սրտով կատարելու Քո կամքը այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից: Ամեն:

Աղոթք Պահապան Հրեշտակին

Սու՛րբ Հրեշտակ՝ պաշտպան իմ թշվառ հոգու և կրքերով վիրավոր կյանքի. մի՛ թող ինձ՝ մեղավորիս, և մի՛ հեռացիր ինձանից անժուժկալությանս պատճառով: Մի՛ զիջիր չարանենգ դևին, որպեսզի չտիրի ինձ մարմնիս միջոցով: Բռնի՛ր շնորհազուրկ և ուժասպառ ձեռքս, զորացրու՛ և դիր ինձ փրկության ճանապարհին: Ո՛վ սուրբ Հրեշտակ Աստուծո, պաշտպան և պահապան թշվառ իմ հոգու և մարմնի, ներիր ինձ այն ամենը, ինչով վշտացրել եմ Քեզ կյանքիս բոլոր օրերի ընթացքում, և թե ինչ-որ բանով մեղանչել եմ անցած գիշեր, պահպանիր ինձ առաջիկա օրվա ընթացքում և պաշտպանիր չար հակառակորդի բոլոր փորձություններից, որպեսզի բնավ չմեղանչեմ և չզայրացնեմ Աստծուն. և աղաչիր ինձ համար Տիրոջը, որպեսզի Նա հաստատի ինձ Աստծո վախի մեջ և դարձնի Իր բարեգթությանն արժանի ծառա: Ամեն:

Աղոթք Ամենասուրբ Աստվածածնին

Տիրուհի, Ամենասրբուհի Աստվածածին, Քո սուրբ և ամենազոր աղոթքներով հեռացրու ինձանից՝ Քո խոնարհ և խեղճ ծառայից ամենայն հուսալքություն, մոռացկոտություն, անխոհեմություն, անգործություն. հեռացրու բոլոր զազիր, նենգ ու հայհոյական մտքերն իմ տարաբախտ սրտից և մթագնած մտքից և հանգցրու կրքերիս կիզող կրակը, քանզի թշվառ եմ ես և դժբախտ: Նաև փրկիր ինձ բազում անբարի հիշողություններից ու մտադրություններից և բոլոր չար գործերից հեռու պահիր ինձ, քանզի օրհնյալ ես Դու բոլոր ազգերից և փառավորվում է ամենապատվական Քո անունը հավիտյանս հավիտենից: Ամեն:

Աղոթք պահապան սրբին (կամ՝ որի անունը կրում ես)

Աղաչի՛ր ինձ համար Աստծուն, աստվածահաճո սուրբ (անունը), քանզի ես սրտանց քեզ եմ դիմում՝ արագահաս օգնականիդ և իմ հոգու համար աղոթարարիդ:

Ողջույն Ամենասրբուհի Աստվածամորը

Ուրախացի՛ր Աստվածածին Կույս, շնորհընկալ Մարիամ, Տերը Քեզ հետ է: Օրհնյալ ես Դու կանանց մեջ և օրհնյալ է Քո որովայնի Պտուղը, քանզի մեր հոգիների Փրկչին ես ծնել:

Կցուրդ Տիրոջ Խաչին

Փրկիր Քո ժողովրդին, Տեր, և օրհնիր Քո ժառանգությունը՝ հաղթանակ տալով ուղղափառ քրիստոնյաներին հակառակորդների հանդեպ, Քո Խաչով պահպանիր հավատացյալներիդ:

Աղոթք ողջերի համար

Փրկի՛ր, Տեր, և ողորմիր իմ հոգևոր հորը (եթե կա՝ նրա անունը), ծնողներիս (անունները), ազգականներիս (անունները), առաջնորդներիս, ուսուցիչներիս (անունները), բարերարներիս (անունները) և բոլոր ուղղափառ քրիստոնյաներին:

Աղոթք ննջեցյալների համար

Հանգստություն տուր, Տեր, Քո ննջեցյալ ծառաների հոգիներին՝ իմ ծնողների (անունները), ազգականների և սիրելիների, բարերարների (անունները) և բոլոր ուղղափառ քրիստոնյաների, և ներիր նրանց բոլոր մեղքերը՝ կամա թե ակամա, և շնորհիր նրանց Երկնային Արքայություն։

Հիրավի արժանի է Քեզ տալ երանի[1]*՝*
Աստվածամորդ՝ հավերժ երանելի և
Անարատ, մեր Աստուծո Մորդ։
Քեզ՝ պատվով գերազանց Քերովբեներից
Եվ անհամեմատ փառապանծ՝ Սերովբեներից,
Բանն Աստծուն անապականորեն Ծնողիդ
Մեծարում ենք մենք, Աստվածամայր Իսկուհի։
(Խոնարհում)

Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից։ Ամեն։

Տեր ողորմեա, Տեր ողորմեա, Տեր ողորմեա։

Տեր Հիսուս Քրիստոս, Որդի Աստուծո, Քո Սուրբ և Անարատ Մոր, արդար և աստվածազգեաց մեր հայրերի և համայն սրբերի աղոթքների սիրույն ողորմեա մեզ։ Ամեն։

---

[1] Սուրբ Զատկից մինչև Համբարձում ընկած ժամանակահատվածում այս աղոթքի փոխարեն կարդացվում է հետևյալը.

Հրեշտակն ազդարարեց շնորհընկալ Մարիամին. «Սրբասուն Կույս, ուրախացիր. նորից ասեմ՝ ուրախացիր։ Քո Որդին երրորդ օրը հառնեց գերեզմանից և մեռելներին հարություն տվեց»։ Ցնծացեք մարդիկ։

Դու շողա, շողա, նոր Երուսաղեմ, քանզի Տիրոջ փառքը ծագեց քեզ վրա։ Այժմ հրճվիր, շնորհազարդվիր, Սիոն։ Եվ Դու ուրախացիր, Մաքրամաքուր Աստվածամայր, Քեզնից ծնված Փրկչի հարությամբ։

ԵՐԵԿՈՅԱՆ ԱՂՈԹԱԿԱՆ ԿԱՆՈՆ

(Աղոթքներ քնելուց առաջ. կրվում են քիչ կրճատումով)

Հանուն Հոր և Որդու և Սուրբ Հոգու։ Ամեն։

Նախամուտքի աղոթք

Տեր Հիսուս Քրիստոս, Որդի Աստուծո, Քո Սուրբ և Անարատ Մոր, արդար և աստվածազգեաց մեր հայրերի և համայն սրբերի աղոթքների սիրույն ողորմիր մեզ։ Ամեն։

Փա՜ռք Քեզ, Աստված մեր, փա՜ռք Քեզ։

Աղոթք Սուրբ Հոգուն[1]

Երկնային Արքա, Մխիթարիչ, Ճշմարտության Հոգի, որ ամենուր ես, ամենայն ինչ Քեզանով է, բարիքների Աղբյուր և կյանքի Պարգևատու. եկ և բնակվիր մեր մեջ, մաքրիր մեզ ամեն մի պղծությունից, Աստված Բարի, փրկիր հոգիները մեր։

Երեքսրբեան աղոթք[2]

Սուրբ Աստված, Սուրբ և Հզոր, Սուրբ և Անմահ, ողորմեա մեզ։

(Կարդացվում է երեք անգամ, ամեն անգամ՝ խաչակնքումով և խոնարհումով)

Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից։ Ամեն։

Աղոթք Ամենասուրբ Երրորդությանը

Ամենասուրբ Երրորդություն, ողորմեա մեզ.

---

[1] Իսկ Զատկից մինչև Համբարձում այս աղոթքի փոխարեն կարդացվում է Զատկի կցուրդը. «Քրիստոս հարեավ ի մեռելոց՝ մահով մահին հաղթելով և շիրիմներում պառկածներին կյանք պարգևելով» *(երեք անգամ)*:

[2] Սուրբ Համբարձումից մինչև Հոգեգալուստ աղոթքները սկսվում են «*Սուրբ Աստված...*» երեքսրբեանից՝ բաց թողնելով առաջին աղոթքները:

Ամենակալ Տեր, մաքրիր մեր մեղքերը,
Ամենիշխան Տեր, ներիր մեր անօրենութիւնները,
Ամենասուրբ Տեր, այցելիր և փարատիր մեր տկարութիւնները՝
Քո Անվան սիրույն։

Տեր ողորմեա, Տեր ողորմեա, Տեր ողորմեա։

Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից։ Ամեն։

Տերունական աղոթք

Հայր մեր, որ յերկինս ես,
սուրբ եղիցի Անուն Քո։
Եկեսցէ Արքայութիւն Քո։
Եղիցին կամք Քո
որպէս յերկինս եւ յերկրի։
Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր.
եւ թող մեզ զպարտիս մեր, որպես եւ մեք թողումք
մերոց պարտապանաց։
Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն,
այլ փրկեա զմեզ ի չարէն։
Զի Քո է Արքայութիւն եւ զօրութիւն
եւ փառք յաւիտեանս.Ամէն։

Կցուրդներ

Ողորմեա մեզ, Տեր, ողորմեա մեզ, քանզի ոչ մի արդարացում չգտնելով՝ մեղապարտներս Քեզ՝ մեր Տիրոջը, այս աղոթքն ենք բարձրացնում. ողորմեա մեզ։

Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն. *Ողորմեա մեզ, Տեր, քանզի Քեզ ենք հուսացել. Տեր, մի զայրացիր խստորեն և մի հիշիր մեր անօրենությունները, այլ նայիր գթությամբ, քանզի գթասիրտ ես, և ազատիր մեզ մեր թշնամիներից, քանզի Դու ես մեր Աստվածը, և մենք՝ Քո ժողովուրդը, բոլորս Քո ստեղծածներն ենք և կանչում ենք Քո Անունը։*

Այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից: Ամեն: *Գթության դռներ բաց մեզ, փառավորյալ Աստվածամայր, որ Քեզ հուսացողներս չկորչենք, այլ Քեզնով ազատվենք փորձանքներից, քանզի Դու քրիստոնյաներիս փրկությունն ես:*

Տեր ողորմեա (12 անգամ)

Սուրբ Մակար Մեծի աղոթքը Հայր Աստծուն

Հավիտենական Աստված և Թագավոր բոլոր արարածների, որ ինձ արժանացրիր հասնել երեկոյան այս ժամին, ներիր ինձ, որ մեղանչեցի մտքում, խոսքով և գործով, և մաքրիր, Տեր, թշվառ իմ հոգին մարմնիս և շնչիս ամենայն աղտեղությունից և տուր ինձ այս գիշերն անցկացնել խաղաղությամբ, որպեսզի, իմ հեղգ մահճից վեր կենալով, ծառայեմ Քո ամենասուրբ Անվանը կյանքիս բոլոր օրերում և հաղթեմ մարմնավոր և անմարմին ընդդիմամարտ թշնամիներին, և փրկիր, Տեր, անձս աղտեղող ունայն մտածումներից և պագշոտ ու չար ցանկություններից, քանզի Քոնն է Արքայությունը, զորությունը և փառքը՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից: Ամեն:

Սուրբ Անտիոքոսի աղոթքը մեր Տեր Հիսուս Քրիստոսին

Ամենակալ Որդի՝ Խոսքն Հայր Աստծո, Հիսուս Քրիստոս, որ կատարյալ ես. Քո մեծ ողորմությամբ մի լքիր ինձ երբեք՝ Քո ծառային, այլ միշտ բնակվիր իմ մեջ: Հիսուս, որ բարի Հովիվդ ես Քո բանական հոտի, մի հանձնիր ինձ վիշապի դավերին և մի թող ինձ ենթարկվել սատանայի կամքին, քանզի քայքայման սերմ եմ կրում իմ մեջ: Բայց Դու, Տեր Աստված երկրպագելի, Սուրբ Արքա Հիսուս Քրիստոս, պահպանիր ինձ քնիս մեջ անմարելի լույսով՝ Քո Սուրբ Հոգով, Որով սրբացրիր Քո աշակերտներին: Ինձ էլ շնորհիր, Տեր, անարժան Քո ծառային, փրկությունը Քո, երբ մահճիս վրա եմ. լուսավորիր միտքս Քո սուրբ Ավետարանի իմաստության լույսով, հոգիս՝ խաչի Քո զոհաբերական սիրով, սիրտս՝ Քո խոսքի մաքրությամբ, մարմինս՝ Քո անկիրք չարչարանքներով, միտքս պահպանիր

Քո հեզության մեջ և հանիր ինձ քնից պատեհ ժամանակին Քո փառատրությանը։ Քանզի փառավորյալ ես Քո Անսկիզբ Հոր և Ամենասուրբ Հոգու հետ հավիտյանս հավիտենից։ Ամեն։

Աղոթք

Տեր Աստված մեր, թողություն տուր բոլոր այն մեղքերիս, որ մեղանչեցի այսօր մտքում, խոսքով և գործով, քանզի բարի ես և մարդասեր։ Շնորհիր ինձ խաղաղ և անխռով քուն։ Ուղարկիր Քո պահապան Հրեշտակին, որ պաշտպանի և պահպանի ինձ ամենայն չարից։ Քանզի Դու ես մեր հոգիների և մարմինների Պահապանը, և Քեզ փառք ենք տալիս՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից։ Ամեն։

Սուրբ Հովհան Ոսկեբերանի աղոթքը

(բաղկացած 24 աղոթքներից՝ ըստ օրվա ժամերի քանակի)

1. Տեր, ինձ մի զրկիր Քո երկնային բարիքներից։

2. Տեր, փրկիր ինձ հավերժական տանջանքներից։

3. Տեր, մեղանչել եմ՝ մտքերով թե պատահական մտածմունքով, խոսքով կամ գործով, ներիր ինձ։

4. Տեր, փրկիր ինձ ամենայն անգիտությունից և մոռացությունից, փոքրոգությունից և քարսիրտ անզգամությունից։

5. Տեր, փրկիր ինձ ամենայն փորձությունից։

6. Տեր, լուսավորիր իմ սիրտը՝ կրքոտ ցանկություններից խավարած։

7. Տեր, մեղանչել եմ որպես մարդ, սակայն Դու՝ որպես Աստված ներողամիտ, ողորմիր ինձ՝ տեսնելով հոգուս անզորությունը։

8. Տեր, ուղարկիր Քո շնորհն ինձ օգնական, որպեսզի փառավորեմ Քո սուրբ Անունը։

9. Տեր Հիսուս Քրիստոս, գրիր իմ՝ ծառայիդ անունը Քո կենաց գրքում և շնորհիր ինձ կյանքի բարի ավարտ։

10. Տեր Աստված իմ, թեպետ և Քո առաջ բնավ չեմ գործել բարին, բայց Դու տուր ինձ դնել բարու սկիզբը Քո շնորհի օգնությամբ։

11. Տեր, ցողիր իմ սիրտը Քո շնորհի ցողով։

12. Տեր երկնքի և երկրի, հիշիր ինձ՝ Քո մեղավոր, պիղծ և անմաքուր ծառային Քո Արքայությունում։ Ամեն։

1. Տեր, ընդունիր ինձ՝ ապաշխարողիս։

2. Տեր, մի թող ինձ։

3. Տեր, մի մտցրու ինձ վտանգի մեջ։

4. Տեր, տուր ինձ ողջամտություն։

5. Տեր, տուր ինձ ապաշխարության արցունքներ, մահվան հիշողություն և սրտի խոնարհություն։

6. Տեր, տուր ինձ մեղքերս խոստովանելու հաստատակամություն։

7. Տեր, տուր ինձ հեզամտություն, ողջախոհություն և հնազանդություն։

8. Տեր, տուր ինձ համբերություն, մեծահոգություն և հեզություն։

9. Տեր, հաստատիր իմ մեջ բարիքների արմատը՝ Քո հանդեպ վախն իմ սրտում։

10. Տեր, արժանի արա ինձ՝ սիրելու Քեզ ամբողջ հոգով և մտքով և կատարելու Քո կամքն ամենուր։

11. Տեր, պահպանիր ինձ չար մարդկանցից, դևերից, կրքերից և բոլոր անվայել արարքներից։

12. Տեր, Դու՛ գիտես. ինչպես Դու ես ցանկանում, թող երևա և կատարվի Քո կամքը նաև իմ՝ մեղավորիս մեջ, քանզի օրհնյալ ես Դու հավիտյան։ Ամեն։

Աղոթք Ամենասրբուհի Աստվածածնին

Բարեգութ Արքայի բարեգութ Մայր, Մաքրամաքուր և Փառավորյալ Աստվածածին Մարիամ, Քո աղոթքներով թող իմ տառապյալ հոգուն տեղա Քո Որդու և մեր Աստծո ողորմությունը. միակ Սրբուհի և փառավորյալ Կույս, ուղղորդիր ինձ բարի գործերի, որպեսզի կյանքիս մնացած ժամանակն ապրեմ առանց մեղքերի և Քո միջոցով հասնեմ դրախտին։

Աղոթք սուրբ Պահապան Հրեշտակին

Հրեշտա՛կ Քրիստոսի, հոգուս և մարմնիս իմ սուրբ պահապան, ներիր այսօրվա իմ բոլոր մեղանչումները և ազատիր ինձ հակառակվող թշնամու բոլոր նենգ դավերից, որպեսզի որևիցե մեղքով չզայրացնեմ իմ Աստծուն. նաև աղոթիր մեղավոր և անարժան ծառայիս համար, որպեսզի ինձ արժանի դարձնես Ամենասուրբ Երրորդության և իմ Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Ամենասուրբ Մոր և բոլոր սրբերի ողորմությանն ու բարեհաճությանը: Ամեն:

Կոնդակ Աստվածածնին

Երկնային Զորապետ Տիրուհուդ մենք՝ վտանգներից ազատված ծառաներդ, հաղթանակի և երախտապարտության ձոնն ենք նվիրում, Տիրամայր: Դու, որ ունես անպարտելի զորություն, ազատիր մեզ ամենայն չարից, որպեսզի կանչենք Քեզ. «Ուրախացի՛ր, Հարսդ Անհարսնացյալ»:

Փառավորյալ և օրհնյալ, միշտ Սուրբ Կույս Մարիամ, Մայր Քրիստոս Աստծո, մատուցիր մեր աղոթքը Քո Որդուն և մեր Աստծուն, որպեսզի Քո շնորհիվ Նա փրկի մեր հոգիները:

Իմ ողջ հույսը Քեզ վրա եմ դնում, Աստվածամայր, պահպանիր ինձ Քո հովանու ներքո:

Աստվածածի՛ն Կույս, մի անտեսիր ինձ՝ մեղավորիս, որ Քո օգնության և բարեխոսության կարիքն ունեմ, ողորմիր, քանզի հոգիս Քեզ է ապավինել:

Սուրբ Հովհաննիկիոսի աղոթքը

Հույս իմ՝ Հայր, փրկություն իմ՝ Որդի, պահպանություն իմ՝ Սուրբ Հոգի. Ամենասուրբ Երրորդություն, փա՛ռք Քեզ:

Հիրավի արժանի է Քեզ տալ երանի[1]՝

---

[1] Սուրբ Զատկից մինչև Համբարձում ընկած ժամանակահատվածում այս աղոթքի փոխարեն կարդացվում է հետևյալը.

Հրեշտակն ազդարարեց շնորհընկալ Մարիամին. «Սրբասուն Կույս, ուրախացիր. նորից ասեմ՝ ուրախացիր: Քո Որդին երրորդ օրը հառնեց գերեզմանից և մեռելներին հարություն տվեց»: Ցնծացեք մարդիկ:

Աստվածամորդ՝ հավերժ երանելի և
Անարատ, մեր Աստուծո Մորդ։
Քեզ՝ պատվով գերազանց Քերովբեներից
Եվ անհամեմատ փառապանծ՝ Սերովբեներից,
Բանն Աստծուն անապականորեն Ծնողիդ
Մեծարում ենք մենք, Աստվածամայր Իսկուհի։ (Խոնարհում)

Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից։ Ամեն։

Տեր ողորմեա, Տեր ողորմեա, Տեր ողորմեա։

Տեր Հիսուս Քրիստոս, Որդի Աստուծո, Քո Սուրբ և Անարատ Մոր, արդար և աստվածազգեաց մեր հայրերի և համայն սրբերի աղոթքների սիրույն ողորմեա մեզ։ Ամեն։

Սուրբ Հովհան Դամասկոսցու աղոթքը

(Յույց տալով մահճակալդ, ասա՛)

Մարդասեր Տեր, մի՞թե մահիճն իմ այս մահվան մահիճ է դառնալու, թե՞ նորից կլուսացնես իմ թշվառ հոգին տվնջյան լույսով։ Ահա դամբանն է առջևս, ահա մահն է ինձ սպասում։ Վախենում եմ, Տեր, Քո արդար դատաստանից և անվերջ տանջանքներից, սակայն չարը գործելուց չեմ հրաժարվում։ Քեզ՝ իմ Աստծուն և Տիրոջն անվերջ զայրացնում եմ, Ամենասուրբ Քո Մորը, երկնային ուժերին և իմ պահապան սուրբ Հրեշտակին։ Գիտեմ, որ արժանի չեմ Քո մարդասիրությանը, այլ արժանի եմ դատապարտության և ամենայն տանջանքների։ Սակայն Դու, Տեր, ողորմիր և փրկիր ինձ՝ անկախ իմ կամքից՝ ուզենամ թե չուզենամ։ Եթե արդարին փրկես, չի երևա Քո մեծափառությունը, և եթե անմեղին ողորմես՝ Քո հրաշափառությունը, քանզի նրանք արժանի են Քո ողորմությանը։ Այլ ինձ՝

Դու շողա՛, շողա՛, նոր Երուսաղեմ, քանզի Տիրոջ փառքը ծագեց քեզ վրա։ Այժմ հրճվի՛ր, շնորհազարդվի՛ր, Սիոն։ Եվ Դու ուրախացի՛ր, Մաքրամաքուր Աստվածամայր, Քեզնից ծնված Փրկչի հարությամբ։

մեղավորիս, երջանկացրու Քո զարմանահրաշ ողորմությամբ՝ ցույց տալով Քո մարդասիրությունը, որպեսզի իմ չարությունը չգերակշռի Քո անճառելի բարությունն ու գթասրտությունը, և տնօրինիր իմ կյանքը։ Լուսավորիր հոգուս աչքերը, Քրիստոս Աստված, որպեսզի չքնեմ մահվան քնով, որպեսզի երբևէ թշնամիս չասի. «Հաղթեցի ես նրան»։

Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն. *Աստվա՜ծ իմ, Դու եղիր իմ հոգու Առաջնորդը, քանզի ընթանում եմ բյուր որոգայթների միջով, ազատիր ու փրկիր դրանցից, Բարի և Մարդասեր Աստված։*

Այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից: Ամեն: *Մեր սրտերով և շուրթերով, անլռելի երգերով սուրբ հրեշտակներից էլ սրբագույն, փառավորյալ Աստվածամորն ենք գովում և Աստվածածին Նրան խոստովանում, Ով ճշմարտապես Մարդացյալ Աստծուն ծնեց մեզ համար և անդադար աղոթում է մեր հոգիների համար։*

Աղոթք Խաչի պահպանության

Համբուրիր խաչը, որ կրում ես, խաչակնքիր ինքդ քեզ և մահճակալդ սնարից մինչև ներքև, նաև աշխարհի չորս կողմերը՝ կարդալով այս աղոթքը.

Թող հառնի Աստված, և ցրվեն Նրա թշնամիները, և թող փախչեն Նրա հայացքից Նրան ատողները։ Ինչպես ծուխն է չքվում, թող այդպես չքվեն նրանք. ինչպես մոմն է հալվում կրակի ջերմից, այդպես թող կործանվեն դևերն Աստծուն սիրողների տեսքից, որոնք խաչակնքվելով բարբառում են ավետաձայն. «Հրճվի՛ր, ամենապատվական և կենդանարար Խաչ Տերունական, որ հալածում ես դևերին քեզ խաչված, դժոխք իջած, սատանայի ուժը կործանած և բոլոր թշնամիներին վանելու համար մեզ քեզ՝ Իր պատվական Խաչն ընծայած մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի զորությամբ։ Ո՜վ ամենապատիվ և

կենարար Խաչ Տերունական, օգնի՛ր ինձ մեր Տիրուհի և սուրբ Կույս Աստվածամոր և բոլոր սրբերի հետ հավետ։ Ամեն։

Աղոթք Խաչի պահպանության

Տեր, պարսպած պահիր ինձ Քո սուրբ, պատվական և կենարար Խաչի զորությամբ և պահպանիր ինձ ամենայն չարից։

Աղոթք

Տեր Աստված, խաղաղեցրու, ներիր և թող մեր մեղքերը, որ գործել ենք կամա թե ակամա, խոսքով և գործով, գիտակից և անգիտակից, ցերեկը թե գիշերը, որոնք մեր մտքում են և մտածմունքներում, բոլորը ներիր, քանզի Դու բարի ես և մարդասեր։

Աղոթք

Մարդասեր Աստված, ներիր մեզ ատողներին և նեղացնողներին։ Բարեգործներին հատուցիր բարով։ Կատարիր մեր եղբայրների և ազգականների խնդրանքներն ի փրկություն և շնորհիր կյանք հավիտենական։ Հիվանդներին այցելիր և բժշկիր։ Ովքեր ծովում են, առաջնորդիր։ Ճամփորդներին ճանապարհակից եղիր, քրիստոնյաներին՝ մարտակից։ Մեզ օգնողներին և գթացողներին շնորհիր մեղքերի թողություն։ Նրանց, ովքեր խնդրել են մեզ՝ անարժաններիս, աղոթել իրենց համար, ողորմիր Քո մեծ բարեգթությամբ։ Հիշիր, Տեր, անցյալում մահացած մեր հայրերին և եղբայրներին և հանգստացրու լույսերի մեջ՝ այնտեղ, ուր ճառագում է Քո դեմքի լույսը։ Հիշիր, Տեր, գերության մեջ գտնվող մեր եղբայրներին և փրկիր նրանց բոլոր արհավիրքներից։ Հիշիր, Տեր, Քո սուրբ տաճարների ընծայաբերողներին և բարեգործներին և կատարիր նրանց խնդրանքներն ի փրկություն և շնորհիր հավիտենական կյանք։ Հիշիր, Տեր, և մեզ՝ Քո խեղճ և մեղսավոր և անարժան ծառաներին, և լուսավորիր մեր միտքը Քո գիտության լույսով և հարթիր մեր ճանապարհը Քո պատգամներով, մեր Ամենասուրբ Տիրուհի Աստվածածին Կույս Մարիամի

և Քո բոլոր սրբերի աղոթքներով, քանզի Դու օրհնյալ ես հավիտյանս հավիտենից։ Ամեն։

Մեղքերի ամենօրյա խոստովանություն

Քեզ եմ խոստովանում՝ իմ Տեր Աստծուն և Արարչին՝ Սուրբ Երրորդությամբ Միակ, փառավորյալ և երկրպագելի Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն, բոլոր իմ մեղքերը, որ գործել եմ կյանքիս բոլոր օրերում, ամեն ժամ, անցյալում՝ օր ու գիշեր և այսօր՝ գործով, խոսքով, խորհրդով. շատակերությամբ, հարբեցողությամբ, ծածուկ որկրամոլությամբ, դատարկաբանությամբ, հուսահատությամբ, ծուլությամբ, վիճաբանությամբ, անհնազանդությամբ, զրպարտելով, կշտամբելով, անհոգությամբ, ինքնահավանությամբ, ընչաքաղցությամբ, թալանելով, ստախոսությամբ, անազնիվ շահառությամբ, շահամոլությամբ, խանդով, նախանձով, ցասումով, հիշաչարությամբ, ատելությամբ, արծաթասիրությամբ և իմ բոլոր զգայարաններով՝ տեսողությամբ, լսողությամբ, հոտառությամբ, ճաշակելիքով, շոշափելիքով և այլ՝ ինչպես հոգու, այնպես էլ մարմնի մեղքերով, որոնցով Քեզ՝ իմ Աստծուն և Արարչին զայրացրել եմ և մերձավորիս դառնացրել։ Եվ արդ զղջացյալ, մեղավոր կանգնած եմ Քո առջև, Աստված իմ, և կամենում եմ ապաշխարել. օգնի՛ր ինձ, Տեր, միայն թե օգնիր, Աստված իմ, խոնարհաբար, արտասուքներով պաղատում եմ Քեզ. Քո գթասրտությամբ ներիր Քո առաջ խոստովանած անցյալիս մեղքերը և դրանցից ազատիր ինձ, զի Դու բարի ես և մարդասեր։

Քնելուց առաջ կարդա այս աղոթքը

Տեր Հիսուս Քրիստոս, Աստված իմ, Քո ձեռքն եմ հանձնում հոգիս. Դու ինձ օրհնիր, Դու ողորմիր և հավերժական կյանք տուր ինձ։ Ամեն։

ԱՂՈԹԱԿԱՆ ԿԱՆՈՆ ՀԻՎԱՆԴԻ ՀԱՄԱՐ

Նախամուտք կանոնի

Տեր Հիսուս Քրիստոս, Աստված մեր, մեր սուրբ հայրերի աղոթքներով ողորմեա մեզ։ Ամեն։

Սուրբ Աստված, Սուրբ և Հզոր, Սուրբ և Անմահ, ողորմեա մեզ։
(Այս աղոթքը կրկնել երեք անգամ, ամեն անգամ՝ խաչակնքումով և խոնարհումով)

Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից։ Ամեն։

Ամենասուրբ Երրորդություն, ողորմեա մեզ.
Ամենակալ Տեր, մաքրիր մեր մեղքերը,
Ամենիշխան Տեր, ներիր մեր անօրենությունները,
Ամենասուրբ Տեր, այցելիր և փարատիր մեր տկարությունները՝
Քո Անվան սիրույն։

Տեր ողորմեա, Տեր ողորմեա, Տեր ողորմեա։

Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից։ Ամեն։

Հայր մեր, որ յերկինս ես,
սուրբ եղիցի Անուն Քո։
Եկեսցէ Արքայութիւն Քո։
Եղիցին կամք Քո
որպէս յերկինս եւ յերկրի։

Զհաց մեր հանապազորդ
տուր մեզ այսօր.
եւ թող մեզ զպարտիս մեր,
որպես եւ մեք թողումք
մերոց պարտապանաց։
Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն,
այլ փրկեա զմեզ ի չարէն։
Զի Քո է Արքայութիւն եւ զօրութիւն
եւ փառք յաւիտեանս.Ամէն։

Տեր ողորմեա (12 անգամ)

Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից։ Ամեն։

Եկե՛ք, երկրպագենք մեր Աստծուն՝ մեր Թագավորին (խոնարհում)
Եկե՛ք, երկրպագենք – ոտքերն ընկնենք Քրիստոսի՝ Աստծո մեր և Թագավորի (խոնարհում)
Եկե՛ք, ծնրադրենք և երկրպագենք Իրեն՝ Քրիստոսին՝ Աստծուն մեր և Թագավորին (խոնարհում)։

Սաղմոս 50

Ողորմիր ինձ, Աստված, ըստ Քո մեծ ողորմության, ըստ Քո առատ գթության քավիր իմ անօրենությունները։
Առավել լվա ինձ իմ անօրենություններից և մաքրիր ինձ իմ մեղքերից։
Իմ անօրենությունները ես ինքս գիտեմ, և իմ մեղքերն իմ առջև են ամեն ժամ։
Քո դեմ միայն մեղանչեցի, Տեր, և Քո առջև չարիք գործեցի, այնպես որ արդար կլինես Քո խոսքերում և հաղթող՝ դատելիս։
Անօրենությամբ հղացավ և մեղքի մեջ ծնեց ինձ իմ մայրը։

Դու, Տեր, ճշմարտությունը սիրեցիր, անհայտներն ու ծածկվածները Քո իմաստությամբ հայտնեցիր ինձ։
Ցողիր ինձ մշտիկով, և ես մաքուր կլինեմ, լվա ինձ, և ես ձյունից էլ սպիտակ կլինեմ։
Լսել տուր ինձ ցնծություն և ուրախություն, և կցնծան ոսկորներն իմ տառապած։
Դարձրու երեսդ իմ մեղքերից և քավիր իմ բոլոր անօրենությունները։
Սուրբ սիրտ հաստատիր իմ մեջ, Աստված, և ուղիղ հոգի նորոգիր իմ ներսում։
Մի զրկիր ինձ, Տեր, Քո երեսից, և մի հանիր ինձանից Քո Սուրբ Հոգին։
Տուր ինձ Քո փրկության ցնծությունը և Քո Տիրական Հոգով զորացրու ինձ։
Անօրեններին կսովորեցնեմ Քո ճանապարհը, և ամբարիշտները դեպի քեզ կդառնան։
Փրկիր ինձ արյունահեղությունից, Աստված, Աստված իմ փրկության, կցնծա իմ լեզուն Քո արդարությամբ։
Տեր, եթե իմ շուրթերը բանաս, իմ բերանը կերգի Քո օրհնությունները։
Թե կամենայիր, զոհեր կմատուցեինք, բայց Դու ողջակեզներն իսկ չհաճեցիր։
Զոհն Աստծուն խոնարհ հոգին է, սուրբ սիրտն ու խոնարհ հոգին Աստված չի արհամարհում։
Բարի արա, Տեր, Քո կամքով Սիոնին, և թող շինվեն Երուսաղեմի պարիսպները։
Այնժամ կհավանես արդարության զոհերը, երբ Զվարակները՝ որպես ուխտի պատարագներ, բարձրացնեն Քո սեղանին։

Աղերսերգություն Ա

Գավազանով պատռած հինավուց ծովով
Իսրայելն անցավ, ինչպես անապատով։
Խաչանման երևալով՝ շավիղն հուշեց, թե որ ուղով,
Ահավասիկ այս պատճառով

Գովմն ենք երգում մենք մեր Տիրոջ
Քանզի Հրաշալին փառավորյալ է։

Ողորմա՛ծ Տեր, լսի՛ր Քեզ աղոթող ծառաներիդ աղոթքը։

Մեզ պատուհասած տրտմության օրը Քո առջև ենք ընկնում, Քրիստոս Փրկիչ մեր, և աղերսում ողորմություն։ Սփոփիր Քո ծառայի/աղախնու ցավը, ասա նաև մեզ, ինչպես հարյուրապետին. «Գնա՛, ահա դեռատի որդիդ առողջ է»։

Ողորմա՛ծ Տեր, լսի՛ր Քեզ աղոթող ծառաներիդ աղոթքը։

Հառաչելով աղաչանքներ ու պաղատանքներ ենք վերառաքում Քեզ, Աստծո Որդի, ողորմի՛ր մեզ։ Բարձրացրու պառկածին իր մահճից Քո խոսքով, ինչպես բարձրացրիր թալկացածին՝ ասելով. «Վերցրու մահիճդ, քո մեղքերը ներվում են քեզ»։

Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն.

Տեր Հիսուս, Քո պատկերագիր Կերպարը հավատով համբուրում ենք և խոնարհվելով խնդրում հիվանդին առողջություն՝ հետևելով արյունածոր ախտաժետ կնոջը, ով հպվեց Քո քղանցքին և ստացավ ամոքում։

Այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից։ Ամեն։

Մաքրամաքուր Տիրուհի՝ Աստվածածին, ամենքին հայտնի Օգնականուհի, մի անտեսիր մեզ՝ Քո առջև ծնկածներիս, քանզի բարի ես, աղաչիր Որդուն Քո և մեր Տիրոջը առողջություն շնորհել հիվանդին, որպեսզի նա էլ մեզ հետ միասին Քեզ փառաբանի։

Աղերսերգություն Գ[1]

Անէությունից ամենը գոյացնելով, Բանովն արարելով, ավարտելով Հոգով՝ Ամենակալ Տեր, Քո սիրո մեջ հաստատիր ինձ:

Ողորմա՛ծ Տեր, լսի՛ր Քեզ աղոթող ծառաներիդ աղոթքը։

Ծանր հիվանդություններով հողին կքած՝ Քեզ է կանչում, Քրիստոս, մեզ միացած. տուր Դու նրան մարմնի ողջություն, ինչպես Եզեկիային, որ հեծեծալով աղերսում էր Քեզ հնում։

Ողորմա՛ծ Տեր, լսի՛ր Քեզ աղոթող ծառաներիդ աղոթքը։

Նայի՛ր, Տեր, մեր խոնարհությանը և մի հիշիր մեր անօրենությունները, այլ հանուն ցավահարի հավատի՝ բժշկիր նրա հիվանդությունը խոսքով, ինչպես բորոտին, որպեսզի փառավորվի Քո անունը, Քրիստոս Աստված մեր։

Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն.

Մի թող, Քրիստոս, Քո Եկեղեցուն, որին Դու սրբագործեցիր, և որում մենք աղոթում ենք Քեզ, ենթարկվել ամբաստանության, այլ մեղմորեն հանիր հիվանդությամբ մահճին գամվածին, որպեսզի չասեն անհավատները. «Ու՞ր է նրանց Աստվածը»։

Այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից։ Ամեն։

Ո՛վ Աստվածամայր, մեր ձեռքերը կարկառելով Քո մաքրամաքուր պատկերին՝ աղաչում ենք. «Լսի՛ր Քո ծառաների աղոթքը և փրկիր հիվանդությամբ տառապողին, որպեսզի հառնելով հիվանդությունից՝ նա կատարի իր այն ուխտերը, որ Քեզ էին խոստացել նրա շուրթերը տրտմության ժամին»։

Ինչպես որ Դու առողջացրիր Պետրոսի զոքանչին և փրկեցիր պատգարակով տարվող անդամալույծին, այդպես էլ այժմ

[1] Ուղղափառ եկեղեցիներում կարդացվող աղոթական կանոններում ավանդության համաձայն բացակայում է երկրորդ մասը, այն առկա է ապաշխարանքի կանոնում:

այցելիր, Ողորմա՛ծ, մեղքերով հիվանդացած՝ պառկածիս և կարեվերիս, որ կրել ես մարդկային ցեղի տկարությունները։ Քեզ՝ Միակ երկայնամիտ և գթասիրտ Քրիստոս Աստծուն մեր ճանաչում ենք որպես հոգիների և մարմինների գթառատ բժշկի, որ ուղարկում ես հիվանդություններ ու դարձյալ դրանք բժշկում, թողություն շնորհում ապաշավող մեղավորներին, Միակիդ՝ գթասիրտ և ողորմած։

Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն.

Ես՝ մեղավորս, մահճում պառկած՝ լալիս եմ. շնորհի՛ր ինձ ներում, Քրիստոս Աստված, և հանիր ինձ այս հիվանդությունից, ու Աստվածածնի աղոթքներով շնորհիր ազատում մեղքերիցս, որ գործել եմ պատանեկությունից ի վեր։

Այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից։ Ամեն։

Գթա, խղճա և փրկի՛ր մեղավորիս, հանիր ինձ հիվանդության մահճից, քանզի սպառվեց ուժս ներսիդիս, ու հուսահատությունն է համակել ինձ համորեն։ Մաքրամաքու՛ր Աստվածամայր, առողջացրու ծանր հիվանդին, քանզի Դու ես քրիստոնյաների օգնականը։

Աղերսերգություն Դ

Մեր հանդեպ Քո անհուն սերը ցույց տվեցիր, Հայր, Միածին Որդուդ մահվան մատնելով հանուն մեզ։ Ուստի Քեզ ենք կանչում երախտապարտ. «Փա՛ռք զորությանը Քո, Տեր»։

Ողորմա՛ծ Տեր, լսի՛ր Քեզ աղոթող ծառաներիդ աղոթքը։

Ծանր հիվանդությամբ արդեն հուսահատված և մահվան եզրին հասածին դեպի կյանք վերադարձրու և արտասվողներիս մխիթարություն տուր, Քրիստոս, որպեսզի բոլորս փառաբանենք Քո անպատիր ու սուրբ հրաշքները։

Ողորմա՛ծ Տեր, լսի՛ր Քեզ աղոթող ծառաներիդ աղոթքը։

Քո առջև մենք խոստովանում ենք մեր մեղքերը, Արարի՛չդ Աստված, քանզի Դու չես ցանկանում մեղավորի մահը։ Ապրեցրու, առողջացրու հիվանդին, որպեսզի հառնելով՝ Քեզ ծառայի՝ մեզ հետ վկայելով Քո բարեգթությունը։

Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն.

Մանասեի արցունքները, նինվեացիների ապաշավանքը և Դավթի խոստովանությունն ընդունելով՝ շուտով նրանց փրկեցիր. մեր աղոթքներն էլ այժմ ընդունիր, տու՛ր հիվանդին առողջություն, աղաչում ենք Քեզ։

Այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից։ Ամեն։

Արժանացրու մեզ Քո ողորմությանը, Տիրուհի՛, միշտ ու միշտ Քեզ հուսացողներիս. խնդրելով ստացիր ապաքինումն հիվանդի, Տիրամա՛յր, Հովհաննես Կարապետի հետ կարկառելով Քո ամոքող ձեռքերն առ Տեր Աստված։

Աղերսերգություն Ե

Անտեսանելի՛ Տեր, Անհասանելիդ, իջար երկիր և կամավոր ապրեցիր մարդկանց մեջ, ահա Քեզ վաղորդայնից ժամերգելով՝ գովերգում ենք, Մարդասեր։

Ողորմա՛ծ Տեր, լսի՛ր Քեզ աղոթող ծառաներիդ աղոթքը։

Արդեն մեռած դստերն Հայրոսի՝ որպես Աստված, Դու հարություն տվեցիր։ Այժմ էլ բարձրացրու հիվանդին մահվան դռներից, Քրիստոս Աստված մեր, քանզի Դու ես բոլորիս Ճանապարհն ու Կյանքը։

Ողորմա՛ծ Տեր, լսի՛ր Քեզ աղոթող ծառաներիդ աղոթքը։

Այրու որդուն կենդանացնելով, Փրկի՛չ, մոր արցունքներն ուրախության փոխեցիր. արդ, փրկիր ախտից հալումաշվող Քո ծառային/աղախնուն, որպեսզի մեր վիշտն ու ցավն էլ փոխվեն ուրախության։

Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն.

Քո հպումով դարմանեցիր Պետրոսի զոքանչի հրաբորբոք տենդը, այժմ ոտքի՛ հանիր ախտաժետ Քո ծառային/աղախնուն, որպեսզի նա էլ առողջ և առույգ ծառայի Քեզ։

Այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից։ Ամեն։

Վշտակիր, խեղճ ու մեղապարտ, Քո առջև՝ վեհերոտ, աղերսում ենք, Սրբալու՛յս Աստվածամայր, աղաչի՛ր Քրիստոս Որդուդ շնորհել հիվանդին քաջառողջություն։

Աղերսերգություն Զ

Մեղմերիս մռայլ խորխորատը կլանել է ինձ, ու հոգիս է կիսամեռ, բայց Դու, Բարձրյա՛լ, կյանքի Տնօրեն, մեկնելով զորեղ ձեռդ՝ փրկիր ինձ, ինչպես Պետրոսին։

Ողորմա՛ծ Տեր, լսի՛ր Քեզ աղոթող ծառաներիդ աղոթքը։

Վեհագույն՝ գթասրտության ու գութի վիհով, Քրիստոս Աստված մեր, լսի՛ր Քո ծառաների պաղատանքները. քանզի Դու Պետրոսի աղոթքով Այծեմնիկին հարություն տվեցիր, հիմա էլ հանիր ի կյանք հիվանդության մահճին գամվածին՝ անսալով Եկեղեցուդ աղոթարարներին։

Ողորմա՛ծ Տեր, լսի՛ր Քեզ աղոթող ծառաներիդ աղոթքը։

Քրիստոս՝ Բժիշկ մեր հոգիների և մարմինների, որ կրել ես ողջ աշխարհի վերքերը, Եվտիքոսին Պողոսի միջոցով վերակենդանացրել, Ինքդ բժշկիր հիմա հիվանդին սուրբ առաքյալների բարեխոսությամբ։

Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն.

Անկյալ սգավորի համար մեր լացուկոծը դարձրու ուրախություն, Քրիստոս, որպեսզի նա, ստանալով Քո ողորմությունը, մտնի Քո աղոթատունը ուխտի ընծաներով, փառաբանելով Քեզ՝ Սուրբ Երրորդության Միասնական Աստվածությանդ։

Այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից։ Ամեն։

Եկե՛ք, ո՛վ բարեկամներ, խոնարհվելով աղոթենք Աստվածամորը հիվանդի համար, քանզի Նա անարծաթ սուրբ բժիշկների հետ ունի ցավագարներին բժշկելու իշխանություն՝ անտեսանելիորեն օծելով նրանց հոգևոր սփոփայուղով։

Տե՛ր իմ, զանազան մեղքերից և անարգ գործերից հույժ թալկացած հոգիս հաստիր Աստվածային Քո սիրով, ինչպես հնում բարձրացրիր թուլացածին, զի ես էլ, փրկության հույսով կանչում եմ Քեզ. «Առատաձեռն Քրիստոս, շնորհի՛ր ինձ դարմանում»։

Քո ձեռքերում պահելով տիեզերքը՝ զերթ բռաչափ, Քրիստոս Աստված, Անսկիզբ, ինչպես Հայրը և իշխանակից Սուրբ Հոգուն, Դու մարմին առար՝ մեր ցավերն ամոքելով. կրքերը մաքրեցիր, կույրերին լուսավորեցիր, իսկ թուլացածին Աստվածային խոսքովդ բարձրացրիր՝ վերակերտելով նրան ուղղաքայլ, հրամայելով շալակել մահիճը։ Այս պատճառով բոլորս՝ նրան միացած, գովերգում ենք Քեզ և աղերսում. «Առատաձեռն Քրիստոս, շնորհի՛ր ինձ դարմանում»։

Աղերսերգություն Է

Վաղ անցյալում երեք պատանիները, չերկրպագելով պարսից կուռքին, երգում էին հնոցի մեջ. «Օրհնյա՛լ ես, Տեր Աստված մեր հայրերի»։

Ողորմա՛ծ Տեր, լսի՛ր Քեզ աղոթող ծառաներիդ աղոթքը։

Օ՜հ Քրիստոսի սրբասուրբ խաչ, նվիրական կենաց Փայտ, քեզնով մահը մեռավ, և մեռյալները հարություն առան։ Այժմ էլ հիվանդին առողջացրո՛ւ և կենդանացրո՛ւ, ինչպես Հեղինե թագուհու օրոք՝ մահացած աղջկան։

Ողորմա՛ծ Տեր, լսի՛ր Քեզ աղոթող ծառաներիդ աղոթքը։

Փտաղբի և որդերի վրա աղոթող Հոբի երկարատև և անտանելի ցավը խոսքովդ բժշկեցիր, Տեր։ Այժմ էլ եկեղեցում աղաչում ենք Քեզ հիվանդի համար. մեղմ, անտեսանելիորեն բուժի՛ր նրան Քո սրբերի աղոթքներով, զի բարեգութ ես։

Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն.

Բոլորս գիտենք, որ մեռնելու ենք. դա Աստվածային կամքդ է. բայց մի փոքր ժամանակ, մի քիչ էլ, Գթառա՛տ, պաղատում ենք Քեզ, առողջություն շնորհիր, մահից կյանք փոխադրիր հիվանդին, տու՛ր մխիթարություն վշտացողներին։

Այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից։ Ամեն։

Հասիր և օգնիր մեր որբությանը, Աստվածամա՛յր, քանզի Դու գիտես օրը և ժամը, թե երբ ես խնդրելու Քո Որդուն և մեր Տիրոջը հիվանդի համար առողջության և բոլոր մեղքերից թողության շնորհում։

Աղերսերգություն Ը

Ծառայելով Կենդանի Աստծուն Բաբելոնում՝ պատանիները հույժ հալածվեցին, և հեթանոսական նվագին անհաղորդ, կրակի մեջ կանգնած, աստվածահաճո երգով կանչում էին. «Ամենայն արարածնե՛ր Տիրոջ, օրհնեցե՛ք Տիրոջը»։

Ողորմա՛ծ Տեր, լսի՛ր Քեզ աղոթող ծառաներիդ աղոթքը։

Գու՛թ ցուցաբերիր, Ամենիշխան Տեր, ախտացյալ ծառայիդ/աղախնուդ, և շուտափույթ առողջացրու, ողորմած Քրիստոս

Աստված. դեռ մի տանիր նրան մահվան դատաստանի, որ բերի Քեզ ապաշխարություն։ Չէ՞ որ Ինքդ ես ասել. «Չեմ ցանկանում մեղավորի մահը»։

Ողորմա՛ծ Տեր, լսի՛ր Քեզ աղոթող ծառաներիդ աղոթքը։

Ողորմա՛ծ Տեր, Քո փառապանծ հրաշքները թող մեզ էլ հիմա հասնեն. հալածիր դևերին, ախտերն արմատախի՛լ արա, վերքերն ամոքիր, հիվանդությունները բուժիր, և կախարդությունից ու հմայությունից և ամենայն խոցերից մեզ ազատիր։

Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն.

Սաստելով ծովի հողմերին, Տեր մեր Քրիստոս, աշակերտներիդ վախը փոխեցիր ուրախության։ Այժմ էլ սաստիր սաստիկ հիվանդություններին, որ ընկճում – քայքայում են Քո ծառային/աղախնուն, որ բոլորս բերկրությամբ փառաբանենք Քեզ հավետ։

Այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից։ Ամեն։

Փրկի՛ր, Տիրամայր, ամեն կողմից մեզ շրջապատող վհատություններից, տարատեսակ ախտերից, թունավորումից և կախարդությունից, նաև դիվահնար երազանքներից, չարախոսների զրպարտությունից և մահից, աղաչու՛մ ենք Քեզ։

Աղերսերգություն Թ

Քեզ՝ որպես մորենի, Մովսեսը տեսավ Սինա լեռան վրա, որ Աստվածության հուրն անվնաս կրեցիր Քո որովայնում հրաշափառորեն. Դանիելը Քեզ տեսավ անհատելի լեռան կերպ, Եսային էլ մարգարեացավ. ծաղկած գավազանն ես Դավթի արմատից։

Ողորմա՛ծ Տեր, լսի՛ր Քեզ աղոթող ծառաներիդ աղոթքը։

Կյանքի Աղբյուր, ողորմություն շնորհող Քրիստոս, երես մի՛ թեքիր մեզնից։ Ցավից հյուծվածի հիվանդությունն ամոքիր և ոտքի՛ կանգնեցրու, ինչպես Աբգար թագավորին Թադեոսի միջոցով, որպեսզի նա հանապազ Քեզ փառաբանի Հոր և Սուրբ Հոգու հետ։

Ողորմա՛ծ Տեր, լսի՛ր Քեզ աղոթող ծառաներիդ աղոթքը։

Հավատալով ավետարանական խոսքին՝ փնտրում ենք Քրիստոսիդ խոստացածը, Տեր, քանզի ասել ես. «Փնտրեցեք, և կտրվի ձեզ»։ Ուստի և մենք, Քո առջև կանգնած, աղոթում ենք. առողջացրու, հանի՛ր մահճից տառապող ցավագարին, որպեսզի նա, միանալով մեզ, Քեզ փառավորի։

Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն.

Ախտացյալ և տառապյալ, ներսից աներևույթ խոցերով վիրավորը մեզ հետ միասին Քեզ է կանչում՝ Քրիստոս. մեզ չէ, որ լսելու ես, Տե՛ր, ոչ էլ հանուն մեզ ես գթալու, քանզի բոլորս էլ լի ենք մեղքերով, այլ Քո Ծնողի և Կարապետի աղոթքներով շնորհի՛ր հիվանդին ապաքինում, որ բոլորս Քեզ փառավորենք ու մեծարենք։

Այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից։ Ամեն։

Մաքրամաքուր Մա՛յր Աստուծո, Քեզ ենք կանչում բոլոր սրբերի դասերի հետ՝ հրեշտակների ու հրեշտակապետերի, մարգարեների և հայրապետների, առաքյալների, սրբադասված վանականների և արդարների. խնդրի՛ր Քրիստոս Աստծուն մեր շնորհել հիվանդին առողջություն, որպեսզի ամբողջանվեր մենք Քեզ մեծարենք։

Աղոթք

Հզո՛ր Աստված, որ Քո ողորմությամբ ամեն ինչ կարգադասել ես մարդկային ցեղի փրկության համար, այցելիր (անունը)

ծառայիդ/աղախնուդ, որ կանչում է Քո Քրիստոսի անունը, առողջացրու նրան հոգու և մարմնի ամեն հիվանդությունից. ներիր նրա մեղքերն ու ազատիր մեղսոտ գայթակղություններից, և ամեն մի փորձանք ու դիվային հարձակում հեռու՛ վանիր Քո ծառայից/աղախնուց: Հանիր նրան իր մեղքերի մահճից և վերադարձրու Քո սուրբ Եկեղեցու շարքերը՝ հոգով և մարմնով քաջառողջ, բարի գործերով Քո Քրիստոսի անունը փառաբանող բոլոր մարդկանց հետ, քանզի Քեզ փառք ենք վերառաքում Միածին Որդուդ և Սուրբ Հոգուդ հետ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից: Ամեն:

Հիրավի արժանի է Քեզ տալ երանի՝
Աստվածամորդ՝ հավերժ երանելի և
Անարատ, մեր Աստուծո Մորդ:
Քեզ՝ պատվով գերազանց Քերովբեներից
Եվ անհամեմատ փառապանծ՝ Սերովբեներից,
Բանն Աստծուն անապականորեն Ծնողիդ
Մեծարում ենք մենք՝ Աստվածամայր Իսկուհի:
(Խոնարհում)

Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից: Ամեն:

Տեր ողորմեա
Տեր ողորմեա
Տեր ողորմեա.
Օրհնեա Տեր:

Տեր Հիսուս Քրիստոս, Որդի Աստուծո, Քո սուրբ և անարատ Մոր, արդար և աստվածազգեաց մեր հայրերի և համայն սրբերի աղոթքներով ողորմեա մեզ: Ամեն:

ԱՂՈԹՔՆԵՐ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Աղոթքներ և քաջալերիչ խոսքեր հիվանդապահներին

Չորրորդ դարի եպիսկոպոս սուրբ Սերապիոնը և նրա աղոթքները

Տիեզերական եկեղեցու կարկառուն գործիչներից՝ հայրերից մեկը, սուրբ Սերապիոն Տմուիտցին ապրել է IV դարում, եղել է Եգիպտոսի Տմուիս քաղաքի (Նեղոսի դելտայում) եպիսկոպոսը մոտավորապես 339 թվականից: 359 թվին նա ենթարկվել է հալածանքների:Մահվան հանգամանքներն անհայտ են:

Ուսումնասիրելով այն ամենը, ինչ հասել է մեզ նրա հայրաբանական ժառանգությունից, եզրակացնում ենք, որ նա եղել է ուսյալ, գիտնական եպիսկոպոս, ամուր հավատով, բազմակողմանիորեն զարգացած: Նա մոտ է եղել Նիկիական ժողովի շրջանակին և նրա դավանանքին: Սուրբ Սերապիոնը եղել է մեկ այլ մեծ եգիպտացի հոգևոր գործչի՝ Եկեղեցու սյուն հանդիսացող Աթանաս Ալեքսանդրացու համախոհն ու հետևորդը: Հայտնի է, որ նրանք թղթակցել են՝ գրելով նամակներ (մեզ են հասել սուրբ Աթանաս Մեծի չորս նամակները սուրբ Սերապիոնին): Սերապիոն Տմուիտցին թողել է մի շարք աշխատություններ, որոնց թվում «Եվխոլոգիոնը»՝ բացառիկ հետաքրքրություն ներկայացնող աղոթքների ժողովածու: Նրա այս աղոթքները հանդիսանում են քրիստոնեական հոգևոր գրականության տվյալ ժանրի ամենահին օրինակներից: «Եվխոլոգիոնը», որ համարվում էր կորած, 1894 թվին հայտնաբերվում է ռուս պրոֆեսոր Ա. Ա. Դմիտրիևսկու կողմից X դարի մի ձեռագրում, որը պահվում էր սուրբ Աթոս լեռան գրադարանում: Նույն գիտնականն էլ հրապարակում է ժողովածուն ռուսերեն թարգմանությամբ հանդերձ:

Սուրբ Սերապիոն եպիսկոպոսի որոշ գործերի բնօրինակները կորսվել են դարերի ընթացքում, որոշ աշխատություններ էլ մեզ են հասել գրաբարյան թարգմանությունների շնորհիվ: Այսօր բնագրի արժեք ստացած գրաբարյան թարգմանություններն իր հոդվածներում հետա-

զոտում և ռուսերեն թարգմանությամբ հրապարակում է հիանալի արևելագետ Սերգեյ սարկավագ Պանտելեևը, որն, ի դեպ, ռուսերեն թարգմանությամբ հրատարակել է Սերապիոն եպիսկոպոսի «Ուղերձը» Աթանաս Մեծի ուսուցիչ սուրբ Անտոն Անապատականի աշակերտներին: Վերջինիս հունարեն բնագիրը չի պահպանվել:

Օգտվելով առիթից, ներկայացնում ենք հայկական ձեռագրերից մեզ հասած սերապիոնյան մի աղոթք, որը նաև բժշկության աղոթք է: Այն վերատպում ենք հայկական աղոթագրքից.

«Տեր Հիսուս, Դու ես իմ օգնականը, Քո ձեռքերում եմ, Դու գիտես իմ օգուտը, օգնիր ինձ: Մի թողնիր ինձ իմ կամքին հետևել, մի թողնիր ինձ կորչել իմ մեղքերում, գթա Քո ստեղծածին, մի գցիր ինձ Քո աչքից իմ մեղքերի պատճառով, քանզի Քեզ ապավինեցի: Բժշկիր իմ անձը, քանզի մեղանչեցի Քո հանդեպ. Քո առջև են իմ բոլոր նեղիչները, և չկա ինձ ապավեն, Տեր, Քեզանից բացի: Փրկիր ինձ ըստ Քո ողորմության, և թող ամաչեն բոլոր ինձ վրա հարձակվածները, որոնք ձգտում են կորցնել իմ անձը. քանզի Դու, Տեր, ամենակարող ես, և Քոնն է փառքը հավիտյանս: Ամեն»:

Աղոթագրքի սույն բաժնում թարգմանաբար ներկայացնում ենք ընտրովի աղոթքներ Սուրբ Սերապիոնի «Եվխոլոգիոնից», որոնք հիմնականում բժշկության աղոթքներ են:

Աղոթք հիվանդների համար

Խնդրում ենք Քեզնից՝ կյանքի Առաջնորդից և մեր Տիրոջից, որ Կազմողդ ես մարմնի և Արարիչդ հոգու, որ մարդուն դարձրիր ողջ մարդկային ցեղի հսկիչ, կառավարիչ և փրկիչ, Քեզնից, որ հաշտուխաղաղ ես և հանդարտ, Քո իսկ մարդասիրությամբ խղճա, Տե՛ր, օգնիր և առողջացրու բոլոր հիվանդներին, սաստիր ախտերին, կանգնեցրու պառկածներին (անունները), փառավորիր Քո սուրբ Անունը Քո Միածին Հիսուս Քրիստոսի միջոցով, Որով Քեզ փառք և իշխանություն Սուրբ Հոգով այժմ և հավիտյանս հավիտենից: Ամեն:

Այլ աղոթք հիվանդների համար

Տեր Աստված առատաձեռն պարգևների, երկարիր Քո ձեռքը և շնորհիր բոլոր հիվանդներին առողջացում: Տե՛ր, արժանացրու նրանց առողջության, ազատիր նրանց մահճին գամող հիվանդությունից, հանուն Քո Միածնի թող բժշկվեն (անուններ-

որը), թող նրանց համար ամոքադեղ լինի Քո սուրբ Անունն ի պահպանություն, որ մնան ողջ և առողջ, քանզի Միածնիդ միջոցով է Քեզ փառք և գերիշխանական պատիվ վերառաքվում Սուրբ Հոգով այժմ և հավիտյանս հավիտենից։ Ամեն։

Աղոթք, որ կարդացվում է հիվանդների ձեթի, հացի կամ ջրի վրա

Կանչում ենք Քեզ, որ ունես ամենայն իշխանություն և զորություն, որ Փրկիչդ ես բոլոր մարդկանց՝ մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի Հորդ և աղաչում երկնքից ուղարկել Միածնիդ ամոքիչ զորությունն այս ձեթի վրա, որպեսզի սրանով օծվողներին կամ Քո այս բարիքներիդ հաղորդվողներին այն դառնա ամեն հիվանդության և ամեն տկարության հալածիչ, հակաթույն՝ դիվային ողջ դրսևորումների, ամեն տեսակի պիղծ ոգու վտարման հնարք, ազատաբեր դարմանում ջերմատագնապ դողէրոցքից և դիվասարսուռ ամենայն հիվանդությունից, որպեսզի այն լինի բարեշնորհ պարգև՝ ի քավություն մեղանչումների, որ լինի կենաց փրկարար բժշկություն՝ ի պահպանություն և քաջառողջություն հոգու, մտքի և մարմնի. թող սարսի սրանցից, Ամենակա՛լ Տեր, սատանայական բովանդակ բանակը, այն ամենը, ինչ դիվային է, հակառակորդի ամեն մի չարանենգություն և վնասատվություն, ամենայն պատուհաս, ամենայն տառապանք, ամենայն ցավ կամ հարված, կամ ցնցում, կամ էլ դիվապատիր մթագնում։ Քո սուրբ Անվամբ, որը մենք նոր կանչեցինք, և Միածնի Անվամբ թող ի կոր կորչեն աղետաբերներն արտաքին և ներքին Քո այս (կամ անունները) *ծառաներից, որպեսզի փառավորվի մեզ համար Խաչյալի և Հարություն Առածի՝ մեր հիվանդություններն ու տկարությունները կրած Հիսուս Քրիստոսի Անունը, որ գալիս է դատելու կենդանիներին և մեռյալներին, քանզի Նրանով են Քո փառքը, իշխանությունն ու պատիվը Սուրբ Հոգով այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից։ Ամեն։*

Աղոթք ծնրադրման

Ո՜վ Հայր Միածնի՝ բարեգութ, առատաձեռն, գթասիրտ, մարդասեր և հոգեխնամ բարերար բոլոր Քեզ դիմողների, ըն-

դունիր այս աղոթքն ու շնորհիր մեզ խոհեմություն, հավատ և բարեպաշտություն, նաև աշխարհից զերծ սրբություն։ Խորտակիր Քո ժողովրդի բոլոր կրքերը, ամեն մի մեղք, ցանկասիրություն, մաքրագործիր՝ դարձրու բոլորին մաքուր, ներիր բոլորի մեղքերը, որովհետև Քեզ՝ անծին Հորդ, Միածնիդ միջոցով մենք ծունկ ենք խոնարհում և ծնկաչոք աղերսում. տո՛ւր մեզ, Տեր, անխաթար միտք և կատարյալ օգուտ, տո՛ւր, որ գտնենք Քեզ և սիրենք Քեզ, որ ջանադրությամբ և եռանդով քննենք և սերտենք Աստվածային Քո խոսքերը։ Տո՛ւր մեզ, Ամենակա՛լ Տեր, ձեռքդ և բարձրացրու մեզ, բարձրացրու՝ առատաշնորհությունների Աստված, արա, որ վեր հառենք մեր աչքերը, բաց մեր աչքերը, տուր մեզ համարձակություն և մի հանդիմանիր մեզ ամոթով, անարգանքով, ինքնադատապարտմամբ, այլ ջնջիր մեր հանցանքների ձեռագիրը և գրիր մեր անունները Կյանքի Գրքում, շարադասիր մեզ Քո սուրբ մարգարեների և առաքյալների կարգը Քո Միածին Հիսուս Քրիստոսի միջոցով, Որի միջոցով էլ Քեզ փառք, պատիվ և իշխանություն Սուրբ Հոգով այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից։ Ամեն։

Աղոթք բերքատվության համար

Արարի՛չ երկնքի և երկրի, որ պսակել ես երկինքը աստղաբույլերով և գեղազարդել պայծառ լուսատուներով, իսկ երկիրը պատվել բերքով՝ հօգուտ մարդկության, որ տվել ես Քո Աջի տակ ծերացած մարդկային ցեղին բերկրել լուսատուների փայլ ու լույսով վերը՝ երկնքում, իսկ ներքևում՝ վայելել երկրի բարիքները. աղոթում ենք Քեզ հորդառատ, բեղուն և արդյունաշատ անձրևներ պարգևելու համար. արա՛ այնպես, որ երկիրը պտղաբերի, որ նա պարգևի բերքի մեծ առատություն հանուն Քո մարդասիրության և բարության։ Հիշի՛ր Քեզ կանչողներին, պատվիր Քո սուրբ և միակ Եկեղեցին և լսիր մեր ձայնն ու աղոթքները և օրհնիր ողջ երկիրը Քո Միածին Հիսուս Քրիստոսի միջոցով, Որի միջոցով Քեզ փառք և իշխանություն Սուրբ Հոգով այժմ և հավիտյանս հավիտենից։ Ամեն։

ՀԻՎԱՆԴԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՐԴԱՑՎՈՂ ԱՂՈԹՔՆԵՐ

Հիվանդի աղոթք

Տեր իմ, Դու տեսնում ես իմ հիվանդությունը: Դու գիտես, թե որքան մեղավոր եմ ես և տկար. օգնիր ինձ համբերել և գոհանալ Քո ողորմածությունից: Տե՛ր, արա այնպես, որ այս հիվանդությունը ծառայի բազում իմ մեղքերից մաքրմանը: Ամենակա՛լ Տեր, Քո ձեռքերում եմ, ողորմիր ինձ Քո կամքի համաձայն, և, եթե օգտակար է, շուտով առողջացրու ինձ: Ըստ իմ գործերի՝ ըստ արժանվույն եմ տանում հիվանդությունս. հիշի՛ր ինձ, Տեր, Քո Արքայությունում: Փա՛ռք Աստծուն ամեն ինչի համար:

Աղոթք հիվանդության ժամանակ

Տեր Աստված, իմ կյանքի Տիրակալ, Դու ասել ես ըստ Քո բարության՝ չեմ կամենում մեղավորի մահը, այլ նրա դարձի գալը և ապրելը: Ես գիտեմ, որ այս հիվանդությունը, որով տառապում եմ, հատուցումն է իմ մեղքերի և անօրենությունների. գիտեմ, որ ըստ իմ չար գործերի եմ արժանացել ծանրագույն պատժի, սակայն Դու, Մարդասե՛ր, վարվիր ինձ հետ ոչ իմ չարության համեմատ, այլ Քո անսահման գթասրտության: Մի՛ կամեցիր իմ մահը, այլ ու՛ժ տուր ինձ, որպեսզի համբերատարորեն տանեմ հիվանդությունս՝ որպես փորձություն, որին արժանի եմ, և առողջանալուց հետո իմ ողջ հոգով, սրտով և զգայություններով դարձի գամ Քեզ՝ իմ Տեր Աստծուն, իմ Արարչին, որպեսզի ապրեմ Քո սուրբ պատգամները կատարելու համար, իմ սիրելիների հանգստության և սեփական բարօրությանս համար: Ամեն:

Աղոթք

Տեր իմ, գթառա՛տ Հիսուս, Քո խաչի զորությամբ արգելիր-սաստիր հպարտության և սնափառության ոգուն, ատելության և ոխակալության ոգուն, նախանձի և քծնանքի ոգուն, որ խռովում են ինձ : Տեր իմ Հիսուս, զորությո՛ն իմ, Քո խա-

չի զորությամբ արգելիր-սաստիր հեշտասեր, ժանտահոտ, պոռնկացող անառակ ոգուն, որն ապականում է ինձ։

Տեր իմ Հիսուս, գթառա՛տ Քրիստոս, Քո Խաչի զորությամբ արգելիր-սաստիր տրտմության, տխրության, երկյուղի ոգուն, անհուսության և հուսալքության ոգուն, որ հյուծում է ինձ։

Տեր իմ Հիսուս, բազմագու՛թ Քրիստոս, Քո Աստվածային Անվամբ թող իսպառ հանգչեն անձս մաշող մարմնի եռացող գրգիռները խլրտուն, որ հուսալքող դիվային ներշնչումից են։

Տեր իմ Հիսուս, բազմագու՛թ Քրիստոս, Քո Աստվածային Անվամբ թող հանգչեն մարմնիս ամենայն եռացող գրգիռ ու խլրտյուն՝ դիվային ազդումից բորբոքված։

Հիսուս, դժոխքին Հաղթողդ, նվաճիր նաև հոգուս դժոխքը և հարությու՛ն տուր կրքերով մեռածիս։ Ամեն։

Աղոթք Տիրամորը Նրա «Ամենաթագուհի» սրբապատկերի առջև

(քաղցկեղային հիվանդությունների դեպքում)

Օ՜ Մաքրամաքուր Աստվածամայր, Մայրթագուհի։ Լսի՛ր մեր տրտմաթախիծ և ցավալից հառաչանքը հրաշագործ սրբապատկերիդ առջև՝ Քո սուրբ և սեփական լեռից բեր-

ված. նայիր անդարմանելի ցավերով տառապող, հավատքով Քո սուրբ պատկերի առջև ծնկի իջած զավակներիդ: Ինչպես հավքն է թևերով ծածկում իր ձագերին, այդպես էլ Դու, Հավերժամայր, պատսպարիր մեզ հիմա Քո ախտակործան բազմահնար ծածկոցի ներքո: Այնտեղ, որտեղ հույսը հատվում է, եղիր մեր հաստատուն Հույսը: Այնտեղ, որտեղ անտանելի տառապանքներն են տվայտում, դարձիր մեր Համբերությունն ու Սփոփանքը: Այնտեղ, որտեղ հուսալքման խավարն է հոգիները սողոսկել, թող Աստվածության անճառելի լույսը պայծառ շողշողա: Փոքրոգիներին մխիթարիր, տկարներին զորացրու, կարծր – քարացած սրտերը մեղմացրու և լուսավորիր: Բժշկի՛ր Քո ախտաժետ մարդկանց, ո՜վ Ամենագորով Թագուհի: Օրհնիր մեզ բուժողների միտքն ու ձեռքերը, որ ծառայեն նրանք որպես մեր Փրկչի՝ Ամենազոր Բժիշկ Քրիստոսի նուրբ գործիք: Քեզ՝ որպես ներկա, որ մեզ հետ ես հիմա, աղոթում ենք Քո սուրբ պատկերիդ առաջ, ո՜վ Մայր Տիրուհի: Երկարիր Քո ձեռքերը՝ բալասանով և բժշկությամբ լի՝ վշտամորմոք մարդկանց Ուրախություն, տխրության մեջ՝ Մխիթարություն, որ շուտով հրաշագործ օգնությունդ ստանալով, փառավորենք Կենարար և Անբաժանելի Սուրբ Երրորդությանը. Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն, հավիտյանս հավիտենից: Ամեն:

Այլ աղոթք Տիրամորը Նրա «Ամենաթագուհի» սրբապատկերի առջև

(քաղցկեղային հիվանդությունների դեպքում)

Ո՜վ ամենաբարի, արժանահրաշ Աստվածամայր, Մայրթագուհի: Արժանի չեմ իմ հարկի տակ Քո այցելությանը, սակայն՝ որպես գթառատ Աստծո գթասեր Մայր, լսել տուր Քո երանաշնորհ բարբառը, որպեսզի առողջանա հոգիս, կազդուրվի տկարացյալ մարմինս: Քանզի ունես անհաղթելի հզորություն և խոսքդ չի անզորանում, ո՜վ Ամենաթագուհի: Դու ինձ համար թախանձագին խնդրելով՝ բարեխոսիր, որպեսզի փառա-

բանեմ Քո փառավորյալ անունը, այժմ և միշտ և անվախճան հավիտյաններում: Ամեն:

Աղոթք վշտերի եւ հիվանդության ժամանակ

Փրկի՛ր, Տեր, և ողորմիր Քո (անունը) ծառային/աղախնուն Աստվածային Ավետարանի խոսքերով, որ ընթերցվում են Քո ծառայի փրկության համար: Այրիր, մոխրացրու, Տեր, նրա բոլոր մեղքերի փշերը, և թող նրանում հաստատվի Քո շնորհը՝ բոցակիզող, մաքրագործող և ամբողջությամբ մարդուն սրբացնող՝ հանուն Հոր և Որդու և Սուրբ Հոգու: Ամեն:

(Ամեն օր հարկ է ընթերցել մեկական գլուխ Ավետարանից, իսկ ընթերցումից առաջ և հետո՝ սույն աղոթքը)

Գոհության աղոթք

(ցանկացած հիվանդությունից ապաքինվելուց հետո հետևյալ կարճ փառաբանությամբ քո գոհության աղոթքը բարձրացրու առ Տեր Աստված)

Փա՛ռք Քեզ, Տե՛ր, Հիսուս Քրիստոս, Անսկիզբ Հոր Միածին Որդի. Միակդ, որ բուժում ես մարդկանց բոլոր ախտերն ու խոցերը, փա՛ռք Քեզ, քանզի ողորմեցիր մեղավորիս և ազատեցիր իմ հիվանդությունից՝ չթողնելով, որ իմ մեղքերի պատճառով այն աճի և մեռցնի ինձ: Ամենիշխա՛ն Տեր, այսուհետ տուր ինձ Քո կամքն անձնուրաց կատարելու կարողություն հանուն իմ խոտորյալ հոգու փրկության և Քեզ՝ Անսկիզբ Հորդ և Համագոյակից Սուրբ Հոգուդ հետ միասին փառավորելու համար, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից: Ամեն:

ՀԱՅՐ ՄԻՏՐՈՖԱՆ ՍՐԵԲՌՅԱՆՍԿՈՒ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՆ ՈՒ ԱՂՈԹՔՆԵՐՆ ԻՐ ՀՈԳԵԶԱՎԱԿՆԵՐԻՆ՝ ԳԹՈՒԹՅԱՆ ՔՈՒՅՐԵՐԻՆ

(բուժքույրերին և հիվանդախնամներին հոգեպես զորացնելու և մխիթարելու համար)

Աղոթագրքի այս բաժնում մեջբերում ենք մտքեր Մարֆո – Մարիինյան գթասրտության մենաստանի գթության քույրերին հասցեագրված հոգևոր ուսուցումից, որոնք ընտրված են մենաստանի խոստովանահոր՝ հայր Միտրոֆանի «Քրիստոսի հետքերով. հոգեհոր հորդորները Մարֆո – Մարիինյան գթասրտության մենաստանի քույրերին» գրքույկից: Նրա հոգևոր խոհերն ու խորհուրդները լիովին արդիական են նաև այսօր՝ մեր բարդ և դժվար ժամանակներում: XX դարասկզբի սրբակենցաղ հոգևոր գործչի հորդորներն ուղղված են ոչ միայն մինչհեղափոխական շրջանի գթության քույրերին, այլև ժամանակակից բուժքույրերին, բուժաշխատողներին՝ ընդհանրապես, պարզապես հիվանդապահներին, խնամողներին, ի վերջո՝ բոլոր քրիստոնյաներին, ովքեր ցանկանում են ապրել ավետարանական սիրո և գթասրտության ոգով՝ ծառայելով Տիրոջը և մերձավորին:

Հայր Միտրոֆանի հորդորներին ավելացրել ենք նաև նրա գրքույկից քաղված մի քանի աղոթքներ: Լիահույս ենք, որ նրա խորհուրդներն ու աղոթքներն իրենց բարի ծառայությունը կմատուցեն հիվանդապահներին և բոլոր նրանց, ովքեր վշտահար են և մտահոգ իրենց ցավահար սիրելիներով՝ հոգեպես ամրացնելով, հուսադրելով և արիացնելով նրանց:

XX դարում ապրած նորավկա սրբերից մեկը՝ հայր Միտրոֆան Սրեբռյանսկին, ծնվել է 1870 թվականի հուլիսի 31-ին: Հոգևոր ճեմարանն ավարտելուց հետո՝ 1896 թվից հոգևոր ծառայության է անցնում Օրյոլ քաղաքի 51-րդ դրագունական Չերնիգովյան գնդում՝ որպես գնդի հոգևորական: Այս գունդը գտնվում էր մեծ իշխանուհի Ելիզավետա Ֆեոդորովնայի բարձր հովանավորության ներքո: Ռուս – ճապոնական պատերազմի տարիներին հայր Միտրոֆանը գնդի հետ մեկնում է ռազմաճակատ, որտեղ մասնակցում է ռազմական գործողություններին 1904 թվի ամռանից մինչև 1906 թվի ամառը: Այս ընթացքում ստացած իր տպավորությունները, ձեռք բերած հոգևոր փորձառությունն ու կենսիմաստությունը նա արտահայտում է իր օրագրային գրառումներում,

որոնք հրատարակվում են («Անցած ռուս – ճապոնական պատերազմի ողջ ընթացքում Հեռավոր Արևելքում ծառայած բանակային հոգևորականի օրագիրը»):

Արքայազն ամուսնուն կորցնելուց հետո մեծ իշխանուհի Ելիզավետա Ֆեոդորովնան, թողնելով բարձրաշխարհիկ հասարակության ոսկեփայլ աշխարհը, իր բազմամիլիոն կարողության մեծ մասը տրամադրում է հիմնելու «Մարֆո – Մարիինյան» գթասրտության վանքօթևանը, որի ղեկավարումն անձամբ է ստանձնում՝ ընդունելով կուսակրոնություն և դառնալով գթության միանձնուհիների մայրապետը, իսկ հայր Միտրոֆան Սրեբռյանսկին նրա կողմից ընտրվում է մենաստանի հոգևոր հայր և ծառայող քահանա: Թե որքան բարձր էր ապագա նահատակ Ելիզավետա Ֆեոդորովնան գնահատում մենաստանի խոստովանահորը, երևում է Նիկոլայ II կայսերը 1909 թվի ապրիլին գրած նրա նամակից. «Մեր գործի համար հայր Միտրոֆանը Աստծո օրհնությունն է, քանի որ նա դրեց անհրաժեշտ հիմքը... Նա ինձ ցուցաբերում է մեծագույն օգնություն և օրինակ է ծառայում իր մաքուր, անպաճույճ կյանքով՝ այնքան համեստ և հասարակ՝ Աստծո և Ուղղափառ Եկեղեցու հանդեպ իր անսահման սիրով: Նրա հետ լոկ մի քանի րոպե զրուցելով՝ տեսնում ես, որ դիմացդ կանգնած է համեստ, սրբակրոն մարդ, Աստծո մարդ, Աստծո ծառան մեր Եկեղեցում»:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո էլ, երբ բոլշևիկներն Ուրալում՝ Ալապաևսկում գազանաբար սպանեցին մենաստանի մայրիկին՝ Քրիստոսի համար նահատակության պսակն ընդունած մեծ իշխանուհուն, նաև նրա ուղեկիցներին, հայր Միտրոֆանը շարունակում էր հոգեպես և հոգևորապես սատարել, սնուցել և նեցուկ կանգնել որբացած բախտակից քույրիկներին՝ գթության քույրերին ընդհուպ մինչև 1926 թվին վանքօթևանի փակվելը: Այդժամ հասնում է Քրիստոսին հերոսաբար և անհողդողդ վկայելու, Նրա համար տառապելու հայր Միտրոֆանի հերթը: Տասնվեց տարի նա անցկացնում է ստալինյան բանտերում և ճամբարներում: Իր վերջին աքսորավայրում՝ Տվերի երկրամասի գյուղերից մեկում, հայր Միտրոֆանը հանգավ ի Տեր 1948 թվականին: 2000 թվին նա սրբադասվում է Ռուս Ուղղափառ Եկեղեցու կողմից:

Նորավկա քահանա սուրբ Միտրոֆան Սրեբռյանսկու խոհերն ու խոսքերն իր հոգեզավակներին՝ գթության քույրերին

Բացառիկ կարևորություն տալով աղոթքի գործոնին՝ հայր Միտրոֆանը ցավագարներին խնամող իր հոգեդստերը խորհուրդ է տալիս նրանց սփոփել և մխիթարել նաև աղոթքի խոսքերով, ուստի հորդորում է հիվանդախնամ քրոջն իր ամենօրյա աղոթական կանոնը կարդալ բարձրաձայն, հիվանդների ներկայությամբ. «Որպեսզի նրանք... լսեն քո կարդացած աղոթական կանոնը: Հիշիր, դա նույնպես մեծագործ բուժամիջոց է հոգով և մարմնով հիվանդ մարդկանց համար (չէ՞ որ մեղքն է ընկած նաև մարմնական հիվանդությունների հիմքում)»[1]:

...Ուրեմն, քո՛յր, աղոթի՛ր, այսինքն՝ խոսի՛ր Քրիստոսի՝ Հորդ հետ՝ որպես Նրա դուստրը, անկեղծորեն՝ այն ամենի մասին, ինչը համակում է քո էությունը: Խոսի՛ր Նրա հետ հնարավորինս հաճախ՝ ոչ միայն առավոտյան և երեկոյան աղոթական կանոնների ժամանակ, այլև խոսիր և՛ քայլելիս, և՛ նստած, և՛ պառկած, և՛ աշխատելիս...

Մարդիկ հաճախ չեն կարող ո՛չ աղոթել, ո՛չ կարդալ Սրբազան Ընթերցումը... Նրանք այդ մոռացել են կա՛մ իրենց սեփականը ուսանելուց հետո, կա՛մ ամենևին էլ չեն գիտեցել: Հիշեցրու՛ նրանց, օգնի՛ր նրանց, սովորեցրու՛ նրանց:

Փորձությունները Տիրոջ հանդեպ հավատարմության և սիրո անսասանության մեծ փորձաքարն են:

Աշխատի՛ր հաղթել մեջդ սաղմնավորվող *մեղքը: Միտք, երևակայություն, խոսք (կամ գործ)՝ սրանք են ծնվող մեղքի երեք փուլերը: Ինքդ քեզ բռնեցրու դեռ մտքի վրա և* անհապաղ *զղջման ապաշավանքով խեղդի՛ր մեղքը հենց* սկզբից. *այդ դեպքում և՛ քո երևակայությունը կլինի մաքուր, և՛ խոսքդ ու գործդ կլինեն սուրբ, խաղաղարար, արդյունաշատ:*

---

[1] Առավոտյան, երեկոյան և հիվանդի համար կանոնները տեղադրված են համապատասխանաբար 13, 21 և 31 էջերում:

Քու՛յր, հիշի՛ր, որ յուրաքանչյուր մարդ Աստծո զավակն է, իսկ քո խնամարկյալը քո եղբայրն է, Աստծո զավակը... մոլորյալ զավակը, քո հիվանդ եղբայրը. ողջ աշխարհն է հիվանդանոց։

Երջանիկ են մարդիկ, եթե հիշում են իրենց հավերժական կոչման՝ Աստվածանմանության մասին, որն արտահայտվում է հիմնականում գործնական սիրո մեջ. սա Աստծո Արքայության հիմքն է, որը, սկսվելով երկրի վրա, լիափթիթ ծաղկում կունենա համընդհանուր հարությունից հետո։ Կրկնակի երջանիկ են նրանք, ովքեր ոչ միայն անձամբ են մղվում այդ նպատակին, այլև անձնուրաց աշխատանքով ծառայում են մերձավորներին, որպեսզի նրանցում ևս արթնացնեն միմիայն Աստվածանման ապրելու գիտակցության անհրաժեշտությունը։

Քրիստոսի Խաչը կյանքն է Քրիստոսի։ Մեր Տերը, չնայած սատանայական և մարդկային չարության անհամար և անգամ կատաղի հարձակումներին, միշտ անայլայլ ծառայում էր Իր Հորը, հնազանդվում, գոհանում, սիրում էր մարդկանց նրանց տառապանքներով. Նա համբերեց անգամ մինչև մահ, այն էլ Խաչի մահը, և արդյունքում հաղթանակն է ահա՝ Հարությունը և քրիստոնեական սկզբունքների հաղթարշավն աշխարհում։ Նշանակում է՝ Խաչը խորհրդանիշն է համայն վեհագույնի, ազնվագույնի, սրբազնագույնի, գեղեցկագույնի. այն հաղթանակի խորհրդանիշն է։

Քու՛յր, նայի՛ր, որ fn *մեջ պահես շուրջդ տեսածն ու լսածը, մերձավորիդ ասա միայն այն, ինչը նրա օգտին է... Ընդհանրապես հիշի՛ր, որ կյանքում մանրունքներ չկան. դու ապրում և աշխատում ես Աստծո առաջ, Ում աչքին անգամ միտքն ու սրտի թրթիռները շատ կարևոր են։*

Քու՛յր, նաև հիշի՛ր միջոցը ուժերդ պահպանելու և չսպառելու համար, որը միջոց է խորհրդավոր և հզորազոր. դա քո ողջ հոգևոր – մարմնական էությամբ Քրիստոսի հետ ամենա-

սերտ միավորումն է Եկեղեցու խորհուրդներում և հատկապես՝ Սուրբ Հաղորդության խորհուրդում: Ուստի արժանավորապես՝ պահեցողությամբ և խոստովանությամբ նախապատրաստվելով՝ հաղորդակցվի՛ր Սրբազնագույն Պարգևներին տարեկան չորս անգամից ոչ պակաս:

Մենաստանի խոստովանահոր գրած աղոթքներն իր հոգեզավակների համար

Տեր Հիսուս Քրիստոս, հասի՛ր օգնության, փրկի՛ր, մի՛ թող կործանվել. խրատիր, պաշտպանիր, զորացրու նվազող ուժերս. ներիր բնության մեղսական հակումները. օրհնիր գործերս. օգնիր ներել բոլորին, սիրել բոլորին. փրկիր բոլորին, կարգավորիր կյանքս ըստ Քո սուրբ կամքի. գոհություն եմ հայտնում Քեզ իմ կյանքում կատարված ամեն բանի համար:

Ամենասրբուհի Տիրամայր, փրկի՛ր, օգնի՛ր. Պահապան Հրեշտակ իմ, օրհնի՛ր, օգնի՛ր. սուրբ Պանտելեյմոն (կամ պահապան սրբի անունը) *և բոլոր սրբերդ, օրհնեցեք, օգնեցեք, խրատեք ձեր հոգևոր հորդորմամբ:*

Քեզ վիրավորած յուրաքանչյուր անարգողի կամ աչքիդ առաջ մեղանչածի համար ներքուստ աղոթիր այսպես.

«Գոհություն Քեզ, Տեր, որ ինձ՝ մեղավորիս, Դու արժանացրիր նախատինք կրել Քո Անվան համար. փրկիր այս մեղավորին և դիր նրան զղջման և վերափոխման ուղու վրա. չէ՞ որ Դու նրա համար էլ ես չարչարվել»:

Ամեն առավոտ՝ քնից արթնանալիս, ասա ինքդ քեզ.

«Ես որոշել եմ գնալ Քրիստոսի՝ իմ Փրկչի հետքերով»,

հետո աղոթիր՝

Տեր, օրհնիր և օգնիր ինձ այսօր իմ ներքին և արտաքին կյանքում գործով իրականացնելու իմ այս սրտագին ցանկությունն ու պարտականությունը... գալիս եմ:

ԱՂՈԹՔՆԵՐ ԳԻՆԵՄՈԼՈՒԹՅՈՒՆԻՑ, ԹՄՐԱՄՈԼՈՒԹՅՈՒՆԻՑ ԵՎ ՄՅՈՒՍ ԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱԶԱՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Աստվածամոր «Անցամաքելի Գավաթ» սրբապատկերը

«Անցամաքելի Գավաթ» սրբապատկերում Աստվածածինը պատկերված է վեր հառած ձեռքերով. Նրա առջև Կյանքի Գավաթն է, որի մեջ Աստվածամանուկն է կանգնած: Սա սուրբ Հաղորդության Սկիհն է՝ հոգևոր ուրախության և մխիթարության անպակասաբուխ աղբյուրը: Ամենասրբուհի Տիրամայրն աղոթում է բոլոր մեղավորների համար և ազդարարում, որ յուրաքանչյուր տառապյալ կարող է ըմպել անըմպելի Գավաթից և ստանալ երկնային օգնություն և սփոփանք:

Այս սրբապատկերի առջև աղոթում են՝ խնդրելով Տիրամոր բարեխոսությունը և օգնությունը ալկոհոլիզմից, թմրամոլությունից և այլ կախվածություններից ազատվելու և առողջանալու համար[1]:

Կցուրդ

Եկե՛ք այսօր, հավատավորնե՛ր, դիմենք Ամենասուրբ Աստվածամորը՝ աստվածային և հրաշագեղ Նրա պատկերին, որ

1 Օգտվելով առիթից, ներկայացնում ենք XX դարի ամենահայտնի ծերերից (старец) մեկի, սերբ Ֆադդեյ Վիտովնիցկու խորհուրդը, թե ինչպես ձերբազատվել ծխախոտային կախվածությունից. «Անհրաժեշտ է երեք օր սնվել միայն խնձորով, ուրիշ ոչինչ: Չորրորդ օրն արդեն օրգանիզմն ինքը նիկոտինը տանել չի կարողանա, քանի որ խնձորը մաքրում է օրգանիզմը: Նաև պետք է ծխախոտը ձեռքը չվերցնելու ամուր կամք ունենալ»: (Старец Фаддей Витовницкий: «Мир и радость в Духе Святом», М. 2013, стр. 196)

լիացնում է հավատացյալների սրտերն Իր գթասրտության Երկնային, անհատնում – անըմպելի Գավաթից՝ ցույց տալով նրանց հրաշքներ, ինչը մենք տեսնելով և լսելով, զվարճանում ենք հոգևոր տոնահանդեսում և բացականչում. «Ամենագու՛թ Տիրուհի, բժշկի՛ր մեր ախտերն ու կրքերը, առողջացրու, աղոթելով Քո Որդուն, Քրիստոս Աստծուն մեր՝ մեր հոգիների փրկության համար»։

Կոնդակ

Քո որովայնը եղավ Սրբասեղան, Աստվածամա՛յր, ունենալով Երկնային Հացը՝ մեր Քրիստոս Աստծուն, Որն ուտողը չի մահանում, ինչպես ասել է ամենքին Կերակրողը։

Աղոթք Ամենասուրբ Աստվածամորը Նրա «Անցամաքելի Գավաթ» սրբապատկերի առջև

Ո՛վ կարեկից և գթառատ Տիրուհի, Քո պաշտպանությանն ենք այժմ շտապում, մի՛ անտեսիր մեր աղոթքները, այլ ողորմածորեն լսի՛ր մեզ՝ հարբեցողության ծանր ախտով տառապողների, կանանց, որդիների և մայրերի պաղատանքները և բժշկի՛ր, առողջացրու այդ ախտի պատճառով մեր մայր՝ Քրիստոսի Եկեղեցուց և իրենց փրկությունից հեռացող մեր եղբայրներին, քույրերին և ազգականներին։ Ո՛վ բարեգութ Մայր Աստուծո, հպվի՛ր նրանց սրտերին և շուտով կանգնեցրու մեղանչական անկումներից և առաջնորդիր նրանց փրկարար զսպվածությանը։ Ազաչի՛ր Քո Որդուն՝ մեր Քրիստոս Աստծուն, որպեսզի ների մեր գործած մեղքերը և չհեռացնի ողորմությունն Իր մարդկանցից, այլ ամրապնդի մեզ զգաստության և ողջախոհության մեջ։ Ընդունի՛ր, Ամենասուրբ Աստվածածին, իրենց զավակների համար արտասվող մայրերի, ամուսինների համար հեծկլտացող կանանց, բախտի քմահաճույքին թողնված մոլոր, որբուկ և խղճուկ երեխաների աղոթքները, ընդունիր մեզ բոլորիս՝ որ ծնկում ենք Քո սրբապատկերի առջև։ Եվ թող Քո աղոթքներով մեր այս հառաչանքը հասնի Ամենաբարձրյալի Գահին։ Պաշտպանիր և զերծ

պահիր մեզ թշնամու դիվահնար որսից և բոլոր դավերից։ Իսկ մեր հոգին ավանդելու ահեղ ժամին օգնիր մեզ անխոչընդոտ անցնելու չար դիվակայանների միջով, որոնք Երկնքի ներքո են, Քո աղոթքներով փրկիր մեզ հավերժական դատապարտությունից, և թող հովանի լինի մեզ Աստծո ողորմությունն անվախճան հավիտյաններում։ Ամեն։

Այլ աղոթք Ամենասուրբ Աստվածամորը Նրա «Անցամաքելի Գավաթ» սրբապատկերի առջև

Ամենաբարի մեր Թագուհի, հու՛յս մեր, Ամենասրբուհի Աստվածածին, որբերի Ապաստանատեղի և նժդեհների Հովանավորուհի, կարիքավորների օգնություն և չարաբախտների պաշտպանություն։ Դու տեսնում ես մեր դժբախտությունը, տեսնում ես մեր վիշտը. ամեն կողմից շրջապատված ենք փորձություններով, սակայն մեզ պաշտպանող և բարեխոս չունենք։ Դու Ինքդ մեզ օգնիր, քանզի անզոր ենք, Ինքդ ողորմիր՝ քանզի պանդուխտ ենք, խրատիր որպես մոլորվածների, բժշկիր և փրկիր մեզ՝ որպես անհույսների։ Չունենք այլ օգնություն, այլ պաշտպանություն, ոչ էլ մխիթարություն՝ Քեզանից բացի, ո՜վ Մայր բոլոր վշտակիրների և բեռնավորվածների։ Նայի՛ր մեզ, մեղավորներիս, աղետալի վիճակում գտնվողներիս, ա՛ռ մեզ Քո պատվական Հովանու ներքո։ Թող ազատված լինենք մեզ շրջապատող չարից և փորձություններից, առավել ևս հարբեցողությունից (թմրամոլությունից, խաղամոլությունից, ծխախոտային և այլ կախվածությունից)։ Եվ թող մի՛շտ գովաբանենք Քո սուրբ անունը։ Ամեն։

ՍՈՒՐԲ ՄԻՔԱՅԵԼ ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՂՈԹՔՆԵՐ

Սուրբ Միքայել Հրեշտակապետին ուղղված աղոթքի մասին

Կրքերն (այդ թվում գինեմոլությունը, խաղամոլությունը, թմրամոլությունը, ծխախոտային կախվածությունը) իրենցից ներկայացնում են բռնվածություն այն դիվային ուժերի կողմից, որոնք այս կամ այն չափով իշխանություն են հաստատել տվյալ մարդու վրա: Սուրբ հայրերի ուսմունքի համաձայն կրքերի առաջնապատճառը մութ, դիվային ուժն է: Օրինակ, վեցերորդ դարի եգիպտացի հայրերից սուրբ Հովհաննեսի խոսքերով՝ «Կրքերը դևեր են»: Այդ դեպքում տրամաբանական կլինի «Երկնքի տակ եղած չարի ոգիների» (Եփ. 6:12) դեմ պայքարում հայցել նրա օգնությունը, ում եկեղեցական ավանդույթն անվանում է «դևերին հալածող», ով Երկնքից գահավեժ արեց դիվագլուխ սատանային, դիմել սուրբ Միքայել Հրեշտակապետին՝ դիվական ներշնչումներից և դրդումներից և «որսացողների ցանցերից և ամենայն չարից» պաշտպանողին: Այս պատճառով Աղոթագրքում տեղ գտան սուրբ Միքայել Հրեշտակապետին՝ Երկնային Ուժերի ահեղ Զորապետին ուղղված աղոթքներ՝ օգնող ազատվելու գինեմոլության, թմրամոլության, ծխախոտային և այլ կախվածության կրքերից, ինչպես նաև ի պաշտպանություն չարի ոգիներից և իրենից՝ սատանայից:

Կցուրդ Միքայել Հրեշտակապետին

Երկնային Զորքերի Զորապե՛տ, անարժաններս անդադար քեզ ենք աղոթում, որպեսզի քո աղոթքներով դու մեզ պաշտպանես քո երկնային փառքի թևերի հովանու ներքո, պահպանես ջերմեռանդորեն քեզ պաշտողներիս, որ կանչում ենք քեզ. «Ազատի՛ր մեզ վշտերից, փորձանքներից, զի դու ես Վերին Ուժերի դասապետը»:

Կոնդակ Միքայել Հրեշտակապետին

Աստծո Զորապե՛տ, որ ծառայում ես Աստվածային փառքին, հրեշտակների դասապետ և մարդկանց ուսուցչապետ, որպես զվարթունների Զորապետ՝ խնդրի՛ր Տիրոջից մեզ համար օգտակարը և մեծ ողորմություն:

Աղոթք Միքայել Հրեշտակապետին

Սրբանկարիչ՝ Անդրոնիկ Թորոսյան

Ո՛վ սուրբ Միքայել Հրեշտակապետ, գթա մեզ՝ մեղավորներիս, որ քո բարեխոսության կարիքն ունենք, պահպանիր մեզ՝ Աստծո (անունները) ծառաներիս բոլոր տեսանելի և անտեսանելի թշնամիներից, առավել ևս՝ զորացրու և պաշտպանիր մահվան սարսափից և սատանայական անհանգիստ և հուզատագնապ ներշնչումներից և արժանացրու մեզ առանց ամոթի ներկայանալ մեր Արարչին Նրա ահեղ և արդար Դատաստանի ժամին: Ո՛վ սրբամաքուր և մեծ Միքայել Հրեշտակապետ, զորավո՛ր, մի՛ անտեսիր ներկա և գալիք դարում քո օգնությունն ու բարեխոսությունն աղորսող մեղավորներիս, այլ արժանացրու մեզ այնտեղ քեզ հետ միասին փառաբանել Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն հավիտյանս հավիտենից: Ամեն:

Մեծարում Երկնային անմարմին Դասերին

Մեծարում ենք ձեզ, Տիրոջը փառաբանող Հրեշտակապետեր և Հրեշտակներ, Քերովբեներ և Սերովբեներ և ողջ երկնագումար զորքեր:

ԱԿԱՖԻՍՏՆԵՐ

«Ակաֆիստ» բառը հունական ծագում ունի և նշանակում է «չնստուկ», այսինքն՝ աղոթական գեղոն, որը կարդում են հոտնկայս: Սա ծիսական պոեզիայի ժանր է՝ երախտագիտության արտահայտում Տեր Աստծուն, Տիրամորը կամ սրբերին: Որոշ սուրբ հայրերի կարծիքով ակաֆիստն աղոթքի լավագույն տեսակն է, քանի որ պաղատական չէ, այլ գոհաբանական, գովաբանական:

Ա. Ռուբլյով, Ս. Երրորդություն, 15-րդ դ.

Փառք Աստծուն ամեն ինչի համար[1]

Լա՞վ բան է պատահել՝ օրհնի՛ր, փառք տուր Աստծուն,
և լավը կմնա:
Վա՞տ բան է պատահել՝ օրհնի՛ր, փառք տուր Աստծուն, և
վատը կվերջանա:
Փա՞ռք Աստծուն ամեն ինչի համար:
(Սուրբ Հովհան Ոսկեբերան)

(Նաև կարդում են Սուրբ Հաղորդությունից հետո, ընկճախտի (դեպրեսիայի) և նեղությունների ժամանակ)

Կոնդակ 1

Դարերի և ժամանակների անե՛ղծ Արքա, որ Քո ձեռքում ես պահում մարդկային կյանքի բոլոր ուղիները փրկարար նախախնամությանդ ուժով, գոհանում ենք Քեզանից Քո բոլոր հայտնի և ծածուկ բարիքների, երկրային կյանքի և գալիք Քո Արքայության երկնային ուրախությունների համար: Շարունակիր տարածել Քո ողորմությունները, Տե՛ր, Քեզ երգողներիս վրա, որ կանչում ենք. փա՛ռք Քեզ, Աստված, հավիտյան:

Տուն 1

Ես աշխարհ եկա որպես անզոր, անօգնական երեխա, բայց Քո հրեշտակն իր լույս թևերը տարածեց՝ պահպանելով խանձարուրն իմ: Այդ օրվանից իմ բոլոր ուղիները լուսավորված են Քո սիրով, որն ինձ տանում է հրաշքով դեպի լույսը հավերժի: Փառավոր կերպով Քո նախախնամության առատ պարգևներն առաջին իսկ օրվանից երևացին և տեղում են մինչև օրս: Գոհաբանում և օրհներգում եմ բոլոր Քեզ ճանաչողների հետ.

Փա՛ռք Քեզ՝ ինձ կյանքի կոչողիդ: Փա՛ռք Քեզ՝ Քո տիեզերքի գեղեցկությունն ինձ բացահայտողիդ: Փա՛ռք Քեզ՝ երկինքն ու երկիրը որպես իմաստության հավերժական գիրք իմ առջև

[1] «Փառք Աստծուն ամեն ինչի համար» գոհաբանական ակաֆիստը գրվել է հետհեղափոխական դժնդակ տարիներին եկեղեցական հայտնի գործիչ միտրոպոլիտ Տրիֆոն Տուրկեստանովի (1861-1934թթ) կողմից

բացողիդ։ Փա՜ռք այս անցողիկ աշխարհում Քո հավերժության-նը։ Փա՜ռք Քեզ հայտնի և անհայտ շնորհներիդ համար։ Փա՜ռք Քեզ իմ ամեն մի թախծալից հոգոցի համար։ Փա՜ռք Քեզ կյանքում յուրաքանչյուր քայլի համար, ուրախության յուրաքանչյուր ակնթարթի համար։ Փա՜ռք Քեզ, Աստված, հավիտյան։

Կոնդակ 2

Տեր իմ, որքա՜ն լավ է հյուր լինել Քեզ մոտ. ահա ծաղկաբույր քամին, երկինք մխրճվող լեռները, ճաճանչների ոսկին և ամպերի թեթևությունն արտացոլող ջրերի անեզր հայելին։ Ողջ բնությունն է գողտրիկ մրմնջում, ամեն ինչ լի է գորովանքով. Քո սիրո կնիքն են կրում և՛ թռչունները, և՛ գազանները։ Օրհնյալ է մայր հողն առ հավերժական հայրենիքը թախիծ ծնող իր վաղանցուկ գեղեցկությամբ, որտեղ անեղծ – անանց գեղեցկության մեջ հնչում է. Ալելուիա՜։

Տուն 2

Դու ինձ մտցրիր կյանք՝ որպես թռվիչ մի դրախտ։ Մենք տեսանք երկինքն՝ ինչպես խոր կապույտ գավաթ, որի լազուրում ցնծում էին թռչունները, մենք լսեցինք անտառի անդորր զվարթությամբ խաղաղ սոսափյունը և ջրերի քաղցրահունչ նվագը, մենք ուտում էինք անուշաբույր և անուշահամ պտուղներ և բուրյան մեղր։ Հիասքանչ է Քեզ մոտ՝ երկրի վրա, երջանկություն է հյուրընկալվել Քեզ մոտ։

Փա՜ռք Քեզ կյանք – տոնախմբության համար։ Փա՜ռք Քեզ հովտաշուշանների և վարդերի խնկաբուրման համար։ Փա՜ռք Քեզ պտուղների և մրգերի համադամ բազմապիսության համար։ Փա՜ռք Քեզ վաղորդյան ցողի ադամանդյա ցոլարձակման համար։ Փա՜ռք Քեզ լուսազվարթ արթնացումի ժպիտի համար։ Փա՜ռք Քեզ երկրային կյանքի համար, որ երկնայինի նախավետավորն է։ Փա՜ռք Քեզ, Աստված, հավիտյան։

Կոնդակ 3

Անգամ նրբին ծաղիկը՝ ամեն մի ծաղիկ, Սուրբ Հոգու զորությամբ է անուշաբուրում՝ ապրում. նրա մեղմ, հանգստա-

բեր բուրմունքը, երփներանգ գույների քնքշությունը բացահայտում են Տիեզերական գեղեցկության արտացոլումը փոքրի մեջ: Գո՛վք, փա՛ռք ու պատիվ կյանքն արարող Աստծուն, Ով սփռում է մարգագետիններն ինչպես ծաղկագորգ, պսակում է դաշտերը հասկերի ոսկով և տերեփուկների լաջվարդով, իսկ հոգիները՝ հայեցման բերկրանքով: Ցնծացե՛ք և երգե՛ք Նրան. Ալելուիա՛:

Տուն 3

Որքա՛ն հիասքանչ ես, Տեր, գարնան հաղթարշավում, երբ հառնում են բոլոր արարածներդ և համերաշխ, հազար ու մի դաշն եղանակով ցնծուն կանչում են Քեզ. Դու ես կյանքի Աղբյուրը, Դու՝ մահին Հաղթողը: Ահա ձգվում են դաշտերն ու անտառները լուսնի լույսի տակ՝ ճերմակ պսակազգեստներում՝ սոխակների երգով արբուն: Ողջ երկիրն է Քո հարսը. նա սպասում է իր Անապական Փեսային: Եթե Դու խոտին անգամ տալիս ես այսպիսի զարդ մարմին, ապա ինչպե՛ս կվերափոխես մեզ հարության գալիք դարում, ինչպե՛ս կշողան մեր մարմինները, ինչպե՛ս կփայլեն մեր հոգիները:

Փա՛ռք Քեզ, որ երկրի մթին խորքերից դուրս ես հանում գունագեղ գույներ, պես - պես համեր և բույրեր: Փա՛ռք Քեզ ողջ բնության գորովանքի և քնքշանքի համար: Փա՛ռք Քեզ մեզ բյուրավոր արարածներովդ շրջապատելու համար: Փա՛ռք Քեզ իմաստությանդ անհունության համար, որի դրոշմն աշխարհում ամենուր է: Փա՛ռք Քեզ, Տեր, սրտաթրթիռ ակնածությամբ համբուրում եմ ոտնահետքերը Քո անտեսանելի: Փա՛ռք Քեզ, որ վառում ես անվախճան կյանքի վառ լույսն առջևում՝ իբրև փարոս: Փա՛ռք Քեզ անմահ և կատարյալ, անեղծանելի գեղեցկության հույսի համար: Փա՛ռք Քեզ, Աստված, հավիտյան:

Կոնդակ 4

Դու բերկրությամբ ես լցնում մտքով ճախրողներին, ովքեր Քեզ հետ են: Որքա՛ն կենսատու է Քո սուրբ խոսքը. յուղից էլ փափուկ և մեղրախորսխից քաղցր է Քեզ հետ խոսելը: Թևա-

վորում և կյանք է տալիս Քեզ ուղղված աղոթքը. այն խինդ ու դողդոջով է լցնում սիրտը, և որքա՜ն վայելչագեղ ու բանական է դառնում այդժամ բնությունը, ողջ կյանքն ինքը: Որտեղ Դու չկաս, այնտեղ դատարկություն է: Որտեղ որ Դու ես՝ այնտեղ հոգու հարստությունն է, այնտեղ է, որ կենդանի ելևէջներով հնչում է երգը. Ալելուիա՜:

Տուն 4

Երբ մայրամուտն է իջնում երկրի վրա, և տիրում է գիշերային քնի անդորրն ու հանգչող օրվա լռությունը, ես նշմարում եմ Քո ապարանքը վերջալույսի շողացող ամպե պալատների ոսկեստվեր պատկերում: Կրակն ու ծիրանին, ոսկին և լաջվարդը, որոնք մարգարեաբար պատմում են Քո երկնային կացարանների անպատմելի գեղեցկության մասին, հանդիսավոր կերպով կանչում են՝ գնա՜նք, գնա՜նք Հոր մոտ:

Փա՜ռք Քեզ երեկոյան խաղաղական ժամին: Փա՜ռք քեզ՝ աշխարհին մեծ հանգստություն Պարգևողիդ: Փա՜ռք Քեզ մայր մտնող արևի հրաժեշտի ճառագայթի համար: Փա՜ռք Քեզ անխռով քնի հանգստի համար: Փա՜ռք Քեզ՝ մթության մեջ Քո ողորմության շնորհի համար, երբ այդքա՜ն հեռու է ողջ աշխարհը: Փա՜ռք Քեզ խռովյալ հոգու գորովալից աղոթքների համար: Փա՜ռք Քեզ հարատև և անմայրամուտ օրվա ուրախությանը խոստացած արթնացման համար: Փա՜ռք Քեզ, Աստված, հավիտյան:

Կոնդակ 5

Նրա համար, ում սրտում վառ է Քո լույսի կանթեղը, սարսափելի չեն կյանքի փոթորիկները: Թեկուզ և ամենուր խավարշտին, զզվելի եղանակ, սարսափ ու քամու ոռնոց, միևնույն է՝ նրա հոգում միշտ անդորր է և լույս. այնտեղ Քրիստո՜սն է: Ու սիրտը երգում է. Ալելուիա՜:

Տուն 5

Ահա տեսնում եմ Քո երկինքը, ուր փայլում են աստղերը: Օ՜հ, որքա՜ն հարուստ ես Դու, որքա՜ն շատ է Քո լույսը: Հավերժությունն է ինձ նայում հեռավոր լուսատուների լույս աչքե-

րով. ես այնքա՜ն փոքր եմ և աննշան, սակայն Տերն ինձ հետ է, Նրա հոգատար աչը պահպանում է ինձ միշտ և ամենուր։

Փա՜ռք Քեզ իմ հանդեպ անդադար հոգատարության համար։ Փա՜ռք Քեզ մարդկանց հետ նախախնամ հանդիպումների համար։ Փա՜ռք Քեզ հարազատների սիրո և ընկերների նվիրվածության համար։ Փա՜ռք Քեզ կենդանիների հեզության համար, որ ծառայում են մեզ։ Փա՜ռք Քեզ կյանքիս լուսավոր րոպեների համար։ Փա՜ռք Քեզ սրտի պարզ ուրախությունների համար։ Փա՜ռք Քեզ ապրելու, շարժվելու և ըմբռնելու երջանկության համար։ Փա՜ռք Քեզ, Աստված, հավիտյան։

Կոնդակ 6

Որքա՜ն ամեհի ես, մոտիկ ես, հզոր, երբ հուժկու մոտենում է ամպրոպը. այդժամ երևում է Քո հզոր աչը կայծակի կուրացուցիչ աղեղում. հրաշալի է Քո մեծությունը, Տե՜ր։ Տիրոջ ձայնը դաշտերի վրա է և անտառի աղմուկում, Տիրոջ ձայնը ամպրոպի ճայթյունի և անձրևների տեղատարափի մեջ է, Տիրոջ ձայնը անսահման ջրերի վրա է։ Քո գովքը հրաշունչ լեռների դղրդյունում է։ Դու ցնցում – թափահարում ես երկիրը, ինչպես հանդերձ։ Մինչ երկինք ես հանում փրփրաբաշ ալիքները։ Փա՜ռք մարդկային գոռոզությունը խոնարհեցնողիդ, որ կորզում ես ապաշխարանքի աղաղակը՝ Ալելուիա՜։

Տուն 6

Ինչպես շանթի փայլատակումից խնջույքի ապարանքն է լուսավորվում, և հետո աղոտ ու խեղճ են թվում կանթեղների լույսերը, այդպես էլ Դու էիր հանկարծահաս լուսավորում հոգին իմ կյանքիս մեծագույն ուրախության պահերին։ Եվ Քո կայծակնային լույսից հետո որքա՜ն անգույն, խամրած և անիրական էին թվում կյանքի պալատի սենյակները։ Հոգիս տենչում էր Քեզ։

Փա՜ռք Քեզ, որ մարդկային բարձրագույն երազանքի սահմանն ու եզերքն ես։ Փա՜ռք Քեզ՝ Քեզ ճանաչելու մեր անհագուրդ ծարավի համար։ Փա՜ռք Քեզ՝ երկրայինով չբավարարվելու Քո շնորհի համար։ Փա՜ռք Քեզ՝ մեզ նրբին շողերովդ

պարուրելու համար։ Փա՛ռք Քեզ՝ խավարի ոգիների իշխանությունը խորտակողիդ, որ կործանման ես դատապարտում ամենայն չարիք։ Փա՛ռք Քեզ հայտնություններիդ համար, Քեզ զգալու և Քեզ հետ ապրելու երջանկության համար։ Փա՛ռք Քեզ, Աստված, հավիտյան։

Կոնդակ 7

Ձայների և հնչյունների հիահրաշ ներդաշնակությունում ճանաչում ենք Քո ձայնը։ Դու բացում ես մեր առջև գալիք դրախտի նախադռները, բացահայտում երգեցողության զմայլ մեղեդայնությունը ներդաշն նվագներում, երաժշտական գույների վեհությունում, ստեղծագործման ադամանդափայլ ներշնչանքում։ Այն ամենը, ինչ ճշմարտապես գեղեցիկ է, զորեղ կանչով Քեզ է բերում հոգիները՝ ստիպելով խանդավառ երգել. Ալելուիա՛։

Տուն 7

Սուրբ Հոգու ներշնչանքով ես Դու պայծառացնում նկարիչների, բանաստեղծների և գիտության հանճարների միտքը։ Վերին ներգործման զորությամբ՝ գերգիտակցությամբ են նրանք մարգարեաբար բացահայտում Քո օրենքները՝ մեզ ցույց տալով Քո արարչական իմաստության անսահման խորությունը։ Նրանց գործերն ակամա Քո մասին են պատմում. օ՛հ, որքա՛ն մեծ ես Դու։

Փա՛ռք Քեզ, անհայտ – անբացատրելի ուժը տիեզերքի օրինաչափություններում Երևացնողիդ։ Փա՛ռք Քեզ, ողջ բնությունը լեցուն է Քո կեցության օրենքներով։ Փա՛ռք Քեզ այն ամենի համար, ինչը տրվեց մեզ Քո բարեգթությամբ։ Փա՛ռք Քեզ ամենի համար, որ ծածկեցիր մեզնից Քո իմաստությամբ։ Փա՛ռք Քեզ մարդկային մտքի հանճարեղության համար։ Փա՛ռք Քեզ աշխատանքի կենսահաստատ ուժի համար։ Փա՛ռք Քեզ մեր բոցավառ ներշնչանքի հրե լեզվակների համար։ Փա՛ռք Քեզ, Աստված, հավիտյան։

Կոնդակ 8

Որքա՜ն մոտիկ ես մեզ հիվանդության օրերին. Դու Ինքդ ես այցելում հիվանդներին, Ինքդ հոգատար հակվում տառապանքի մահճին... ու սիրտը զրուցում է Քեզ հետ: Ծանր վշտերի և տառապանքի ժամանակ խաղաղությանդ լույսն ես զեղում մեր հոգիներում և հանդարտեցնում՝ ուղարկելով Քո անսպասելի օգնությունը: Դու մխիթարում ես, Դու սփոփում, Դու Ինքդ Սերն ես՝ փորձող և փրկող, և Քեզ ենք երգում. Ալելուիա՛:

Տուն 8

Երբ մանուկ հասակում առաջին անգամ ես գիտակցորեն կանչեցի Քեզ, կատարեցիր Դու իմ աղոթքը և հոգիս լցրիր օրհնյալ խաղաղությամբ: Այդժամ ես հասկացա, որ Դու բարի ես, և երանելի են Քեզ ձգտողները: Ես շարունակեցի Քեզ կանչել նորից ու նորից և հիմա էլ կանչում եմ.

Փա՜ռք Քեզ՝ իղձերս ու երազանքներս ի բարի Իրականացնողիդ: Փա՜ռք Քեզ՝ զօր ու գիշեր ինձ արթուն Հսկողիդ: Փա՜ռք Քեզ՝ վշտերն ու կորուստները ժամանակի ամոքիչ ընթացքով Բժշկողիդ: Փա՜ռք Քեզ. Քեզ հետ չկան անհույս կորուստներ, Դու շնորհում ես հավերժական կյանք բոլորին: Փա՜ռք Քեզ, որ օժտել ես անմահությամբ ամենայն վեհն ու բարին և խոստացել փափագելի հանդիպումը մահվամբ ննջածների հետ: Փա՜ռք Քեզ, Աստված, հավիտյան:

Կոնդակ 9

Ինչի՞ց է, որ տոն օրերին ողջ բնությունն է ժպտում: Ինչի՞ց է այդ ժամանակ սիրտը լցվում երկրային ոչնչի հետ չհամեմատվող հիահրաշ թեթևությամբ, և խորանի, տաճարի օդը դառնում է շողարձակ: Դա զեփյուռն է Քո շնորհի, արտացոլքն է Թաբորյան լույսի. այդժամ երկինքն ու երկիրն են գովերգում. Ալելուիա՛:

Տուն 9

Երբ Դու ինձ ոգեշնչեցիր ծառայելու մերձավորին, իսկ հոգիս խոնարհեցմամբ լուսավորեցիր, Քո անհամար շողերից

մեկը հասավ իմ սրտին. ու սիրտս դարձավ լուսավառ, ինչպես հրաշեկ երկաթ կրակում: Ես տեսա Քո խորհրդավոր, անընկալելի Դեմքը:

Փա՜ռք Քեզ, որ ազնվացնում ես մեր կյանքը բարի գործերով: Փա՜ռք Քեզ. Քո ամեն մի պատգամը շաղախված է անպատում քաղցրությամբ: Փա՜ռք Քեզ, որ հաստատորեն ներկա ես այնտեղ, որտեղ խնկաբուրում է գթասրտությունը: Փա՜ռք Քեզ՝ անհաջողություն և վիշտ մեզ Ուղարկողիդ, որպեսզի մենք նրբանկատ և զգայուն լինենք մյուսների տառապանքի նկատմամբ: Փա՜ռք Քեզ, որ հաստատել ես մեծագույն պարգևը բարու բացարձակ ինքնարժևորմամբ: Փա՜ռք Քեզ՝ բարձր խոյանքն Ընդունողիդ: Փա՜ռք Քեզ՝ սերն ամենայն երկրայինից և երկնայինից էլ վեր Բարձրացնողիդ: Փա՜ռք Քեզ, Աստված, հավիտյան:

Կոնդակ 10

Այն, ինչ քայքայվել - փոշիացել է, անհնար է վերականգնել, սակայն Դու վերականգնում ես նրանց, ում խիղճն այրվելով մոխրացել է: Անհուսորեն ապականված հոգիներին, Տեր, Դու վերադարձնում ես անդառնալի կորցրած նախկին գեղեցկությունը: Քեզ հետ չկա անուղղելի ոչ մի բան: Դու ամբողջովին Սեր ես: Դու Արարիչն ես ու վերականգնող Նորոգիչը: Քեզ գովերգում ենք. Ալելուիա՜:

Տուն 10

Աստված իմ, Դու գիտես, թե ինչպես հպարտությունը զատեց – հեռացրեց Քեզնից լուսաստղ անուն հրեշտակին. փրկի՛ր ինձ, Տե՛ր, շնորհիդ զորությամբ, թույլ մի տուր ընկնել՝ հեռանալ Քեզանից, մի թող տարակուսել: Նրբացրու լսողությունս, որպեսզի կյանքիս բոլոր րոպեներին կարողանամ լսել Քո խորհրդավոր ձայնը և աղոթել Ամենագո Աստծուդ.

Փա՜ռք Քեզ հանգամանքների նախախնամ համընթացքի համար: Փա՜ռք Քեզ խաղաղ, երջանիկ նախազգացումների համար: Փա՜ռք Քեզ մեր միտքը խորհրդավոր ձայնիդ ուղղելու համար: Փա՜ռք Քեզ՝ քնած և արթմնի մեզ հայտնութ-

յուններ տալու համար։ Փա՜ռք Քեզ՝ անպտուղ – անօգտակար մտադրությունները խափանողիդ։ Փա՜ռք Քեզ՝ տառապանքներով մեզ կրքերի շմոլքից Սթափեցնողիդ։ Փա՜ռք Քեզ՝ սրտի գոռոզությունը փրկագործաբար Խոնարհեցնողիդ։ Փա՜ռք Քեզ, Աստված, հավիտյան։

Կոնդակ 11

Սառցե շղթա կազմող դարերի միջով ես զգում եմ Քո Աստվածային շնչի ջերմությունը, լսում եմ Արյան շիթը։ Դու արդեն մոտիկ ես. ժամանակի շղթան մասնատվել է։ Տեսնում եմ Քո խաչը՝ հանուն ինձ է այն։ Խաչի առջև պապանձվում է ոգիս՝ այն հող է ու փոշի. այստեղ սիրո և փրկության հաղթությունն է, այստեղ դարեդար գովքն անլռելի է. Ալելուիա՜։

Տուն 11

Երանելի է նա, ով կընթրի Քո Երկնային Արքայությունում, սակայն Դու արդեն երկրի վրա ինձ հաղորդակից դարձրիր այդ երանությանը։ Քանի - քանի անգամ ես Դու երկարել ինձ Աստվածային ձեռքերդ և տվել Քո Մարմինն ու Արյունը, և ես՝ բազմամեղս, ընդունել եմ այդ Սրբությունը՝ զգալով Քո Սերը՝ անճառելի, գերբնական։

Փա՜ռք Քեզ շնորհիդ անըմբռնելի կենսատու ուժի համար։ Փա՜ռք Քեզ, Դու հաստատեցիր Քո Եկեղեցին՝ որպես խաղաղ ապաստարան տանջահար այս աշխարհին։ Փա՜ռք Քեզ, որ վերածնում ես մեզ մկրտության կենաց ջրերով։ Փա՜ռք Քեզ, Դու ապաշխարողներին վերադարձնում ես անարատ շուշանների ձյունե մաքրությունը։ Փա՜ռք Քեզ՝ անհուն է Քո ներողամտությունը։ Փա՜ռք Քեզ Կենաց Գավաթի և անվախճան ուրախության Հացի համար։ Փա՜ռք Քեզ՝ մեզ երկինք՝ առ Քեզ Բարձրացնողիդ։ Փա՜ռք Քեզ, Աստված, հավիտյան։

Կոնդակ 12

Շատ անգամ տեսել եմ Քո փառքի արտացոլքը մահացողների դեմքերին։ Ինչպիսի՜ աներկրային գեղեցկություն և ուրախություն էին նրանք ճառագում, որքա՜ն եթերային, անհո-

ղեղեն էին նրանց դիմագծերը՝ վաստակած երջանկության և խաղաղության երկնահամ բերկրանքն էր դա. լռությամբ էին նրանք Քեզ կանչում: Մահվան բոպեին իմ հոգին էլ լուսավորիր, Տե՛ր, որ կանչում է. Ալելուիա՛:

Տուն 12

Ի՞նչ է գովքն իմ Քո առջև: Ես չեմ լսել քերովբեների երգը՝ դա վեհագույն հոգիների շնորհն է, բայց ես գիտեմ, թե ինչպես է Քեզ գովերգում բնությունը: Ես տեսել եմ, թե ինչպես է ձմեռային գիշերվա լուսնային անդորրում ճերմակազգեստ ողջ երկիրը լռելյայն Քեզ աղոթում՝ շողշողալով ձյան ալմաստներով: Տեսել եմ, թե ինչպես են Քեզնով ուրախանում ծագող արևը և թռչունների երամներն ուրախ աղմուկով զրնգացնում Քո փառքը: Լսել եմ, թե ի՛նչ խորհրդավորությամբ է անտառը շրշում Քո մասին, քամիները երգում, ջրերը կարկաչում, թե ինչպես են անվերջ տարածության մեջ Քո մասին պատմում լուսաշավիղ բույլ աստղերն իրենց կուռ ուղեծրով: Ի՛նչ է իմ գովերգը: Բնությունը հլու- հնազանդ է, իսկ ես՝ ոչ. քանի դեռ ապրում եմ, տեսնում եմ Քո սերը, ցանկանում գոհանալ, աղոթել, գոչել.

Փա՛ռք Քեզ՝ նորօրյա լույսը Բացողիդ: Փա՛ռք Քեզ, որ մեզ սիրեցիր անհուն, անսահման, Աստվածային սիրով: Փա՛ռք Քեզ, քանզի Քո լույսի, լուսներամ հրեշտակների ու սրբերի հովանու ներքո ենք: Փա՛ռք Քեզ, Ամենասու՛րբ Հայր, մեզ պատգամել ես Քո Արքայությունը: Փա՛ռք Քեզ, Ամենաքավի՛չ Որդի, մեր առջև բացել ես փրկության ճանապարհը: Փա՛ռք Քեզ, Սուրբ Հոգի, Կենսաբուխ Արեգա՛կդ գալիք դարի: Փա՛ռք Քեզ, ամեն ինչի համար փառք Քեզ, Ո՛վ Աստվածային Ամենաբարի Երրորդություն: Փա՛ռք Քեզ, Աստված, հավիտյան:

Կոնդակ 13

Օ՜ Ամենաբարի և Կենսապարգև Սուրբ Երրորդություն. ընդունի՛ր մեր երախտագիտությունը Քո բոլոր ողորմություններին համար և դարձրու մեզ արժանի Քո բարեգութ շնորհներին, որպեսզի, բազմապատկելով մեզ վստահված տաղանդ-

ները, մտնենք մեր Տիրոջ հավիտենական ուրախության մեջ հաղթական գովերգով. Ալելուիա՛։

(Այս կոնդակը կարդացվում է երեք անգամ)

Տուն 1

(Կարդացվում է նորից)

Ես աշխարհ եկա որպես անզոր, անօգնական երեխա, բայց Քո հրեշտակն իր լույս թևերը տարածեց՝ պահպանելով խանձարուրն իմ։ Այդ օրվանից իմ բոլոր ուղիները լուսավորված են Քո սիրով, որն ինձ տանում է հրաշքով դեպի լույսը հավերժի։ Փառավոր կերպով Քո նախախնամության առատ պարգևներն առաջին իսկ օրվանից երևացին և տեղում են մինչև օրս։ Գոհաբանում և օրհներգում եմ բոլոր Քեզ ճանաչողների հետ.

Փա՛ռք Քեզ՝ ինձ կյանքի կոչողիդ։ Փա՛ռք Քեզ՝ Քո տիեզերքի գեղեցկությունն ինձ բացահայտողիդ։ Փա՛ռք Քեզ՝ երկինքն ու երկիրը որպես իմաստության հավերժական գիրք իմ առջև բացողիդ։ Փա՛ռք այս անցողիկ աշխարհում Քո հավերժությանը։ Փա՛ռք Քեզ հայտնի և անհայտ շնորհներիդ համար։ Փա՛ռք Քեզ իմ ամեն մի թախծալից հոգոցի համար։ Փա՛ռք Քեզ կյանքում յուրաքանչյուր քայլի համար, ուրախության յուրաքանչյուր ակնթարթի համար։ Փա՛ռք Քեզ, Աստված, հավիտյան։

Կոնդակ 1

(Կարդացվում է նորից)

Դարերի և ժամանակների անե՛ղծ Արքա, որ Քո ձեռքում ես պահում մարդկային կյանքի բոլոր ուղիները փրկարար նախախնամությանդ ուժով, գոհանում ենք Քեզանից Քո բոլոր հայտնի և ծածուկ բարիքների, երկրային կյանքի և գալիք Քո Արքայության երկնային ուրախությունների համար։ Շարունակիր տարածել Քո ողորմությունները, Տե՛ր, Քեզ երգողներիս վրա, որ կանչում ենք. փա՛ռք Քեզ, Աստված, հավիտյան։

Աղոթք

Տեր Հիսուս Քրիստոս, Աստված մեր, որ ամենառատ գթությունների և պարգևների Աստվածն ես, Քո գթասրտությունն անսահման - անչափելի է և մարդասիրությունդ՝ անհուն օվկիանոս: Ընկնելով Քո մեծության առաջ, մենք ահով ու դողով՝ որպես անարժան ծառաներ, Քեզ ենք բերում մեր սրտի երախտագիտությունը Քո բոլոր շնորհների համար: Որպես Ամենակալ և Շնորհապարգև Տիրոջ՝ Քեզ ենք մենք փառաբանում, գովերգում և մեծարում և ծունկ խոնարհելով՝ նորից գոհանում: Խոնարհաբար Քո անճառելի գութն ենք թախանձում, Տե՛ր, աղաչելով. ինչպես Դու այժմ ընդունեցիր մեր աղերսներն ու կատարեցիր դրանք, այդպես էլ ապագայում տուր մեզ այրվել Քո, մերձավորի և ամենայն առաքինությունների հանդեպ սիրո կրակով, և արժանի արա մեզ հանապազ գոհանալ և փառաբանել Քեզ Անսկիզբ Հորդ և Բարի և Համագո Ամենասուրբ Հոգուդ հետ միասին: Ամեն:

ԱԿԱՖԻՍՏ ԱՄԵՆԱՔԱՂՑՐ ՀԻՍՈՒՍԻՆ[1]

(Կարդում են նաև Սուրբ Հաղորդությունից առաջ, ընկճախտի (դեպրեսիայի), հուսալքության և նեղությունների ժամանակ)

Վարդգես Սուրենյանց, Անձեռակերտ Վարշամակ

Կոնդակ 1

Պաշտպա՛ն իմ Զորապետ և Տեր, դժոխքին Հաղթող, Քո ստեղծածն եմ ու ծառան, հավիտենական մահից փրկված, Քեզ եմ ձոնում գովերգեր։ Անճառելի գթությամբդ փրկի՛ր բոլոր փորձանքներից, որ կանչում եմ Քեզ. Հիսո՛ւս, Որդի Աստուծո, ողորմի՛ր ինձ։

Տուն 1

Հրեշտակների Արարի՛չ և երկնային Զորաց Տեր, բաց իմ տկար միտքն ու լեզուն Քո ամենասուրբ Անվան գովաբանութ-

[1] «Ամենաքաղցր Հիսուսին» ակաֆիստի հնագույն ձեռագիրը թվագրվում է XIII դարով, սլավոներեն թարգմանությունը կատարվել է XIV դարում։ Այս գեղեցիկ ստեղծագործության հեղինակն անհայտ է։ Ենթադրվում է, որ այն ստեղծվել է XIII դարի վերջում և XIV դարի սկզբում Աթոս լեռան վանականների միջավայրում։

յանը, ինչպես անցյալում բացեցիր խուլ և համրի լսողությունն ու լեզուն, որը խոսելով՝ բացականչեց.

Ամենասքանչելի՛ Հիսուս, զարմա՛նք Հրեշտակների, ամենազորե՛ղ Հիսուս, նախահայրերի ազատագրում: Ամենաքա՛ղցր Հիսուս, նախապապերի մեծարում, ամենափառավո՛ր Հիսուս, հավատարիմների զորացում: Ամենասիրելի՛ Հիսուս, մարգարեների իրականացում, ամենահրաշալի՛ Հիսուս, նահատակների զորություն: Ամենախաղա՛ղ Հիսուս, վանականների ուրախություն, ամենողո՛րմ Հիսուս, երեցների քաղցրություն: Ամենագու՛թ Հիսուս, պահեցողների ժուժկալություն, ամենաքաղցրալի՛ց Հիսուս, սրբացած վանականների բերկրանք: Ամենասու՛րբ Հիսուս, կույսերի ողջախոհություն, հավերժահավե՛տ Հիսուս, մեղավորների փրկություն: Հիսո՛ւս, Որդի Աստուծո, ողորմի՛ր ինձ:

Կոնդակ 2

Տեսնելով այրի կնոջը աղիողորմ լացելիս, որի որդուն տանում էին թաղելու, խղճահարվելով՝ Դու կենդանացրիր նրան, Տե՛ր. նույնպես ինձ գթա, Մարդասե՛ր, և մեղքերով մեռած հոգիս կենդանացրու, որ կանչում է. Ալելուիա՛:

Տուն 2

Ցանկանալով ըմբռնել ճանաչողությանն անհասանելին՝ Փիլիպոսը խնդրեց. «Տե՛ր, ցույց տուր մեզ Հորը»: Իսկ Դու ասացիր. «Այսքան ժամանակ Ինձ հետ լինելով՝ մի՞թե չհասկացար, որ Հայրն Իմ մեջ է, և Ես՝ Հոր մեջ»: Ուստի, Անհա՛ս, վախով Քեզ եմ կանչում.

Հիսուս, անսկի՛զբ Աստված: Հիսուս, ամենազորե՛ղ Արքա: Հիսուս, երկայնամի՛տ Տիրակալ, Հիսուս, Փրկի՛չ ամենագութ: Հիսուս, ամենաբարի՛ իմ Պաշտպան, Հիսուս, մաքրիր իմ մեղքերը: Հիսուս, հեռացրու իմ անօրենությունները, Հիսուս, վերացրու իմ անարդարությունները: Հիսուս, Հու՛յս իմ, մի թող ինձ, Հիսուս, Օգնակա՛ն իմ, մի մերժիր ինձ: Հիսուս, Արարի՛չ իմ, մի մոռացիր ինձ: Հիսուս, Հովի՛վդ իմ, մի կործանիր ինձ: Հիսո՛ւս, Որդի Աստուծո, ողորմի՛ր ինձ:

Կոնդակ 3

Այն ի վերուստ տրված զորությամբ, որով զորացրիր Երուսաղեմում սպասող առաքյալներին, Հիսու՛ս, զորացրու և ինձ, պարուրիր Քո Սուրբ Հոգու ջերմությամբ, որ մերկ եմ բարի գործերից, և տուր ինձ սիրով երգել քեզ. Ալելուիա՛։

Տուն 3

Քո անչափ գթասրտությամբ, Հիսու՛ս, կանչեցիր մաքսավորներին, մեղավորներին և անհավատներին. ինձ էլ մի անտեսիր այժմ, որ նման եմ նրանց, այլ որպես թանկարժեք մյուռոն ընդունիր այս երգը.

Հիսուս, անպարտելի՛ Զորություն, Հիսուս, անհատնո՛ւմ Գթասրտություն, Հիսուս, սրբալու՛յս Գեղեցկություն, Հիսուս, Սե՛ր անճառելի։ Հիսուս, Որդի Կենդանի Աստծո, Հիսուս, ողորմի՛ր ինձ՝ մեղավորիս։ Հիսուս, լսի՛ր ինձ, որ անօրենության մեջ եմ հղացել, Հիսուս, մաքրի՛ր ինձ, որ մեղքերի մեջ եմ ծնվել։ Հիսուս, սովորեցրու ինձ՝ անպիտանիս։ Հիսուս, լուսավորիր ինձ՝ խավարյալիս։ Հիսուս, մաքրիր ինձ՝ գարշելուս։ Հիսուս, հանիր ինձ՝ ճահճաթավալ անառակիս։ Հիսո՛ւս, Որդի Աստուծո, ողորմի՛ր ինձ։

Կոնդակ 4

Կասկածալից մտքերի փոթորիկն իր մեջ կրելով՝ Պետրոսն ընկղմվեց, բայց, տեսնելով Քեզ ջրերի վրայով քայլելիս, Հիսուս, որպես ճշմարիտ Աստված ճանաչեց Քեզ և փրկության ձեռքը ստանալով՝ գոչեց. Ալելուիա՛։

Տուն 4

Ճանապարհին կույրը, լսելով, որ Դու անցնում ես կողքով, ձայնեց. «Հիսուս, Դավթի Որդի, ողորմի՛ր ինձ»։ Եվ նրան կանչելով, Տեր, բացեցիր նրա աչքերը։ Քո ողորմությամբ լուսավորիր նաև սրտիս հոգևոր աչքերը, որ կանչում եմ քեզ և գովերգում.

Հիսո՛ւս, Երկնայինների Արարիչ, Հիսո՛ւս, երկրայիններիս Քավիչ։ Հիսո՛ւս, դժոխքի Ավերիչ, Հիսո՛ւս, արարածների Հաստիչ։ Հիսո՛ւս, հոգուս Մխիթարիչ, Հիսո՛ւս, մտքիս Լուսավորիչ։

Հիսո՛ւս, սրտիս ուրախություն։ Հիսո՛ւս, մարմնիս կենդանություն։ Հիսուս, Փրկիչ իմ, փրկի՛ր ինձ։ Հիսուս, Լույս իմ, լուսավորի՛ր ինձ։ Հիսուս, պես-պես տանջանքներից զե՛րծ պահիր ինձ։ Հիսուս, փրկի՛ր անարժանիս։ Հիսո՛ւս, Որդի Աստուծո, ողորմի՛ր ինձ։

Կոնդակ 5

Ինչպես անցյալում աստվածահեղ Քո Արյամբ մեզ ազատեցիր Օրենքի անեծքից, Հիսուս, այժմ էլ ազատիր մեզ վիշապաձի ցանցից, որում խճճվեցինք մարմնական կրքերի գայթակղությունների և չարորակ հուսալքության պատճառով. մեզ, որ կանչում ենք Քեզ. Ալելուիա՛։

Տուն 5

Եբրայեցի մանուկները, տեսնելով Արարչին, Ով Իր Աստվածային ձեռքով ստեղծեց մարդուն՝ մարդու կերպարանք առած, և ճանաչելով Տիրոջը՝ փութով շտապեցին ողջունել Նրան դալար ճյուղերով և մեծարել «Օվսաննա՛» երգելով։ Մենք էլ բերում ենք մեր երգը Քեզ մեր բառերով. Հիսո՛ւս, ճշմարիտ Աստված։ Հիսո՛ւս, Դավթի Որդի։ Հիսո՛ւս, ամենափառահեղ Արքա։ Հիսո՛ւս, Գառն անարատ։ Հիսո՛ւս, ամենասքանչելի Հովիվ, Հիսո՛ւս, իմ մանուկ հասակի Պահապան։ Հիսո՛ւս, Առաջնորդ իմ երիտասարդության։ Հիսո՛ւս, Գովեստ իմ ծերության։ Հիսո՛ւս, Հույս իմ մահվան ժամին, Հիսո՛ւս, Կյանք իմ մահից հետո։ Հիսո՛ւս, մխիթարություն իմ Քո դատաստանի ժամանակ. Հիսուս, ցանկություն իմ, մի ապականիր ինձ այդ ժամանակ։ Հիսո՛ւս, Որդի Աստուծո, ողորմի՛ր ինձ։

Կոնդակ 6

Աստծուց ներշնչված քարոզիչների մարգարեությունն ու խոսքերը կատարելով՝ Հիսուս, իջար երկիր, և Անսահմանդ ապրեցիր մարդկանց մեջ՝ կրելով մեր ցավերը. Այս պատճառով մենք՝ Քո վերքերով ապաքինված, սովորեցինք երգել Քեզ՝ Ալելուիա՛։

Տուն 6

Ճառագեց տիեզերքը լուսավորող Քո ճշմարտությունը, և չքվեց դիվային պատրանքը, քանզի, Փրկիչ, կուռքերը, չդիմանալով Քո զորությանը, կործանվեցին։ Իսկ մենք, արժանանալով փրկությանդ, կանչում ենք Քեզ. Հիսո՛ւս, պատրանքը վանող Ճշմարտություն, Հիսո՛ւս, բոլոր լույսերը գերազանցող Լուսավորություն։ Հիսո՛ւս, բոլորին հաղթող ամենազոր Թագավոր, Հիսո՛ւս, Աստված անհատնում գթասրտությամբ։ Հիսո՛ւս, Հաց Կենդանի, հագեցրու ինձ՝ սովյալիս. Հիսո՛ւս, Աղբյուր իմաստության, խմեցրու տոչորյալիս։ Հիսո՛ւս, Հանդերձ ուրախության, պատմուճանիր ինձ՝ անգոսնելուս։ Հիսո՛ւս, Սփոռց ցնծության, ծածկիր անարժանիս։ Հիսո՛ւս, Շնորհող աղերսողներին, շնորհիր ինձ ապաշխարության լաց մեղքերիս համար։ Հիսո՛ւս, Գտնողդ փնտրողների, շահիր իմ հոգին։ Հիսո՛ւս, Բացողդ բախողների առջև, բաց իմ սևաբախտ սիրտը։ Հիսո՛ւս, Քավիչդ մեղավորների, մաքրիր իմ անօրենությունները։ Հիսո՛ւս, Որդի Աստուծո, ողորմի՛ր ինձ։

Կոնդակ 7

Կամենալով դարերի սկզբից գաղված խորհուրդը հայտնել՝ տարվեցիր մորթվելու, ինչպես գառ, Հիսուս, և, ինչպես գառն իր խուզողների հանդեպ, լուռ մնացիր և որպես Աստված՝ հարություն առար մեռելներից և փառքով համբարձվեցիր երկինք՝ Քեզ հետ բարձրացնելով նաև մեզ՝ Քեզ երգողներիս՝ Ալելուիա՛։

Տուն 7

Աստվածահրաշ գործեր ցույց տվեց Արարիչը՝ հայտնվելով մեզ. անսերմ մարմնացավ Կույսից, գերեզմանից հարություն առավ՝ առանց շիրմակնիքը խախտելու և մարմնով մտավ առաքյալների մոտ փակ դռներով։ Այս պատճառով սքանչացած երգում ենք.

Հիսո՛ւս, Խոսք անսահման, անմարելի, Հիսո՛ւս, Բանն անզննելի, Հիսո՛ւս, Ուժ անգերազանցելի, Հիսո՛ւս, Իմաստություն անըմբռնելի։ Հիսո՛ւս, Աստվածություն աննկարագրե-

լի, Հիսո՛ւս, Տերություն անհատնելի, Հիսո՛ւս, Թագավորություն անպարտելի, Հիսո՛ւս, Տիրակալություն անվերջանալի։ Հիսո՛ւս, Զորություն բարձրագույն, Հիսո՛ւս, Իշխանություն հավիտենական։ Հիսուս, Արարիչ իմ, գթա՛ ինձ։ Հիսուս, Փրկիչ իմ, փրկի՛ր ինձ։ Հիսո՛ւս, Որդի Աստուծո, ողորմի՛ր ինձ։

Կոնդակ 8

Ապշահար՝ տեսնելով Աստծուն մարդացած, հեռանանք ունայն աշխարհից և միտքն ուղղենք Աստվածայինին, քանզի Աստված իջավ երկիր, որպեսզի երկինք բարձրացնի մեզ, որ կանչում ենք Իրեն. Ալելուիա՛։

Տուն 8

Ամբողջովին գտնվելով ներքին աշխարհներում՝ դույզն-ինչ երկնայինը չթողեցիր, Անպարագիր, երբ կամավ շարշարվեցիր մեզ համար և Քո մահով մեր մահը ջնջեցիր և Հարությամբ Քո կյանք պարգևեցիր երգողներին՝

Հիսո՛ւս, սրտի Քաղցրություն, Հիսո՛ւս, մարմնի ամրություն։ Հիսո՛ւս, հոգու լուսավորություն, Հիսո՛ւս, մտքի արագություն։ Հիսո՛ւս, խղճի ուրախ խաղաղություն, Հիսո՛ւս, հայտնի միակ Հույս։ Հիսո՛ւս, մշտնջենական հիշողություն, Հիսո՛ւս, բարձրագույն դրվատություն։ Հիսո՛ւս, փառք իմ գերամեծար, Հիսուս, իղձ իմ, մի վանիր ինձ։ Հիսուս, Հովիվ իմ, փնտրիր ինձ, Հիսուս, Փրկիչ իմ, փրկի՛ր ինձ։ Հիսո՛ւս, Որդի Աստուծո, ողորմի՛ր ինձ։

Կոնդակ 9

Հրեշտակների բոլոր դասերն անդադար փառաբանում են Քո Ամենասուրբ Անունը, Հիսուս, երկնքում «Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Սո՛ւրբ» երգելով։ Իսկ մենք՝ մեղավորներս, երկրի վրա կանչում ենք հողեղեն շուրթերով. Ալելուիա՛։

Տուն 9

Հիսուս Փրկիչ մեր, Քո դիմաց հոխորտաձայն հռետորներին տեսնում ենք պապանձված՝ ձկների նման, քանզի ի զորու չե-

ղան բացատրել, թե ինչպես, լինելով անփոփոխ Աստված, դարձար նաև կատարյալ Մարդ: Իսկ մենք՝ սքանչացած այս գաղտնախորհուրդ առեղծվածով, հավատով բացականչում ենք.

Հիսո՛ւս, Աստված նախահավերժի, Հիսո՛ւս, Թագավոր թագավորողների: Հիսո՛ւս, Տիրակալ տիրողների, Հիսո՛ւս, Դատավոր կենդանիների և մեռյալների: Հիսո՛ւս, Հույս անհույսների, Հիսո՛ւս, Մխիթարություն լացողների: Հիսո՛ւս, Փառք աղքատների, Հիսուս, մի դատապարտիր ինձ՝ ըստ իմ գործերի: Հիսուս, մաքրիր ինձ Քո ողորմությամբ: Հիսուս, վանիր ինձնից վհատությունը: Հիսուս, լուսավորիր սրտիս խորհուրդները: Հիսուս, տուր ինձ մահվան հիշողություն: Հիսո՛ւս, Որդի Աստուծո, ողորմի՛ր ինձ:

Կոնդակ 10

Ցանկանալով փրկել աշխարհը, Ծագու՛մն արևելքի, և իջնելով մեր բնության խավար արևմուտքը՝ խոնարհվեցիր մինչ ի մահ: Այս պատճառով Քո Անունն առավել բարձրացավ բոլոր անուններից, և Դու լսում ես երկնային ու երկրային բոլոր էակներից. Ալելուիա՛:

Տուն 10

Թագավո՛ր նախահավիտենական, Մխիթարի՛չ, Ճշմարի՛տ Օծյալ, սրբիր մեզ ամեն ապականությունից, ինչպես սրբեցիր տասը բորոտներին, և բուժիր մեզ, ինչպես բուժեցիր Զակքեոս մաքսավորի արծաթասեր հոգին, որպեսզի մենք գորովաձայն Քեզ գովերգենք.

Հիսո՛ւս, Գանձ անեղծանելի, Հիսո՛ւս, Հարստություն անհատնելի: Հիսո՛ւս, Կերակուր հասուններ, Հիսո՛ւս, Ըմպելիք անսպառելի: Հիսո՛ւս, Ծածկոց աղքատների, Հիսո՛ւս, Պաշտպան այրիների: Հիսո՛ւս, Զորավիգ որբերի, Հիսո՛ւս, Օգնական աշխատավորների: Հիսո՛ւս, Ուղեվար ճամփորդների, Հիսո՛ւս, Նավավար նավորդների: Հիսո՛ւս, Հանգստարան փոթորկվածների: Հիսուս Աստված, հանիր ինձ՝ ընկածիս: Հիսուս, Որդի Աստուծո, ողորմի՛ր ինձ:

Կոնդակ 11

Վշտամորմոք, սրտաշարժ երգերով, Քեզ եմ գալիս, անարժանս, և կանչում ինչպես քանանուհին. «Հիսուս, ողորմի՛ր ինձ», քանզի դուստր չունեմ, բայց ունեմ մարմին՝ կրքերով հույժ դիվատանջ և զայրույթից հրակեզ. և տու՛ր բժշկություն Քեզ կանչողիս՝ Ալելուիա՛։

Տուն 11

Անգիտությամբ խավարյալներին լուսավորող Սկզբնալույսիդ նախկինում հալածող Պողոսը, աստվածուղղորդ ձայնի զորությանն անսալով, իսկույն հոգով պայծառացավ. նույնկերպ լույս տուր նաև հոգուս խավար աչքերին, որ կանչում եմ.

Հիսո՛ւս, Արքա իմ հզորազոր։ Հիսո՛ւս, Աստված իմ ամենազոր։ Հիսո՛ւս, Տեր իմ մինչհավիտենական։ Հիսո՛ւս, Արարիչ իմ ամենափառավորյալ։ Հիսո՛ւս, Դաստիարակ իմ ամենաբարի։ Հիսո՛ւս, Հովիվ իմ ամենաշռայլ։ Հիսո՛ւս, Տիրակալ իմ ամենագութ։ Հիսո՛ւս, Փրկիչ իմ ամենագթասիրտ։ Հիսո՛ւս, լուսավորիր զգայարաններս՝ կրքերից խավարած։ Հիսո՛ւս, բժշկիր մարմինս՝ մեղքերից խոցերով պատված։ Հիսո՛ւս, մաքրիր միտքս դատարկ ու սին խորհուրդներից։ Հիսո՛ւս, պահիր, պահպանիր սիրտս կրքոտ ցանկություններից։ Հիսո՛ւս, Որդի Աստուծո, ողորմի՛ր ինձ։

Կոնդակ 12

Հիսո՛ւս՝ Լուծանող ամենայն պարտքերի, արժանացրու՛ ինձ Քո շնորհին և ընդունիր ինձ ՝ զղջացյալիս, ինչպես ընդունեցիր Քեզ ուրացող Պետրոսին և կանչիր ինձ՝ հուսահատ անբարուս, ինչպես անցյալում՝ Քեզ հալածող Պողոսին և լսի՛ր ինձ, որ աղաղակում եմ Քեզ՝ Ալելուիա՛։

Տուն 12

Փառաբանական երգերով բոլորս գովերգում ենք Քեզ, Քո մարդեղացումը և Թովմասի հետ Տեր և Աստված դավանում, Քեզ, որ նստում ես Հոր աջ կողմում և կամենում դատել կենդանիներին և մեռյալներին։ Այդժամ արժանացրու աջակողմում դասվելու նաև ինձ՝ աղերսողիս.

Հիսո՛ւս, Թագավոր մշտնջենական, ողորմի՛ր ինձ։ Հիսո՛ւս, Խնկածաղիկ ծաղկաբույր, խնկաբուրիր ինձ։ Հիսո՛ւս, Ջերմություն սիրասուն, ջերմացրու ինձ։ Հիսո՛ւս, Տաճար անսկիզբ-անժամանակ, պատսպարիր ինձ։ Հիսո՛ւս, Հանդերձ լուսեղեն, բարեզարդիր ինձ։ Հիսո՛ւս, Մարգարիտ ազնվագույն, լուսազարդիր ինձ։ Հիսո՛ւս, Ակնաքար անգին, պայծառացրու ինձ։ Հիսո՛ւս, Արեգակ Արդարության, լուսավորիր ինձ։ Հիսո՛ւս, Լույս ամենասուրբ, լույսով ողողիր ինձ։ Հիսո՛ւս, հոգու և մարմնի ախտերից մաքրիր ինձ։ Հիսո՛ւս, չարի ձեռքերից կորզիր ինձ։ Հիսո՛ւս, անմար կրակից և այլ անվերջ տանջանքներից ազատիր ինձ։ Հիսո՛ւս, Որդի Աստուծո, ողորմի՛ր ինձ։

Կոնդակ 13

Ո՛վ ամենաքաղցր և ամենաողորմ Հիսուս։ Ընդունիր այժմ մեր այս փոքր աղերսերգությունը, ինչպես ընդունեցիր այրի կնոջ երկու լուման, և պահպանիր Քո ժառանգությունը տեսանելի և անտեսանելի թշնամիներից, օտարացեղ ասպատակիչներից, հիվանդությունից և սովից, ամենայն փորձանքներից, վշտերից և մահացու հարվածներից. փրկի՛ր վերահաս տանջանքներից բոլոր նրանց, ովքեր կանչում են Քեզ՝ Ալելուիա՛։

(Այս կոնդակը կարդացվում է երեք անգամ)

Տուն 1

(Կարդացվում է նորից)

Հրեշտակների Արարի՛չ և երկնային Զորաց Տեր, բաց իմ տկար միտքն ու լեզուն Քո ամենասուրբ Անվան գովաբանությանը, ինչպես անցյալում բացեցիր խուլ և համրի լսողությունն ու լեզուն, որը խոսելով՝ բացականչեց.

Ամենասքանչելի՛ Հիսուս, զարմա՛նք Հրեշտակների։ ամենազորե՛ղ Հիսուս, նախահայրերի ազատագրում։ Ամենաքա՛ղցր Հիսուս, նախապապերի մեծարում։ ամենափառավո՛ր Հիսուս, հավատարիմների զորացում։ Ամենասիրելի՛ Հիսուս, մարգարեների իրականացում։ ամենահրաշալի՛ Հիսուս, նահատակների զորություն։ Ամենախաղա՛ղ Հիսուս, վանականների ուրախություն։ ամենողո՛րմ Հիսուս, երեցների քաղցրություն։ Ամենագու՛թ Հիսուս, պահեցողների ժուժկալութ-

յուն։ ամենաքաղցրալի՛ց Հիսուս, սրբացած վանականների բերկրանք։ Ամենասո՛ւրբ Հիսուս, կույսերի ողջախոհություն։ հավերժահավե՛տ Հիսուս, մեղավորների փրկություն։ Հիսո՛ւս, Որդի Աստուծո, ողորմի՛ր ինձ։

Կոնդակ 1

(Կարդացվում է նորից)

Պաշտպա՛ն իմ Զորապետ և Տեր, դժոխքին Հաղթող, Քո ստեղծածն եմ ու ծառան, հավիտենական մահից փրկված, Քեզ եմ ձոնում գովերգեր։ Անճառելի գթությամբդ փրկի՛ր բոլոր փորձանքներից, որ կանչում եմ Քեզ. Հիսո՛ւս, Որդի Աստուծո, ողորմի՛ր ինձ։

Աղոթք

Տիեզերակա՛լ Տեր իմ Աստված, Հիսուս Քրիստոս, որ Քո անճառելի մարդասիրությամբ ժամանակների լրումին մարմին առար Ամենասրբուհի Կույս Մարիամից, փառաբանում եմ իմ՝ Քո ծառայի հանդեպ փրկչական, նախախնամ հոգածությունդ, Տե՛ր։ Օրհներգում եմ Քեզ, քանզի Քո շնորհիվ ճանաչեցի Հորը։ Օրհնում եմ Քեզ, քանզի Քո միջոցով Սուրբ Հոգին աշխարհ եկավ։ Խոնարհվում եմ Քեզ մարդեղացրած Քո Ամենասրբուհի Մորը, Ով այս ահավոր Խորհուրդին ծառայեց։ Գովաբանում եմ Քո հրեշտակային դասերին՝ որպես Քո մեծափառության գովերգողների և ծառայողների։ Պատվում եմ Հովհաննես Կարապետին, որ Քեզ մկրտեց, Տեր. պատվում եմ նաև Քեզ նախաավետող մարգարեներին։ Փառավորում եմ Քո սուրբ առաքյալներին, տոնելով՝ հիշում նահատակներին, մեծարգում եմ Քո քահանաներին, խոնարհվում Քո սրբադաս վանականներին և Քո բոլոր արդարներին՝ խնկարկում։ Այսպիսի մեծաթիվ և մեծափառ և անպատմելի աստվածամերձ սրբություններին Քեզ եմ բերում՝ ամենագութ Աստծուդ՝ որպես աղոթակիցների, և հանուն նրանց ներում աղերսում անարժան ծառայիս մեղքերին։ Այո՛, Տե՛ր, հանուն Քո բոլոր սրբերի, բայց առավել ևս հանուն Քո սուրբ գթառատության, քանզի օրհնյալ ես Դու հավիտյան։ Ամեն։

ԱԿԱՖԻՍՏ ԱՄԵՆԱՍՐԲՈՒՀԻ ԱՍՏՎԱԾԱՄՈՐԸ
(Մեծ Ակաֆիստ)

Աստվածամորը նվիրված ակաֆիստն ամենաառաջինն է, գրված վեցերորդ դարում: Այն կոչվում է նաև «Մեծ Ակաֆիստ», և հետագա բոլոր ակաֆիստների համար ծառայել է օրինակ՝ տալով նրանց կազմության ձևական սխեմա: «Մեզ համար մարտնչող Զորապետուհուդ հաղթանակի ընծաներ...» սկզբնատողով հիմնը կապվում է այդ ժամանակաշրջանի արդիական դեպքերի՝ ավարական ավարառու և խաժամուժ ջոկատների շրջապատումից Կոստանդնուպոլսի ազատման հետ: Սույն ակաֆիստը երախտագիտության ցնծալից, աստվածաբանական բանաստեղծության նմուշ է՝ գլուխգործոց:

Կոնդակ Ա

Մեզ համար մարտնչող Զորապետուհուդ հաղթանակի ընծաներ ենք մենք բերում և աղետներից ազատված ծառաներս Աստվածածնիդ՝ երախտապարտության ձոներգեր նվիրաբերում:

Եվ Դու, քանզի ունես անհաղթելի զորություն, ազատիր մեզ, հեռացրու ամեն վտանգ ու փորձություն, որ ձայնարկենք խրոխտաձայն Քեզ՝ Տիրուհուդ.

Ուրախացի՛ր, Հարսդ Անհարսնացյալ:

Տուն Ա

Աստվածամերձ Հրեշտակը երկնքից ուղարկվեց Քեզ ավետելու. «Ուրախացի՛ր»: Նա, նշմարելով մարմնավորվող Տիրոջը՝ սարսափեց, և կանգնած՝ իր աննյութական, եթերային ձայնով դիմեց Կույսին այս խոսքերով.

Ուրախացի՛ր. Քո միջոցով ուրախությունն է ճառագում:

Ուրախացի՛ր. Քո միջոցով անեծքն է չքանում:

Ուրախացի՛ր. ադենից արտաքսված Ադամի հետկանչում:

Ուրախացի՛ր. Եվայի լացի և սգի դադարեցում:

Ուրախացի՛ր, մարդկային մտքին անհասանելի վեհություն:

Ուրախացի՛ր, հրեշտակների հայեցմանն անհաս խորախորհուրդ խորություն:

Ուրախացի՛ր, արքայից Արքայի գահավորություն։

Ուրախացի՛ր, որ գրկում ես Նրան, Ով անշարժ հիմքն է կեցության։

Ուրախացի՛ր, Աստծո մարմնավորման սրբազա՛ն Ջետեղարան։

Ուրախացի՛ր, այգաբացին Արևն ավետող Այգա՛ստղ։

Ուրախացի՛ր. Քո միջոցով նորոգվում է արարածը։

Ուրախացի՛ր. Քո միջոցով Մանուկ է դառնում Արարիչը։

Ուրախացի՛ր, Հարսդ Անհարսնացյալ։

Կոնդակ Բ

Տեսնելով Իրեն անբիծ և անաղարտ՝ Սրբուհին համարձակաձայն դիմեց Գաբրիելին. «Օտարոտի քո խոսքն անընդունելի է թվում հոգուս համար։ Ինչպե՞ս ես խոսում անսերմ հղությունից մանկակրության մասին և ինչպե՞ս կանչում՝ Ալելուիա»։

Տուն Բ

Իմանալ ցանկանալով անիմանալին, Կույսը հարցնում է սրբամատույց Խորհրդակատարին. «Ինչպե՞ս է Որդի ծնվելու անապական ընդերքից, ասա՛ Ինձ»։ Եվ Հրեշտակը երկյուղածությամբ դիմում է Նրան.

Ուրախացի՛ր, Նվիրաբերյա՛լդ եռախորհուրդ, անճառելի Խորհուրդի։

Ուրախացի՛ր, հավատարիմ Գաղտնապահ այն ամենի, ինչն անխոսության է ենթակա։

Ուրախացի՛ր, Նախասկի՛զբ Քրիստոսի հրաշքների։

Ուրախացի՛ր. Դու կատարումն ես Տիրոջ ուսմունքների։

Ուրախացի՛ր, երկնային սանդղամատ, որով իջավ Աստված։

Ուրախացի՛ր, երկրից երկինք փոխադրող Կամու՛րջ երկնահաս։

Ուրախացի՛ր, տիեզերահռչակ զարմանք զվարթունների։

Ուրախացի՛ր, ջախջախիչ կործանու՛մ լացակումած դևերի։

Ուրախացի՛ր. անճառելի կերպով Դու Լույսին ծնեցիր։

Ուրախացի՛ր, զի «ինչպե՞ս»՝ ոչ մեկին չհայտնեցիր։

Ուրախացի՛ր, Անհասանելիդ իմաստունների իմաստության համար։

Ուրախացի՛ր. Քեզնով են հավատարիմների մտքերը դառնում լուսավոր ու պայծառ։

Ուրախացի՛ր, Հարսդ Անհարսնացյալ։

Կոնդակ Գ

Այդժամ Ամենաբարձրյալի զորության սյուքն իջավ ի հղություն անզույգ կույսի, Որի երանապտուղ որովայնը կարծես հանդիսացավ բերկրյալ հանդ բոլոր փրկություն քաղել բաղձողների համար, որոնք էլ երգում են. Ալելուիա՛։

Տուն Գ

Կույսի որովայնը դարձավ Աստվածընկալ. Նա շտապեց Եղիսաբեթի մոտ, որի մանուկն էլ, իսկույն ճանաչելով Մարիամի ողջույնը, ցնծաց և խայտալով, ասես երգերով, կանչեց Աստվածածնին.

Ուրախացի՛ր, բարձրուղեշ Շիվ անթառամ շառավղի։

Ուրախացի՛ր, Վաստակում անմահ Պտղի։

Ուրախացի՛ր. բուի ռամկին Դու մարդասեր մշակ դարձրիր։

Ուրախացի՛ր, մեր կյանքի Աստվածային Մշակին Դու ծնեցիր

Ուրախացի՛ր, առատակութ և առատագութ Անդաստա՛ն բերրի։

Ուրախացի՛ր, մաքրման և ներման Սեղա՛ն լիուլի։

Ուրախացի՛ր, Քեզնով է ծաղկում դրախտային արոտատեղին։

Ուրախացի՛ր. հոգիների համար պատրաստում ես ապաստանատեղի։

Ուրախացի՛ր, բարենպաստ ու քաղցրաբույր խունկ աղոթքների։

Ուրախացի՛ր, Մաքրագործու՛մ համայնապարփակ աշխարհի։

Ուրախացի՛ր, Աստուծո Բարեհաճությու՛ն մահկանացուներին։

Ուրախացիր, որ առ Աստված համարձակություն տվեցիր մահկանացուներիս։

Ուրախացի՛ր, Հարսդ Անհարսնացյալ։

Կոնդակ Դ

Ներքուստ փոթորկուն կասկածներով լի՝ ողջախոհ Հովսեփը, անաղարտ, չհարսնացած Անեղծիդ նայելով, պսակազեղծ Քեզ կարծեց, սակայն, իմանալով, որ Սուրբ Հոգուց է հղիությունը Քո՝ նա կանչեց. Ալելուիա՛։

Տուն Դ

Լսեցին հովիվները Քրիստոսի մարմնով գալուստը գովերգող հրեշտակներին և շտապեցին տեսնելու Հովվին Աստվածային, սակայն տեսան Նրան որպես Գառն Անարատ, որ սնվել էր անդաստանում Մարեմական։ Եվ, դիմելով Մորն՝ այսպես գովերգեցին.

Ուրախացի՛ր, Մայրի՛կ Գառան և Հովվի։

Ուրախացի՛ր, Գավի՛թ բանական հոտի։

Ուրախացի՛ր, Պաշտպա՛ն անտես թշնամիներից։

Ուրախացի՛ր, դրախտի դարպասները բացող Բանալի։

Ուրախացի՛ր, քանզի երկնայինները զվարթակից են երկրայիններին։

Ուրախացի՛ր. երկրայինները ցնծում են երկնայինների հետ միասին։

Ուրախացի՛ր. Քեզնով են ավետում անլուռ շուրթերն առաքյալների։

Ուրախացի՛ր, անպարտելի Քաջությու՛ն արի նահատակների։

Ուրախացի՛ր, ամրապինդ Հաստատու՛մ հավատի։

Ուրախացի՛ր, լուսավոր ու ջինջ Ճանաչու՛մ շնորհի։

Ուրախացի՛ր. Դու դժոխքն անխայթ – անպաշտպան դարձրիր։

Ուրախացի՛ր. Քեզանով մենք փառքը զգեցինք։

Ուրախացի՛ր, Հարսդ Անհարսնացյալ։

Կոնդակ Ե

Տեսան մոգերն Աստվածուղղորդ Աստղը, և հետևելով նրա շառավղին՝ որպես կանթեղի՝ նրա լույսով փնտրում էին Զորեղ Արքային։ Հասնելով Անհասանելիին՝ խինդ ու տաղով ձայնեցին Մանուկին. Ալելուիա՛։

Տուն Ե

Քաղդեացոց որդիները, տեսնելով Կույսի ձեռքերում մարդկանց Իր ձեռքերով Արարողին, ճանաչեցին Տիեզերակալին՝ թեկուզ և ծառայի կերպարանք առած, և շտապեցին ընծաներով Նրան պատվել և պաշտել, իսկ օրհնյալ Տիրամորը բացականչել.

Ուրախացի՛ր, անմայրամուտ Աստղի Մայր։

Ուրախացի՛ր, Լուսաբա՛ց խորհրդավոր օրվա։

Ուրախացի՛ր. Դու հանգցրիր ջերմող պատրանքների կրակարանը։

Ուրախացի՛ր, Լուսավորող նրանց, որք հաղորդ են գաղտնեացն Երրորդության։

Ուրախացի՛ր. անմարդկային բռնապետին տապալելով իշխանազուրկ դարձրիր։

Ուրախացի՛ր. երևացրիր Դու մարդասեր Տիրոջը՝ Քրիստոսին։

Ուրախացի՛ր. ազատեցիր մեզ բիրտ, բարբարոս ծեսերից։

Ուրախացի՛ր. մեզ հանեցիր պիղծ գործերի տղմուտից։

Ուրախացի՛ր. կրակապաշտության հոռի ջերմախտը հանգցրիր։

Ուրախացի՛ր. մեզ կրքերի կրակից ազատեցիր։

Ուրախացի՛ր, ողջախոհության Ուսուցչուհի հավատացյալների։

Ուրախացի՛ր, Ուրախությու՛ն համայն ազգերի։

Ուրախացի՛ր, Հարսդ Անհարսնացյալ։

Կոնդակ Զ

Վերածվելով աստվածընկալ քարոզիչների՝ քրմերը վերա-

դարձան Բաբելոն՝ կատարելով Քո մասին մարգարեությունը և բոլորին Քեզ՝ որպես Քրիստոս քարոզելով, լքեցին Հերովդեսին՝ որպես անբարո – անբանի, որը չկարեցավ երկրպագել և երգել. Ալելուիա՛:

Տուն Զ

Լուսավորելով Եգիպտոսը Ճշմարտության լույսով՝ Դու ցրեցիր կեղծիքի խավարը, Փրկիչ, քանզի Մսրա կուռքերը, չդիմանալով Քո զորությանը, տապալվեցին, իսկ դրանցից ազատվածները կանչեցին Աստվածամորը.

Ուրախացի՛ր. Դու ես մարդկանց ուղղում – բարվոքում:

Ուրախացի՛ր, դժնի դևերի գահավիժում:

Ուրախացի՛ր, խաբեության բռնության ոտնահարում:

Ուրախացի՛ր, կուռքերի պատրականության քողազերծում:

Ուրախացի՛ր, Ծովա՛կ, որում անմարմին փարավոնն է խորտակվում:

Ուրախացի՛ր, կյանքի ծարավի հագեցման Ժա՛յռ – Ակնաղբյու՛ր:

Ուրախացի՛ր, հրե Սյուն, ուղեցու՛յց խավարում խարխափողների:

Ուրախացի՛ր, ամպերից էլ ընդարձակ Հովանի՛ աշխարհի:

Ուրախացի՛ր, սրբազան Նպար՝ փոխարեն երկնուստ մանանայի:

Ուրախացի՛ր, Սպասարկու՛ սրբագույն քաղցրությանց:

Ուրախացի՛ր, երանիկ Երկի՛ր ավետյաց:

Ուրախացի՛ր, Երկի՛ր կաթնահոս և մեղրակաթ:

Ուրախացի՛ր, Հարսդ Անհարսնացյալ:

Կոնդակ Է

Երբ Սիմեոն Ծերունին լքելու էր դարն այս՝ խաբուսիկ ու սին, Դու բերվեցիր նրա մոտ՝ որպես Մանուկ, բայց և նրանից ճանաչվեցիր նույնպես Աստված Կատարյալ: Ուստի նա, սքանչացած Քո անճառելի իմաստությամբ, գոչեց. Ալելուիա՛:

Տուն Է

Չտեսնված բան. նոր Արարած ցույց տվեց մեզ՝ Իր արարածներին հայտնված Արարիչը՝ բողբոջելով Կույսի անսերմ ընդերքից, պահպանելով Նրան անխախտ և անեղծ, որպեսզի, հրաշքը տեսնելով, մենք Նրան գովերգենք.

Ուրախացի՛ր, Ծաղի՛կ հավետ անթառամության։

Ուրախացի՛ր, Պսա՛կ խստամբերության։

Ուրախացի՛ր. Դու արտացոլում ես ցոլքերն հարության։

Ուրախացի՛ր, հրեշտակային կյանքի ստու՛յգ երևակում։

Ուրախացի՛ր, սաղարթախի՛տ Ծառ, որի ներքո բազումք են պատսպարվում։

Ուրախացի՛ր, հավատարիմներին սնուցող Ծա՛ռ լուսապտուղ։

Ուրախացի՛ր, որ կրել ես գերիների Ազատարարին Քո որովայնում։

Ուրախացի՛ր, որ ծնել ես մոլորյալների Փարոսին՝ ուղենշում։

Ուրախացի՛ր. Դատավորի արդարությանն ավելացնում ես գութ, խղճահարում։

Ուրախացի՛ր, բազմաբյուր մեղքերի Ներում։

Ուրախացի՛ր, բարուց մերկացածների Հագուստ, որ տալիս է համարձակություն։

Ուրախացի՛ր, անապա՛կ Սեր, որ գերիվեր է, քան ամեն մի սիրատենչություն։

Ուրախացի՛ր, Հարսդ Անհարսնացյալ։

Կոնդակ Ը

Տեսնելով անհավանական Ծնունդը՝ խորթանանք աշխարհին՝ միտքն ուղղելով դեպի երկինք։ Քանզի հենց դրա համար Բարձրյալն Աստված իջավ երկիր՝ որպես խոնարհագույն Մարդ՝ ցանկանալով դեպի բարձունքները ձգել Իրեն երգողներին՝ Ալելուիա՛։

Տուն Ը

Բանն անճառելի ամբողջովին երկրում էր, բայց և երկնային չթողեց բնավ, վանզի տեղի ունեցավ ոչ տեղից տեղ տեղափոխություն, այլ Աստվածային էջքը Միածնի և ծնունդն Աստվածընկալ Կույսից, Ով և լսում է մեր այս խոսքերը.

Ուրախացի՛ր, անպարագրելի Աստծո Զետեղարան։

Ուրախացի՛ր, Սուրբ Խորհուրդի Դու՛ռ զմրուխտաշար։

Ուրախացի՛ր. Քո մասին լսելով՝ անհավատների մտքերը երերում են։

Ուրախացի՛ր. Քեզանով հավատարիմներդ աներեր պարծենում են։

Ուրախացի՛ր, քերովբեների վրա Սուրացողի Մարտակա՛ռք սրբազան։

Ուրախացի՛ր, սերովբեների վրա Բազմողի չքնա՛ղ Բնակարան։

Ուրախացի՛ր, Միավորող – Հաշտեցնողդ հակադրությանց։

Ուրախացի՛ր, ի մի Զուգադրողդ ծննդի և կուսության։

Ուրախացի՛ր. Քեզանով է ներվում հանցանքն ադամական։

Ուրախացի՛ր. Քեզնով է բացվում Պարտեզը եդեմական։

Ուրախացի՛ր, Բանալի՛ Քրիստոսի Թագավորության։

Ուրախացի՛ր, Հու՛յս և Հուսադրու՛մ բարիքների հավերժական։

Ուրախացի՛ր, Հարսդ Անհարսնացյալ։

Կոնդակ Թ

Հրեշտակային բնությամբ օժտված ողջ դասերը զարմանք կտրեցին՝ հայելով Քո մեծագործ մարդացումը, քանզի նրանք Քեզ տեսան որպես հասարակ մարդու՝ մեզ հետ և մեր մեջ։ Տեսան Նրան, Ով, Աստված լինելով, անհասանելի է և բոլոր երկնայիններից և երկրայիններից լսում է. Ալելուիա՛։

Տուն Թ

Ճարտարաբան հռետորներին տեսնում ենք Քո առջև համրացած, հանց անձայն ձկներ, Աստվածածի՛ն, քանզի նրանք անկարող եղան բացատրել, թե ինչպես է Կույսդ ծնել՝ մնալով

անարատ, իսկ մենք, զմայլվելով այս Խորհուրդով, հավատով բացականչում ենք.

Ուրախացի՛ր, Ընդունարա՛ն Աստծո Իմաստության։

Ուրախացի՛ր, Գանձարա՛ն Նրա նախախնամության։

Ուրախացի՛ր. իմաստասերներին բացահայտեցիր որպես անիմաստների։

Ուրախացի՛ր. բանիբուն ճարտասաններին մերկացրիր, որպես անբանների։

Ուրախացի՛ր, քանզի խորամանկ վիճաբանները բացահայտվեցին որպես դատարկաբաններ։

Ուրախացի՛ր, քանզի առասպելաբաններն ամաչերես դալկացան։

Ուրախացի՛ր, որ քանդեցիր աթենացիների խճճվածքները։

Ուրախացի՛ր, որ լիուլի լցնում ես ձկնորսների ուռկանները։

Ուրախացի՛ր. Դու հանում ես անգիտության խորխորատից։

Ուրախացի՛ր, որ լուսավորում ես գիտությամբ շատերին։

Ուրախացի՛ր, Նավա՛կ փրկություն փափագողների։

Ուրախացի՛ր, Նավահանգի՛ստ կյանքի օվկիանում նավարկողների։

Ուրախացի՛ր, Հարսդ Անհարսնացյալ։

Կոնդակ Ժ

Փրկել ցանկանալով աշխարհը՝ ողջ տիեզերքն Արարողն ու Ջարդարողը, Ինքնախոստման համաձայն, եկավ աշխարհ, և լինելով Հովիվ, քանզի Աստված է, հանուն մեզ հայտնվեց որպես մեզ նման Մարդ. զի նմանը նմանով Իրեն ձգելով՝ Նա՝ որպես Աստված, լսում է համայնից. Ալելուիա՛։

Տուն Ժ

Աստվածածի՛ն Կույս, Դու անխախտ Պատ ես կույսերի և Քո պաշտպանությանը բոլոր դիմողների համար, քանզի Քեզ այդպես ստեղծեց երկնքի և երկրի Արարիչը, Սրբուհի, բնակվելով Քո որովայնում, Նա բոլորին առաջադրեց Քեզ կանչել.

Ուրախացի՛ր, Հենապյուն կուսության։

Ուրախացի՛ր, Դու՛ռ փրկության։

Ուրախացի՛ր, Առաջնորդուհի՛ հոգևոր վերածննդի։

Ուրախացի՛ր, Մատռվակուհի Աստծո ողորմության յուղի։

Ուրախացի՛ր, զի Դու նորոգեցիր մեղքի մեջ հղացողներին։

Ուրախացի՛ր, քանզի Դու խոհեմացրիր խելակորույսներին։

Ուրախացի՛ր, որ խափանում – արգելում ես մտքերի ապականիչին։

Ուրախացի՛ր, որ ծնեցիր անապականություն Սերմանողին։

Ուրախացի՛ր, Ապարա՛նք անախտ – անսերմ հարսանիքի։

Ուրախացի՛ր. Դու միավորում ես Տիրոջը հավատարիմներին։

Ուրախացի՛ր, բարի Դաստիարակչուհի սրբասնունդ կույսերի։

Ուրախացի՛ր, որ հարսնակերպ զուգում – զգեստավորում ես սուրբ հոգիներին։

Ուրախացի՛ր, Հարսդ Անհարսնացյալ։

Կոնդակ ԺԱ

Ամեն մի երգ խամրում է՝ զորելով Քո բյուր, շռայլ ու գթառատ պարգևների համընդգրկուն գովքը երգել, քանզի եթե ավազահատիկների թվով անգամ երգեր բերեինք Քեզ, Սու՛րբ Արքա, միևնույն է, արժանի ոչինչ կատարած չէինք լինի ամենի հանդեպ, որ տալիս ես մեզ՝ Քեզ կանչողներիս՝ Ալելուիա՛։

Տուն ԺԱ

Որպես լուսակիր Կերոն ենք տեսնում սուրբ Կույսին՝ հայտնված մարդկանց՝ խավարում, քանզի վառելով հոգևոր լույսն ինչպես ծագող արև՝ Նա բերում է բոլորին Աստվածային գիտությանը՝ միտքը լուսավորելով, և մեծարվում է այս ձոներով.

Ուրախացի՛ր, Ճաճա՛նչ հոգևոր Արևի։

Ուրախացի՛ր, Լուսատու՛ չխամրող Լույսի։

Ուրախացի՛ր, լուսավորող Փայլա՛կ հոգիների։

Ուրախացի՛ր, ինչպես շանթ, զարհուրեցնում ես թշնամիներին։

Ուրախացի՛ր, քանզի Քեզնից է բխում մարդկանց վառ լուսավորումը։

Ուրախացի՛ր, քանզի Քեզնից է զեղվում հորդառատ գետը։
Ուրախացի՛ր, որ գեղանկարում ես կնքավազանը։
Ուրախացի՛ր, Վանողդ մեղքի ապականության։
Ուրախացի՛ր, խիղճը մաքրող Լվացարա՛ն։
Ուրախացի՛ր, բաշխող Գավա՛թ երջանկության։
Ուրախացի՛ր, Բուրմու՛նք Քրիստոսի բուրավետության։
Ուրախացի՛ր, հոգևոր՝ ներքին խրախճանքի Կյանք։
Ուրախացի՛ր, Հարսդ Անհարսնացյալ։

Կոնդակ ԺԲ

Ցանկանալով տալ հնագույն պարտքերի ներման շնորհը՝ մարդկանց ողջ պարտքերի Լուծանողն Ինքը մոտեցավ Իր շնորհից հեռացածներին, և պատռելով պարտյաց ձեռագիրը, լսում է բոլորից. Ալելուիա՛։

Տուն ԺԲ

Գովերգելով Քո ծնունդը՝ բոլորս Քեզ ենք փառաբանում, Աստվածամա՛յր՝ որպես մարմնեղեն – ոգեղեն Տաճար. քանզի համայնն Իր ձեռքում պահող Տերը, բնակվելով Քո որովայնում, Քեզ սրբագործեց, փառավորեց, և բոլորիս ուսուցանեց կանչել Քեզ.
Ուրախացի՛ր, Խորա՛ն Բանի և Աստծո։
Ուրախացի՛ր, Սրբագու՛յն, քան Սրբություն Սրբոց։
Ուրախացի՛ր, Տապանակ՝ Հոգով ոսկեզօծ։
Ուրախացի՛ր, անհատնելի Գանձարա՛ն կյանքի։
Ուրախացի՛ր, թանկարժեք Պսա՛կ բարեպաշտ արքաների։
Ուրախացի՛ր, մեծահարգ Գովե՛ստ ակնալից երեցների։
Ուրախացի՛ր, Եկեղեցու Հիմնասյու՛ն հաստատահիմն։
Ուրախացի՛ր, անքանդ Պարսպապա՛տ երկրի։
Ուրախացի՛ր. Քեզնով են խոյանում հաղթակամարները։
Ուրախացի՛ր. Քո միջոցով են ընկնում թշնամիները։
Ուրախացի՛ր, Բժշկությու՛ն իմ հեղգ մարմնի։
Ուրախացի՛ր, Փրկությու՛ն իմ մեղկ հոգիի։
Ուրախացի՛ր, Հարսդ Անհարսնացյալ։

Կոնդակ ԺԳ

Ո՜վ ամենագովյալ Մայր, որ ծնել ես բոլոր սրբերից սրբազնագույն Խոսքին, ընդունելով այս ընծան հիմա՝ ազատիր բոլորին ամենայն դժբախտությունից և գալիք տանջանքներից փրկիր Քեզ կանչողներիս՝ Ալելուիա՜։

(Այս կոնդակը կարդացվում է երեք անգամ)

Տուն Ա

(Կարդացվում է նորից)

Աստվածամերձ Հրեշտակը Երկնքից ուղարկվեց Քեզ ավետելու. «Ուրախացի՛ր»։ Նա, նշմարելով մարմնավորվող Տիրոջը՝ սարսափեց, և կանգնած՝ իր աննյութական, եթերային ձայնով դիմեց Կույսին այս խոսքերով.

Ուրախացի՛ր. Քո միջոցով ուրախությունն է ճառագում։

Ուրախացի՛ր. Քո միջոցով անեծքն է չքանում։

Ուրախացի՛ր. ադենից արտաքսված Ադամի հետկանչում։

Ուրախացի՛ր. Եվայի լացի և սգի դադարեցում։

Ուրախացի՛ր, մարդկային մտքին անհասանելի վեհություն։

Ուրախացի՛ր, հրեշտակների հայեցմանն անհաս խորախորհուրդ խորություն։

Ուրախացի՛ր, արքայից Արքայի գահավորություն։

Ուրախացի՛ր, որ գրկում ես Նրան, Ով անշարժ հիմքն է կեցության։

Ուրախացի՛ր, Աստծո մարմնավորման սրբազա՛ն Ջետեղարան։

Ուրախացի՛ր, այգաբացին Արևն ավետող Այգա՛ստղ։

Ուրախացի՛ր. Քո միջոցով նորոգվում է արարածը։

Ուրախացի՛ր. Քո միջոցով Մանուկ է դառնում Արարիչը։

Ուրախացի՛ր, Հարսդ Անհարսնացյալ։

Կոնդակ Ա

(Կարդացվում է նորից)

Մեզ համար մարտնչող Զորապետուհուդ հաղթանակի ընծաներ ենք մենք բերում և աղետներից ազատված ծառաներս

Աստվածածնիդ՝ երախտապարտության ձոներգեր նվիրաբերում։

Եվ Դու, քանզի ունես անհաղթելի զորություն,
ազատիր մեզ, հեռացրու ամեն վտանգ ու փորձություն,
որ ձայնարկենք խրոխտաձայն Քեզ՝ Տիրուհուդ.
Ուրախացի՛ր, Հարսդ Անհարսնացյալ։

Աղոթք Ամենասուրբ Աստվածածնին

Տիրուհի, Ամենասրբուհի Աստվածածին, Քո սուրբ և ամենազոր աղոթքներով հեռացրու ինձանից՝ Քո խոնարհ և խեղճ ծառայից ամենայն հուսալքություն, մոռացկոտություն, անխոհեմություն, անգործություն. հեռացրու բոլոր զազիր, նենգ ու հայհոյական մտքերն իմ տարաբախտ սրտից և մթագնած մտքից և հանգցրու կրքերիս կիզող կրակը, քանզի թշվառ եմ ես և դժբախտ։ Նաև փրկիր ինձ բազում անբարի հիշողություններից ու մտադրություններից և բոլոր չար գործերից հեռու պահիր ինձ, քանզի օրհնյալ ես Դու բոլոր ազգերից և փառավորվում է ամենապատվական Քո անունը հավիտյանս հավիտենից. Ամեն։

ԱԿԱՖԻՍՏ ՍՈՒՐԲ ԵՒ ՔԱՋ ՆԱՀԱՏԱԿ ՀԱՂԹԱԲԵՐ ԳԵՎՈՐԳԻՆ

Կոնդակ Ա

(Կարդացվում է նորից)

Եկե՛ք, խրոխտ զորավարին՝ Հաղթաբեր և սուրբ Գևորգին, գովեստ հյուսենք ջերմ սիրով, քանզի նա մեր բարեխոսն է, արագահաս օգնականն ու պաշտպանն է ամենուր։ Ո՛վ դու, սուրբ և մեծ նահատակ, որ կարող ես հար համարձակ բարեխոսել Տիրոջ մոտ, ազատիր մեզ, զերծ պահիր բյուր փորձանքներից, որ կանչենք քեզ զվարթաձայն և անդուլ.

Ուրախացի՛ր, սու՛րբ Գևորգ, հաղթանակներ բերող մեծամե՛ծ հերոս։

Տուն Ա

Հրեշտակների և համայն արարածների Արարիչը, ցույց տալով քեզ որպես պաշտպան Իր Եկեղեցու հավատի և հանուն հավատի անպարտելի և տքնաջան սխրագործի, ներշնչում է մեզ գովերգել սուրբ Գևորգիդ չարչարանաց և վշտերին համբերելու համար այսպես.

Ուրախացի՛ր. Աստծո Որդուն՝ Հիսուսին, դու մինչև վերջ սիրեցիր,

Ուրախացի՛ր. Նրա Անվան համար կյանքդ սիրով զոհեցիր,

Ուրախացի՛ր, Քրիստոսի անվեհեր վկա՝ Աստծուց կանչված,

Ուրախացի՛ր, արդար մեծագործ՝ Աստծո շնորհով փառավորված։

Ուրախացի՛ր, հրեշտակներին գոյակից և դասակից,

Ուրախացի՛ր, մարգարեներին հավասարահարգ և շարակից

Ուրախացի՛ր, սո՛ւրբ Գևորգ, հաղթանակներ բերող մեծամե՛ծ հերոս։

Կոնդակ Բ

Տեսնելով անօրենների հալածանքը քրիստոնյաների հանդեպ՝ չվախեցար նրանց խարդավանքից և սպասվող տանջանքներից, այլ որպես Քրիստոսի բարի զինվոր և աստվածախրատ իմաստուն, ողջ ունեցվածքդ աղքատներին բաժանելով, դու կամավ ներկայացար նրանց անարդար ժողովին՝ աներկյուղ երգելով Քրիստոսին՝ Առաջնորդիդ և Աստծուդ. Ալելուիա՛։

Տուն Բ

Իմաստնաբար ճանաչելով Երրեակ Միությամբ միասնական Աստվածությանը՝ երկրպագության արժանի, դու Նրան հաստատամիտ խոստովանեցիր անօրենների խառնաժողովում՝ այդ կերպ մերկացնելով խելահեղ թագավորի մոլի երկրպագությունն արարածներին։ Ուստի՝ հաղագս քո երկնախոհ իմաստասիրության, սո՛ւրբ Գևորգ, ընդունիր մեր ջերմեռանդ գովեստները.

Ուրախացի՛ր, Միակ ճշմարիտ Աստծուն քարոզող,

Ուրախացի՛ր, Ամենասուրբ Երրորդության հավատարիմ ջատագով։

Ուրախացի՛ր, ուղղափառ դավանության մեծ խորհուրդն անհավատներին ցույց տվող,

Ուրախացի՛ր, կուռքերին ծառայության մոլորությունը բացահայտող։

Ուրախացի՛ր, աստվածային վե՛ս հռետոր.

Ուրախացի՛ր, իմաստությամբ լի ճարտարախո՛ս։

Ուրախացի՛ր, սո՛ւրբ Գևորգ, հաղթանակներ բերող մեծամե՛ծ հերոս։

Կոնդակ Գ

Աշխարհ եկող ամեն մարդու լուսավորող Աստծո ուժը զնդանում ևս քեզ՝ տանջահար, խոնարհամիտ սուրբ Գևորգիդ այցելեց, քանզի անցավոր այս կյանքի ինչքերը որպես աղբ արհամարհելով՝ Միակ Քրիստոսին դու փարվեցիր, որպեսզի Նրա Անվան համար աննահանջ մարտնչելով՝ արժանանաս հրեշտակաց հետ հավերժ Նրան գովերգել. Ալելուիա՛:

Տուն Գ

Ունենալով Սուրբ Հոգով լուսավորված միտք ու սիրտ՝ Նրա ներշնչմամբ նախանձախնդիր եղար Քրիստոսի Անվան համար խիզախելու և տքնելու արյուն թափելու չափ, ուստի, արիաբար մնալով հավատի մեջ անսասան, նսեմացրիր անօրեն ու բարձրահոն ժողովականների գոռոզությունը: Արդ, հիացած՝ այս խոսքերով մեծարում ենք քաջահանճար սուրբ Գևորգիդ.

Ուրախացի՛ր, ամուր վահան՝ ծառայած բարեպաշտության պահպանությանը,

Ուրախացի՛ր, արդարության թուր՝ բարձրացած անօրենության թրատմանը:

Ուրախացի՛ր, հավատի հաստատուն, անկործան սյուն:

Ուրախացի՛ր, Քրիստոսի Եկեղեցու պատվար և հաստատում,

Ուրախացի՛ր, հավատացյալների զորացում:

Ուրախացի՛ր, անհավատների սարսափ և գահավիժում:

Ուրախացի՛ր, սու՛րբ Գևորգ, հաղթանակներ բերող մեծամե՛ծ հերոս:

Կոնդակ Դ

Մոլի և մահաշունչ չարչարողը, հրամայելով գամել մարմինդ անիվին, դառնագույն կտտանքների քեզ ենթարկեց, քանզի նա ծարավի էր քո արյանը արյունարբու շնագայլի պես: Բայց դու, վշտահա՛ր և սու՛րբ Գևորգ, զորանալով Տիրո-

ջով՝ հաստատահույս ապավինեցիր և կանչեցիր Միակ Աստծուն՝ Ալելուիա՛։

Տուն Դ

Դիոկղետիանոսն ու կռամոլ քրմերը, լսելով քեզնից իմաստուն խոսքեր, հույժ բորբոքվեցին չար կատաղությամբ, առավել ևս, երբ դու ասացիր. «Ո՛վ դահճապետ – արքա, ինչու՞ ես իզուր դու ինձ բզկտում։ Կյանքն ինձ համար Քրիստոսն է, իսկ մահը՝ շահ։ Կարո՞ղ ես գնալ ընդդեմ գեղարդի»։ Այս պատճառով քեզ ենք կանչում, մեծահամբավ և մեծանուն սո՛ւրբ Գևորգ.

Ուրախացի՛ր, քանզի հավատի աներկյուղ դավանումի համար անիվի վրա արյունդ հեղեցիր։

Ուրախացի՛ր, քանզի Քրիստոսի կամավոր չարչարանքներին եղար նմանակող։

Ուրախացի՛ր. դու հավատն անսասա՛ն պահապանող։

Ուրախացի՛ր, վշտերին ու տանջանքներին ադամանդից էլ կարծր համբերող։

Ուրախացի՛ր, սու՛րբ Գևորգ, հաղթանակներ բերող մեծամե՛ծ հերոս։

Կոնդակ Ե

Աստվածուղղորդ աստղի նման, ո՛վ սուրբ Գևորգ, երբ հրեշտակի կողմից հրաշքով ապաքինվեցիր և ակներև՝ տանջանքի անիվից ընկրկեցիր, անհավատներին սովորեցրիր հավատալ Համագո Սուրբ Երրորդությանն ու քեզ հետ երգել Նրան՝ Ալելուիա՛։

Տուն Ե

Մարդիկ, տեսնելով Աստծո զորության հրաշքները, որ քեզնով երևացին, հեզորեն ընդունելով քեզնից Քրիստոսի ուսմունքը, աղաղակեցին. «Ճշմարիտ որ, մեծ է քրիստոնյաների Աստվածը»։ Ուստի և մենք գովերգում ենք արժանափառ սուրբ Գևորգիդ.

Ուրախացի՛ր, քանզի փրկության լուսաբեր խոսքով անհավատության խավարը ցրեցիր,

Ուրախացի՛ր, քանզի հավատի մինչ ի մահ դավանմամբ անհավատներին Քրիստոսին դարձրիր։

Ուրախացի՛ր, քանզի դու երկրի բյուր զորքերի առաջնորդում ես դեպի շարքերը երկնային զորքերի,

Ուրախացի՛ր. դու երկնային զորքերի շարքում ես՝ որպես զինվոր Քրիստոսի,

Ուրախացի՛ր. դու փառք և պատիվ խիզախ, քաջարի մարտիկների,

Ուրախացի՛ր, լուսապայծառ նահատակների դասի զա՛րդ պանծալի,

Ուրախացի՛ր, սու՛րբ Գևորգ, հաղթանակներ բերող մեծամե՛ծ հերոս։

Կոնդակ Զ

Ճշմարտության քարոզիչներին՝ հոգեկիր առաքյալներին նմանվելու բաղձանքով դու խաչվեցիր աշխարհին՝ համբերելով վշտերին ու ցավերին։ Քեզ թաղեցին չմարած կրի հնոցում, որտեղ մնացիր երեք օր, ինչպես Հովնան մարգարեն՝ կետ ձկան փորում, որպեսզի քեզնով փառավորվի Իր սրբերով փառավորյալ սքանչելի Տերը։ Նրան դու կրի փոսորակում էլ, ինչպես փառաբանության տաճարում, անբարբառ մեծարում էիր՝ Ալելուիա՛։

Տուն Զ

Գերեզմանից երրորդ օրը լուսակերպ հարություն առած՝ դժոխքին և մահին Հաղթող ամենազոր Հիսուս փրկեց ճգնախոնջ Գևորգիդ դժոխային քայքայումից. նրանք երրորդ օրը քեզ գտան մահվան վիրապում՝ կենդանի, ձեռքերդ առ Աստված բարձրացրած՝ Նրան երգելով, ուստի հույժ զարհուրեցին և սարսափեցին։ Իսկ մենք սքանչանալով քեզ ենք ձոնում, հյուսում այս երգը հաղթական.

Ուրախացի՛ր, քանզի կրի հրե հորը նետվելով՝ սատանայի անսանձ հպարտությունը խայտառակելով՝ նսեմացրիր։

Ուրախացի՛ր, քանզի Աստծո հրաշալի փրկությամբ չարչարողի գազանությունը պախուրցեցիր։

Ուրախացի՛ր, քանզի անհիշաչար ու բարի լինելով՝ քեզ խոշ-

տանգողների համար՝ որպես բարեգործների, աղոթում էիր,

Ուրախացի՛ր. դու հոգում էիր նրանց դարձի գալու մասին, ինչպես Պողոսը՝ հրեաների։

Ուրախացի՛ր, վայելու՛չ այր ցանկությունների,

Ուրախացի՛ր, ընտրյա՛լ անոթ,

Ուրախացի՛ր, սու՛րբ Գևորգ, հաղթանակներ բերող մեծամե՛ծ հերոս։

Կոնդակ Է

Ամեն կերպ ցանկանալով գրավել քո սիրտը կուռքերի մոլորությանը՝ անարգ չարչարողը դիտավորվում է թովել քեզ մոգությամբ. բայց դու, աստվածընտրյա՛լ, Դավթի հետ գոչելով՝ «Աստված է իմ փրկությունն ու փառքը», հավատով երգում էիր Նրան՝ Ալելուիա՛։

Տուն Է

Նոր չարություն մտորեց սատանայի սպասավոր նենգ Դիոկղետիանոսը, երբ խանդաբորբոք կռամոլությունից խենթացած՝ հրամայեց քեզ թույն ըմպել։ Սակայն դու՝ հավատքով և վստահությամբ լեցուն, անվարան, մահաթույնը խմելով, մնացիր անվնաս, աստվածահաճո՛ Գևորգ, ուստի և մենք բացականչում ենք.

Ուրախացի՛ր, քանզի Կենդանի Աստծուն ապավինելով՝ ամոթով չմնացիր։

Ուրախացի՛ր, քանզի խոշտանգողին հողին հավասարեցրիր։

Ուրախացի՛ր, քանզի դևերին դու հեշտորեն վանեցիր։

Ուրախացի՛ր, քանզի մոգերի նյութած դյութանքները քանդեցիր։

Ուրախացի՛ր, քանզի քեզանով տեսնում ենք Աստծուն՝ հրաշափառ հայտնված Իր սրբերի մեջ։

Ուրախացի՛ր, քանզի քեզանով բարեպաշտորեն Քրիստոսի Անունն է փառավորվում մարդկանց մեջ։

Ուրախացի՛ր, սու՛րբ Գևորգ, հաղթանակներ բերող մեծամե՛ծ հերոս։

Կոնդակ Ը

Մոգերից մեկը խիստ և ահազարհուր խորհուրդ տվեց անարգ արքային՝ հրամայել քեզ խոսքով հարություն տալ մեռյալին՝ առ Քրիստոս հավատի ճշմարտությունը հաստատելու համար։ Եվ դու, հավատալի՛ց սուրբ Գևորգ, դույզն-ինչ չերկմտելով, կանչեցիր Նրան, Ով մեռելների Աստվածը չէ, այլ՝ ողջերի. Ալելուիա՛։

Տուն Ը

Ո՛վ երանաշնորհ Գևորգ, դու սիրեցիր Ամենացանկալի և Ամենաքաղցր Հիսուսին քո ամբողջ հոգով և սրտով, և Նա, անսալով հավատքով լի ջերմեռանդ աղոթքիդ, հրամայեց մեռյալին հարություն առնել քո խոսքով՝ վասն Իր Անվան փառավորման և հավատացյալների քաջալերման, ի զարմանս անհավատների և կուրացածների և նրանց աստվածճանաչողության համար։ Այս պատճառով պարտական ենք արժանին քեզ մատուցել.

Ուրախացի՛ր, քանզի Զորաց Տերը քեզնով հրաշքներ ցույց տվեց,

Ուրախացի՛ր, քանզի քո միջոցով մեռյալին գերեզմանից հանեց, հարություն տվեց։

Ուրախացի՛ր, մտքով կուրացած մոլեգին մոգին հավատի լույսով լուսավորեցիր։

Ուրախացի՛ր, շատերին՝ հանուն Քրիստոսի չարչարվածներին, Սրբության Սրբոց երկնուղին ցույց տվեցիր։

Ուրախացի՛ր, զմայլանք և զարմանք Հռոմի։

Ուրախացի՛ր, վեհացու՛մ քրիստոնյաների։

Ուրախացի՛ր, սու՛րբ Գևորգ, հաղթանակներ բերող մեծամե՛ծ հերոս։

Կոնդակ Թ

Բոլոր հրեշտակները գովերգում էին Աստծուն, Ով տվել էր արի Գևորգիդ այսպիսի տոկունություն, քանզի զնդանում անգամ դու եղար հոգեպես արթուն՝ մնալով անդադար աղոթքում։ Այս պատճառով որպես Աստծո շնորհի և գաղտնիքնե-

րի մեծիմաստ ծածկագետ՝ արժանացար Տիրոջ տեսությանը հրաշք տեսիլքով, Ով պսակեց գլուխդ անթոշոմ պսակով։ Եվ թող մենք ևս երգենք և կանչենք քեզ հետ՝ Ալելուիա՛։

Տուն Թ

Բազմախոս և ճարտարախոս հռետորներն անգամ իրենց հմտությամբ չեն կարողանա քեզ արժանի գովերգեր հյուսել՝ հանուն Քրիստոսի և Եկեղեցու կամավոր կրած բյուր ցավերդ ու սխրանքներդ դրվատելու համար։ Մենք ևս՝ անկարող քեզ արժանի գովաբանել, մեծարում ենք սուրբ Գևորգիդ թերի ներբողներով.

Ուրախացի՛ր, քանզի Քրիստոսի և Եկեղեցու համար կամավոր կրած չարչարանքով քո մեջ հին Ադամին խաչեցիր։

Ուրախացի՛ր, քանզի անձնուրաց տառապանքներիդ համար արդարության պսակը Տիրոջ ձեռքից ընդունեցիր։

Ուրախացի՛ր, սկիզբ և կանոն բարեպաշտ ջերմեռանդության։

Ուրախացի՛ր, կերպար հոգևոր հարուստ աղքատության։

Ուրախացի՛ր, քանզի ոչ թե քեզ, այլ Միակ Քրիստոսին հաճոյակամ եղար։

Ուրախացի՛ր, քանզի հանուն Քրիստոսի չարաչար և տարատասակ մահերի պատրաստակամ եղար։

Ուրախացի՛ր, սու՛րբ Գևորգ, հաղթանակներ բերող մեծամե՛ծ հերոս։

Կոնդակ Ժ

Ո՛վ աստվածասեր Գևորգ, ցանկանալով փրկել կռապաշտության խավարի մեջ խորտակվող հոգիները, դու խանդելով խանդեցիր, և Աստծո Տան համար խանդաբորբոք Եղիայի նման, մտնելով կռատուն, Աստծո զորությամբ հալածեցիր դևերին, կուռքերը կործանեցիր, քրմերին պարսավեցիր և որպես հաղթանակող՝ ոչ թե մարդկանց, այլ հրեշտակների հետ երգեցիր Աստծուն՝ Ալելուիա՛։

Տուն Ժ

Պատից էլ քարեղեն, քարացած սրտով անզգամ դահիճդ, չծանելով քո միջոցով բացահայտ հրաշագործող Աստծուն, մինչև վերջ մնաց քարբի նման խուլ՝ խցանելով իր ականջները, ուստի հրամայեց որպես չարագործի՝ քեզ գլխատել անարգանքի կառափնարանում։ Իսկ դու, սու՛րբ Գևորգ, ցավելով նրա հոգու կործանման համար, ուրախությամբ ընդունեցիր մահը. այս պատճառով սիրով հաճոյանում ենք քեզ այս խոսքերով.

Ուրախացի՛ր, քանզի Հավատը, Հույսը և Սերը մինչև վերջ պահեցիր։

Ուրախացի՛ր, քանզի քո ննջումից հետո ևս բազում և մեծ հրաշքներ գործեցիր։

Ուրախացի՛ր, քանզի Աստծո բարեհաճությամբ սպառազեն՝ փառքով պսակվեցիր երկրում։

Ուրախացի՛ր, քանզի մեծափառությամբ, վայելչագեղությամբ ես զարդարված երկնքում։

Ուրախացի՛ր, նիզակակի՛ր այր Աստուծո։

Ուրախացի՛ր, Քրիստոսի բարի՛ զինվոր։

Ուրախացի՛ր, սու՛րբ Գևորգ, հաղթանակներ բերող մեծամե՛ծ հերոս։

Կոնդակ ԺԱ

Ո՛վ քաջնահատակ սուրբ Գևորգ, մյուսներից առավել դու՛ երգերով փառաբանեցիր Ամենասուրբ Երրորդությանը ոչ միայն մտքով և խոսքով, այլև ամբողջովին որպես կենդանի ողջակեզ զոհաբերվելով և նմանվելով մեզ համար խաչված Քրիստոս անարատ Գառին, կամովին կյանքդ զոհեցիր հանուն մերձավորի։ Ուստի, թեպետ և բավարար չեն քո այս սխրանքին ձոնված մեր գովքն ու երգերը՝ գովերգելու քո անհուն սերը, որից մեծը ոչ մեկը չունի, միևնույն է, երախտապարտ լինելով, երգում ենք Իր սրբերով հրաշափառ Տեր Աստծուն՝ Ալելուիա՛։

Տուն ԺԱ

Ճշմարիտ Լույսի լուսընկալ լուսատու եղար երկրի վրա, աստվածընտրյա՛լ սուրբ Գևորգ, քանզի լուսավորում ես հավատավորների սրտերը և Աստծո գիտությանն ես բոլորին ուղղորդում՝ մեզ ևս ուսուցանելով զվարթ կանչել.

Ուրախացի՛ր, քանզի բնակվում ես լուսաճաճանչ հրեշտակային պալատներում։

Ուրախացի՛ր, քանզի ոչ թե պատկերացմամբ, այլ դեմ առ դեմ՝ չխամրող Եռասուրբ Լույսին ես հաղորդակցվում։

Ուրախացի՛ր. դու կերակրում ես աղքատներին և նեղյալներին պաշտպանում։

Ուրախացի՛ր. դու ես տկարներին բուժում և արքաներին օգնության հասնում։

Ուրախացի՛ր, ուղղափառ զորքերի հաղթանակ մարտերում։

Ուրախացի՛ր, մեղավորների փրկության ջերմ աղոթարար և բարեխոս։

Ուրախացի՛ր, սու՛րբ Գևորգ, հաղթանակներ բերող մեծամե՛ծ հերոս։

Կոնդակ ԺԲ

Աստծուց քեզ տրված շնորհն իմանալով՝ քո հիշատակն ենք տոնում, քաջնահատակ սու՛րբ Գևորգ, և ջերմեռանդ աղերսանքով հրաշագործ սրբապատկերիդ գալով՝ Աստծով ամենազոր քո օգնությամբ՝ որպես մշտականգուն աննվաճ բերդապարիսպով, մենք պաշտպանվում ենք։

Տուն ԺԲ

Քո վեհասուրբ վախճանը, որով փառավորվեցիր որպես Քրիստոսի բարի Զինվոր, մենք տոներգելով՝ աղաչում ենք տանջահար ու վշտակիր սուրբ Գևորգիդ. եղի՛ր մեզ ամեն ինչում ի բարին օգնական և լսի՛ր քեզ սրտանց կանչողներիս.

Ուրախացի՛ր, քանզի քեզնով է հավատացյալների Եկեղեցին լուսավորվում։

Ուրախացի՛ր, քանզի քո անունը անհավատների մեջ էլ է փառավորվում։

Ուրախացի՛ր, աներեր վկաների զարմանահրա՛շ փառավորում։

Ուրախացի՛ր, քաջարի նահատակների գո՛վք վսեմագույն։

Ուրախացի՛ր, մեր տկար մարմինների ամոքի՛չ մեծագույն։

Ուրախացի՛ր, մեր հոգիների համար զորե՛ղ բարեխոս։

Ուրախացի՛ր, սու՛րբ Գևորգ, հաղթանակներ բերող մեծամե՛ծ հերոս։

Կոնդակ ԺԳ

Ո՛վ երանագույն քաջնահատակ սուրբ Գևորգ, ընդունիր մեր այս գովերգը և առ Աստված քո ջերմագին բարեխոսությամբ ազատիր մեզ ամենայն չարից, որպեսզի քեզ հետ միասին Նրան փառաբանենք՝ Ալելուիա՛։

(Այս կոնդակը կարդացվում է երեք անգամ)

Տուն Ա

(կարդացվում է նորից)

Կոնդակ Ա

(կարդացվում է նորից)

Աղոթք սուրբ և հաղթաբեր Գևորգ Զորավարին

Ո՛վ ամենագովյալ, քաջնահատակ և հրաշագործ սուրբ Գևորգ, նայիր և սատարիր մեզ քո արագահաս օգնությամբ. աղաչիր Մարդասեր Աստծուն, որպեսզի մեղավորներիս չդատի մեր անօրենությունների համաձայն, այլ գթա մեզ՝ ըստ Իր մեծ գթասրտության։ Մի անտեսիր մեր աղերսանքները, այլ խնդրիր մեր Քրիստոս Աստծուց խաղաղ և աստվածահաճո կյանք մեզ համար, հոգու և մարմնի առողջություն, հողին՝ առատ բերքատվություն, երկրին՝ շենություն և լիություն, և թող ի չարս չգործադրենք քո շնորհիվ ամենագութ Աստծուց առատորեն մեզ տրված բարիքները, այլ՝ ի փառաբանություն Նրա Սուրբ Անվան և ի հռչակումն քո հզոր բարեխոսության։

Եվ թող Տերը բոլոր աստվածասեր բանակներին օգնի ընկճել, պարտության մատնել ախոյաններին։ Եվ առավել թող Նա պարսպյալ պաշտպանի մեզ Իր սուրբ հրեշտակների զինակայությամբ, որպեսզի ազատվենք այս կյանքից մեր երկնասլաց ելքը կասեցնող չարի մեքենայություններից և նրա չարադառն խոչընդոտներից, որոնք երկնքի ներքո են, և անդատապարտ կանգնենք Փառքերի Տիրոջ Գահի առջև։ Լսիր մեզ, ո՜վ Քրիստոսի չարչարանակից սուրբ Գևորգ և անդադար աղաչիր մեզ համար Եռանձնյա Աստվածությանը՝ բոլորի Տիրոջը, որպեսզի Նրա շնորհով և մարդասիրությամբ, նաև քո օգնությամբ և միջնորդությամբ արժանանանք հրեշտակների և հրեշտակապետերի և բոլոր սրբերի հետ արդարադատ Դատավորի աջ կողմը կանգնելու Նրա ողորմածությանը և հավերժ փառավորենք Քրիստոսին Հոր և Սուրբ Հոգու հետ միասին այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից։ Ամեն։

Սուրբ և հաղթաբեր Գևորգին նվիրված եկեղեցիներում կարդացվող աղոթք

Ո՜վ փառապանծ և միշտ գովյալ Քրիստոսի քաջնահատակ սուրբ Գևորգ, քո սուրբ տաճարում հավաքվածներս, խոնարհվելով քո սրբապատկերի առաջ, աղոթում ենք քեզ՝ մեր բաղձանքների հայտնի միջնորդիդ. աղոթի՛ր մեզ հետ և մեզ համար՝ մեզանից աղերսվող և բարեշնորհող Աստծուն բարեգութ, որպեսզի քաղցրությամբ նայի և լսի մեզ՝ Իր ողորմությունն ու շնորհներն աղերսողներիս, և չանտեսի փրկության և կյանքի համար օգտակար մեր բոլոր խնդրանքները, և հաղթանակ պարգևի մերոնց հակառակորդների նկատմամբ։ Նորից ենք քեզ՝ սրբազան Հաղթաբերիդ ծնկաչոք խնդրում. քեզ տրված շնորհով հզորացրու՛ քրիստոնյա զորքերին ռազմի դաշտերում՝ ի կոր կործանելով հարձակվող թշնամիների ուժերը։ Թող պախարակվեն և անարգվեն նրանք, և թող նրանց ժպիրհ հանդգնությունը խորտակվի, որպեսզի գիտենան, որ մեր օգնությունն Աստծուց է։

Դու բոլոր վշտերի և արհավիրքների մեջ գտնվողներին այցելիր, ամուր պաշտպանի՛ր քո մեծազոր միջնորդությամբ։ Աղաչիր Տեր Աստծուն՝ համայն արարածների Արարչին, մեզ փրկել հավերժական տանջանքներից, որպեսզի, քո բարեխոսությունը խոստովանելով, հանապազ փառաբանենք Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից։ Ամեն։

Երրորդ աղոթք սուրբ և հաղթաբեր Գևորգ Զորավարին[1]

Ո՛վ սուրբ, քաջամարտիկ և Հաղթաբեր Զորավար, աստվածահաճո մեծ նահատակ Գևորգ, դու, որ դարեդար սատարել ես քրիստոնյա մարտիկներին՝ լինելով նրանց մարտակից, գերիներին՝ ազատարար, վիրավորներին և ախտացյալներին՝ բժիշկ, քեզ ենք կանչում՝ արագահաս օգնականիդ և մեր հոգիների համար աղոթարարիդ։ Հասի՛ր մեզ օգնության և Ամենասուրբ Երրորդության ամենակարող զորությամբ խորտակի՛ր զազիր և գարշ վիշապին, ինչպես սատակեցրիր լճաբնակ վիշապօձին հնում։ Եվ, ինչպես անցյալում դու չհանդուրժեցիր մեծ լճի օձի չարությունը, որն անընդհատ խժռում էր քաղաքի բնակիչների ուստերին և դուստերին, այսօր ևս կասեցրու դժոխածին գազանի ընթացքը, որը, նման հինավուրց օձին, որ սպանում էր իր ատելավառ թունաբոց շնչով, այսօր նույնպես թունավորում է աշխարհն իր ժահահոտ և ժանտ շնչառությամբ՝ նենգադավերով, ստով և անարդարությամբ։ Ո՛վ Քրիստոսի Սիրո համար նահատակված հաղթական և անպարտելի սուրբ Գևորգ, որ արժանացել ես անթառամ պսակի Երկնային Արքայից, բարեխոսիր մեր Երկնային Տիրոջը քրիստոնյա ազգիս համար, քանզի մենք չենք ցանկանում դիմել երկրային արքաներին, ինչպես հնամյա քաղաքի բնակիչները, որի պատճառով նրանք զոհաբերեցին իրենց զավակներին, այլ ապավինում ենք Երկնային Տիեզերակալ Թա-

[1] Երրորդ աղոթքը գրվել է թարգմանչի կողմից քառասունչորսօրյա պատերազմի ընթացքում

գավորին, և աղերսում Քրիստոս Աստծո բարի և հավատարիմ ծառայիդ. քո չարակործան տեգը մխրճի՛ր մերօրյա վիշապի կոկորդը՝ խոնարհեցնելով չարագլխին մինչև գետին, ինչպես խողխողեցիր լճի հինավուրց օձի երախը, որպեսզի ազատ շնչի աստվածամուխ տեգի գեղարդը պահպանող ժողովուրդը: Այնուհետ դժնի վիշապօձին կապված հանի՛ր հրապարակ, ինչպես հնում պախարակեցիր մեծ լճի չարիքին: Լսել տուր մեզ քո երանավետ խոսքը, որով քաջալերեցիր հնադարյան քաղաքի բնակիչներին. «Մի՛ վախեցեք և ապավինե՛ք Ամենակարող Աստծուն: Հավատացե՛ք Քրիստոսին, Նա է ինձ ուղարկել ձեզ դիվային օձից ազատելու», որից հետո քո սուրսայր սրով բոլորի աչքի առաջ գլխատեցիր զգեստնած ժանտ օձին հրապարակում՝ ի կոր կործանելով: Հասել է ժամը, ո՛վ սիրելի սուրբ, սրատի՛ր չարածին ելունդին, որպեսզի փառավորենք քեզ ուղարկած Հիսուս Քրիստոսին Հոր և Սուրբ Հոգու հետ միասին և Ամենասուրբ Երրորդության բարի և հավատարիմ ծառայիդ այժմ և միշտ և հավիտյան: Եվ թող քեզ նվիրված տաճարներից բխեն կենարար և բուժիչ ջրեր և ամոքայուղ, ինչպես հնում բխեց ախտակործան աղբյուրը քո մեծ և հաղթական հրաշքի պատվին կառուցած եկեղեցում: Ամեն:

Կցուրդ սուրբ Գևորգ Զորավարին

Գերիների ազատարար և աղքատների պաշտպան, ուժահատ ախտացյալների դարմանիչ, ուղղափառ քրիստոնյաներին մարտակից և Հաղթություն շնորհող քաջնահատակ սու՛րբ Գևորգ, աղաչիր Քրիստոս Աստծուն մեր հոգիների փրկության համար:

Մեծարում

Մեծարում ենք քեզ, քաջնահատակ և հաղթաբեր սու՛րբ Գևորգ, և պատվում սրբարար և մաքրագործ քո չարչարանքները, որոնց համբերեցիր հանուն Քրիստոսի մինչև վերջ:

ԱՄԵՆՕՐՅԱ ԵՎ ՏԱՐԲԵՐ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՒՄ ԿԱՐԴԱՑՎՈՂ ԱՂՈԹՔՆԵՐ

ՀԻՍՈՒՍՅԱՆ ԱՂՈԹՔԸ

Տեր Հիսուս Քրիստոս, Որդի Աստուծո, ողորմեա մեղավորիս։

ԱՄԵՆԱԲԱՐԻ ԻՄ ԹԱԳՈՒՀԻ

Ամենաբարի՛ իմ Թագուհի, Հույս իմ, Աստվածածի՛ն, Օթևան որբերի և Պաշտպան աստանդականների, վիրավորվածների Հովանավորուհի, Ուրախություն վշտացյալների։ Դու տեսնում ես իմ նեղությունը, տեսնում ես տխրությունը, օգնի՛ր ինձ՝ որպես վհատի, ուղղորդիր ինձ՝ որպես պանդուխտի։ Դու գիտես իմ վերքը, ազատիր դրանից, ինչպես կամենում ես։ Քանզի չունեմ ես այլ օգնություն Քեզանից բացի, ոչ էլ այլ Բարեխոսուհի, ոչ էլ բարի Մխիթարուհի՝ միայն ու միայն Քեզ, ո՛վ Աստվածամայր։ Դու կպահպանես և կպաշտպանես ինձ հավիտյան։ Ամեն։

ԱՂՈԹՔ ԱՄԵՆ ԳՈՐԾ ՁԵՌՆԱՐԿԵԼՈՒՑ ԱՌԱՋ

(Առանց աղոթքի պետք չէ սկսել և ոչ մի գործ. բավական է մտովի արտասանել «Տեր իմ, օրհնիր», իսկ գործն ավարտելուց հետո՝ «Փա՛ռք քեզ, Աստված», կամ՝ անորոշ իրավիճակներում. «Տեր, թող Քո կամքը լինի»)։

Երկնային Արքա, Մխիթարիչ, Ճշմարտության Հոգի, որ ամենուր ես, ամենայն ինչ Քեզանով է, բարիքների Աղբյուր և կյանքի Պարգևատու. եկ և բնակվիր մեր մեջ, մաքրիր մեզ ամեն մի պղծությունից, Աստված Բարի, փրկիր հոգիները մեր։

Օրհնիր ինձ Տեր, և օգնիր մեղավորիս ավարտել իմ ձեռնարկած գործը, Քո փառքի համար. Ամեն։

ԱՂՈԹՔ ԳՈՐԾԻ ԱՎԱՐՏԻՑ ՀԵՏՈ

Դու ես կատարումը բոլոր բարիքների, Տեր իմ Քրիստոս, լցրու իմ հոգին բերկրանքով և ուրախությամբ և փրկի՛ր ինձ, Միակ Բազումողորմ. Տեր, փա՛ռք Քեզ։

Հիրավի արժանի է Քեզ տալ երանի՝
Աստվածամորդ՝ հավերժ երանելի և
Անարատ, մեր Աստուծո Մորդ։
Քեզ՝ պատվով գերազանց Քերովբեներից
Եվ անհամեմատ փառապանծ՝ Սերովբեներից,
Բանն Աստծուն անապականորեն Ծնողիդ
Մեծարում ենք մենք, Աստվածամայր Իսկուհի։

ԱՂՈԹՔ ՔՐԻՍՏՈՍԻ ՊԱՏՎԱԿԱՆ ԽԱՉԻՆ

(Պահպանիչ աղոթք. ընդդեմ չարի, դիվային ուժերի)

Թող հառնի Աստված, և ցրվեն Նրա թշնամիները, և թող փախչեն Նրա հայացքից Նրան ատողները։ Ինչպես ծուխն է չքվում, թող այդպես չքվեն նրանք. ինչպես մոմն է հալվում կրակի ջերմից, այդպես թող կործանվեն դևերն Աստծուն սիրողների տեսքից, որոնք խաչակնքվելով բարբառում են ավետաձայն. «Հրճվի՛ր, ամենապատվական և կենդանարար Խաչ Տերունական, որ հալածում ես դևերին քեզ խաչված, դժոխք իջած, սատանայի ուժը կործանած և բոլոր թշնամիներին վանելու համար մեզ քեզ՝ Իր պատվական Խաչն ընծայած մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի զորությամբ։ Ո՛վ ամենապատիվ և կենարար Խաչ Տերունական, օգնի՛ր ինձ մեր Տիրուհի և սուրբ Կույս Աստվածամոր և բոլոր սրբերի հետ հավետ։ Ամեն։

ԱՂՈԹՔ ԿՈՂԱԿՑԻ ԸՆՏԱՆԻՔ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

(կարդացվում է նաև զավակների հետ)

Տեր Հիսուս Քրիստոս, Որդի Աստուծո, ողորմի՛ր մեզ, գթա Քո մեղավոր ծառաներին, ներիր մեր մեղքերը՝ կամա թե

ակամա, քանզի Դու Բարի ես և Մարդասեր։ Միակ Գթառատ Աստված գթասրտության, Քո Ամենասուրբ Մոր և Քո բոլոր սրբերի աղոթքներով ամրացրու մեր միությունը Սուրբ Հոգով և խոհեմացրու իմ կողակցին (անունը)՝ վերադառնալու ընտանեկան հարկ։ Ամեն։

Աղոթք ուտելուց առաջ

(կազմվել է ըստ XX դարի մեծ սրբերից մեկի՝ Սերաֆիմ Վիրիցկու առաջարկած սխեմայի)

Հայր մեր, որ յերկինս ես,
սուրբ եղիցի Անուն Քո։
Եկեսցէ Արքայութիւն Քո։
Եղիցին կամք Քո որպէս յերկինս եւ յերկրի։
Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր.
եւ թող մեզ զպարտիս մեր,
որպես եւ մեք թողումք մերոց պարտապանաց։
Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն,
այլ փրկեա զմեզ ի չարէն։
Զի Քո է Արքայութիւն եւ զօրութիւն
եւ փառք յաւիտեանս։ Ամէն։

Ուրախացի՛ր Աստվածածին Կույս, շնորհընկալ Մարիամ, Տերը Քեզ հետ է։ Օրհնյալ ես Դու կանանց մեջ և օրհնյալ է Քո որովայնի Պտուղը, քանզի մեր հոգիների Փրկչին ես ծնել։ Ամենասրբուհի՛ Տիրամայր, բարեխոս եղիր վասն մեր՝ մեղավորացս, այժմ և մեր մահվան ժամին։ Ամեն։

Աստվածածնի մաղթանքների հետ ընդունիր, ո՛վ Բարեգութ, և աղերսագին խնդրանքներն անմահ, լուսակերպ հրեշտակների, որոնք մեզ համար մաքուր բերանով գոչում են անլուռ հանապազօրյա բարեխոսությամբ։ (Գրիգոր Նարեկացի)

Հետո՝ սեղանի օրհնություն. *Խաղաղությամբ ճաշակենք այս կերակուրները, որոնք պատրաստված են մեզ համար Տիրոջ կողմից. օրհնյալ է Տերն իր պարգևներում։ Ամեն։*

Աղոթք ուտելուց հետո

Գոհանում ենք Քեզնից, Քրիստոս Աստված մեր, որ հագեցրիր մեզ Քո երկրային բարիքներով. մի՛ զրկիր մեզ նաև Քո Երկնային Արքայությունից, այլ ինչպես Քո աշակերտների մոտ եկար, Փրկի՛չ, խաղաղություն տալով նրանց, եկ և փրկի՛ր մեզ: Ամեն:

Աղոթք աշխարում ամենայն չարի (աղետներ, պատերազմ, համաճարակ և այլն) դադարեցման

Թող փառաբանությամբ դիմեն մեր Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին. «Սու՛րբ, Անմա՛հ, փրկի՛ր աշխարհը մեծ աղետից»: Թող մեր Տեր Հիսուս Քրիստոսի Արյունը մեր արդարացումը լինի: Ո՛վ Հավերժ և Ամենասփյուռ Աստված, ողորմի՛ր մեզ, ցույց տուր Քո գթասրտությունը հանուն Քո Որդու Արյան և խաչի վրա կրած Նրա չարչարանքների:

Աղոթք միաբանությամբ

Տեր Հիսուս Քրիստոս, Աստուծո՛ Որդի, Դու ասել ես Քո Աստվածային շուրթերով. «Եթե ձեզնից երկուսը միաբանվեն երկրի վրա որևէ խնդրանքի համար, ինչ էլ որ խնդրեն, կկատարվի նրանց համար իմ Հոր կողմից, որ Երկնքում է. որովհետև ուր երկու կամ երեք հոգի հավաքված լինեն իմ Անունով, այնտեղ էմ Ես, նրանց մեջ»: Անփոփոխ են Քո խոսքերը, Տեր, գթասրտությունդ անկողմնակալ է, և մարդասիրությունդ՝ անսահման: Ուստի և աղաչում ենք Քեզ՝ շնորհի՛ր մեզ, Տե՛ր, համաձայնության եկած Քո (անունները) ծառաների (այսինչ) խնդրանքին իրականացում: Բայց ո՛չ ինչպես մենք ենք կամենում, այլ ինչպես Դու: Թող Քո կամքը լինի հավիտյանս: Ամեն:

Աղոթք բերքատվության համար

Արարի՛չ երկնքի և երկրի, որ պսակել ես երկինքը աստղաբույլերով և գեղազարդել պայծառ լուսատուներով, իսկ երկիրը պատվել բերքով՝ հօգուտ մարդկության, որ տվել ես Քո Աջի տակ ծերացած մարդկային ցեղին բերկրել լուսատուների փայլ ու լույսով վերը՝ երկնքում, իսկ ներքևում՝ վայելել

երկրի բարիքները. աղոթում ենք Քեզ հորդառատ, բեղուն և արդյունաշատ անձրևներ պարգևելու համար. արա՛ այնպես, որ երկիրը պտղաբերի, որ նա պարգևի բերքի մեծ առատություն հանուն Քո մարդասիրության և բարության: Հիշի՛ր Քեզ կանչողներին, պատվիր Քո սուրբ և միակ Եկեղեցին և լսիր մեր ձայնն ու աղոթքները և օրհնիր ողջ երկիրը Քո Միածին Հիսուս Քրիստոսի միջոցով, Որի միջոցով Քեզ փառք և իշխանություն Սուրբ Հոգով այժմ և հավիտյանս հավիտենից: Ամեն:

Անզավակ ամուսինների աղոթքը

(Տիրոջից երեխա ստանալու համար)

Լսի՛ր մեզ, Գթասիրտ և Ամենակարող Աստված, և թող մեր պաղատանքներով Քո շնորհը հասնի մեզ: Ողորմած եղիր, Տեր, մեր աղոթքի հանդեպ, հիշիր մարդկային ցեղի բազմացման Քո օրենքը և եղիր մեր գթառատ Պաշտպանը, և թող Քո օգնությամբ իրագործվի Քո իսկ կողմից հաստատված կարգը. Դու Քո ամենիշխան կամքով և զորությամբ ոչնչից ստեղծեցիր ամեն ինչ, նաև մարդուն արարեցիր՝ ըստ Քո պատկերի, և վեհ ու հոգևոր խորհրդով սրբագործեցիր ամուսնական միությունը՝ որպես Եկեղեցու հետ Քրիստոսի միության խորհուրդի նախակերպար: Նայի՛ր, Գթասիրտ, ամուսնական դաշինքով միավորված, Քո օգնությանը կարոտ և Քեզ աղոթող (անունները) ծառաներիդ, և թող Քո ողորմությունը տեղա նրանց վրա, թող նրանք լինեն պտղավետ և տեսնեն իրենց որդիների որդիներին անգամ մինչև երրորդ և չորրորդ սերունդ, թող հասնեն նրանք ցանկալի ծերության և մտնեն Երկնքի Արքայություն մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով, Որին վայել է ամենայն փառք, պատիվ և երկրպագություն Ամենակալ Հոր և Ամենասուրբ Հոգու հետ միասին այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից: Ամեն:

Աղոթք ննջեցյալ ծնողի/տատի/պապի համար

Հիշիր, Տեր Աստված մեր, հավերժական կյանքի հույսով և հավատով ննջած Քո (անունը) ծառային/աղախնուն և, քանզի Դու Բարի ես, Մարդասեր, մեղքերը ներող և անօրենություն-

ները հարթող, թողությո՛ն տուր, ների՛ր կամա թե ակամա գործած նրա բոլոր մեղքերը, Տեր, հառնիր նրան և արժանացրու Քո երկրորդ Գալստյանը հաղորդակցվելու Քո անվախճան բարիքներին, հանուն որոնց նա հավատաց Քեզ՝ Միակ Ճշմարիտ և Մարդասեր Աստծուդ: Քանզի Դու ես Քո (անունը) ծառայի/աղախնու հարությունը, կյանքը և հանգստությունը, Քրիստոս Աստված մեր, և Քեզ փառք ենք տալիս Քո Անսկիզբ Հոր և Ամենասուրբ Հոգու հետ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից: Ամեն:

Աղոթք ննջեցյալ զինվորների համար

Հանգստություն տուր, Տեր, Քո ննջեցյալ ծառաների՝ (անունները) մարտիկների և բոլոր ուղղափառ քրիստոնյաների հոգիներին, և ների՛ր նրանց բոլոր մեղքերը՝ կամա թե ակամա, և արժանացրու Քո Երկնային Արքայությանը: Ամեն:

Աղոթք յուրաքանչյուր քրիստոնյա ննջեցյալի համար

Հիշիր, Տեր Աստված մեր, հավերժական կյանքի հավատով և հույսով ննջած Քո (անունը) ծառային/աղախնուն և, քանզի Դու Բարի ես, Մարդասեր, մեղքերը ներող և անօրենությունները հարթող, թողությո՛ն տուր, ների՛ր կամա թե ակամա գործած նրա բոլոր մեղքերը, փրկի՛ր հավերժ տանջանքներից և գեհենական կրակից, և արժանացրու նրան հաղորդակցվելու Քո անվախճան բարիքներին և անանց ուրախությանը, որոնք պատրաստված են Քեզ սիրողների համար, քանզի, թեկուզ և մեղանչել է նա, սակայն չի հրաժարվել Քեզանից, այլ անկասկած հավատացել է Սուրբ Երրորդությամբ փառաբանյալ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն և մինչև անգամ իր վերջին շունչը ուղղափառորեն դավանել Սուրբ Երրորդությամբ Միակ Աստծուն: Ուստի, եղի՛ր ողորմած, Տեր, և նրա այդ հավատն առ Քեզ թող փոխարինի բարի գործերին, և որպես Գթառատ Աստված՝ արժանացրու նրան հանգստանալու Քո սրբերի հետ, քանի որ չկա մարդ, որն ապրի և չմեղանչի: Միայն Դու ես զերծ ամենայն մեղքից, և Քո ճշմարտությունը մշտնջենա-

վոր է, և Դու Միակն ես գթառատության, ողորմության և սիրո Աստված, և Քեզ փառք ենք վերառաքում՝ Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից։ Ամեն։

Երեխաների ամենօրյա օրհնություն. ծնողի աղոթքը

Տեր Հիսուս Քրիստոս, Որդի Աստուծո, հանուն Քո Մաքրամաքուր Մոր աղոթքների լսի՛ր ինձ, Քո անարժան (անունը) ծառային/աղախնուն։ Տեր, Քո բարեգութ իշխանության տակ են իմ (անունները) զավակները. ողորմիր և փրկիր նրանց Քո Անվան սիրույն։

Ամենաբարի՛ Տեր, ներիր Քո դեմ գործած նրանց բոլոր կամա թե ակամա մեղանչումները։ Դիր նրանց Քո պատգամների ճշմարիտ ուղու վրա և լուսավորիր նրանց միտքը Քո լույսով՝ հոգու փրկության և մարմնի կազդուրման համար։ Տեր, օրհնիր նրանց Քո տիրակալության ամեն վայրում։ Տեր, պահպանիր նրանց Քո Պատվական և Կենարար Խաչի զորությամբ՝ Քո սուրբ հովանու ներքո, սուրացող փամփուշտից, նետից, սրից, հրից, մահաբեր վերքից, ջրասույզ լինելուց և հանկարծահաս մահից։ Տեր, պարսպատիր նրանց երևելի և աներևույթ բոլոր թշնամիներից, յուրաքանչյուր պատուհասից, չարիքից, դժբախտությունից, դավաճանությունից և գերությունից։ Տեր, ամոքիր նրանց ամենայն ախտից և վերքից, ամեն մի անմաքրությունից, և սփոփիր նրանց հոգեկան տանջանքները։ Տեր, պարգևիր նրանց Քո Սուրբ Հոգու շնորհն ի երկարակեցություն, քաջառողջություն և ողջամտություն՝ ամենայն բարեպաշտությամբ և սիրով՝ իրենց շրջապատող առաջնորդող, մերձավոր և հեռավոր մարդկանց հետ խաղաղությամբ և համերաշխությամբ ապրելու համար։ Տեր, բազմապատկիր և զորացրու նրանց մտավոր ունակություններն ու մարմնական կարողությունները և առողջ, բարեհաջող վերադարձրու նրանց ծնողական օթևան։ Տեր իմ, շնորհի՛ր ինձ՝ Քո անարժան և մեղավոր (անունը) ծառային/աղախնուն ծնողական օրհնություն իմ երեխաներին (անունները), առավոտյան (ցերեկային, երեկոյան, գիշերային) այս ժամին, քանզի Քո Թագավորությունն անվախճան է, ամենազոր և ամենիշխան։ Ամեն։

Երախտագիտության աղոթք Աստծո յուրաքանչյուր բարերարության համար

Սուրբ հրեշտակաց և հրեշտակապետաց երկնագումարը համայն երկնային ուժերի հետ երգում է Քեզ և փառաբանում. «Սուրբ, Սուրբ, Սուրբ էս, Տեր Զորությանց, լի են երկինքն ու երկիր փառքով Քո»: Ովսաննա՜ բարձունքներում, օրհնեալ է Տիրոջ Անվամբ Եկողը, ովսաննա՜ բարձունքներում: Փրկի՛ր ինձ, Բարձրյա՛լ Արքա, փրկիր, սրբիր և սրբացրու, Աղբյուր սրբության, քանզի Քեզնով են բոլոր արարածները զորանում. Քեզ են սրբերգում լուսերամ անթիվ զորքերը եռասուրբ երգը: Ես էլ՝ անարժանս, աղաչում եմ Քեզ, որ նստում ես անմատչելի լույսի մեջ, և Ումից դողում են բոլոր արարածները՝ լուսավորիր իմ միտքը, մաքրիր սիրտս և բաց շուրթերս, որպեսզի կարողանամ արժանապես Քեզ երգել. Սուրբ, Սուրբ, Սուրբ էս, Տեր, այժմ և միշտ և անվախճան հավիտյաններում: Ամեն:

Այլ երախտագիտության աղոթք

Տեր Հիսուս Քրիստոս, Աստված մեր, որ ամենառատ գթությունների և պարգևների Աստվածն ես, Քո գթասրտությունն անսահման - անչափելի է և մարդասիրությունդ՝ անհուն օվկիանոս: Ընկնելով Քո մեծության առաջ, մենք ահով ու դողով՝ որպես անարժան ծառաներ, Քեզ ենք բերում մեր սրտի երախտագիտությունը Քո բոլոր շնորհների համար: Որպես Ամենակալ և Շնորհապարգև Տիրոջ՝ Քեզ ենք մենք փառաբանում, գովերգում և մեծարում և ծունկ խոնարհելով՝ նորից գոհանում: Խոնարհաբար Քո անճառելի գութն ենք թախանձում, Տե՛ր, աղաչելով. ինչպես Դու այժմ ընդունեցիր մեր աղերսներն ու կատարեցիր դրանք, այդպես էլ ապագայում տուր մեզ այրվել Քո, մերձավորի և ամենայն առաքինությունների հանդեպ սիրո կրակով, և արժանի արա մեզ հանապազ գոհանալ և փառաբանել Քեզ Անսկիզբ Հորդ և Բարի և Համագո Ամենասուրբ Հոգուդ հետ միասին: Ամեն:

Աստվածային Սուրբ Պատարագից հետո բերվող շնորհակալական աղոթք

Շնորհապարտ եմ Քեզ՝ երկնաստեղծ վերերկնային Արքայիդ, և իմ ողջ էությամբ՝ հոգով և մարմնով աղաչում, գովում, փառաբանում և մեծարում եմ Քեզ, քանզի արժանացրիր ինձ՝ մեղավորիս, այսօր Աստվածային այս Տաճարում տեսնել Քո պատարագամատույց սպասավորների կողմից մեր մեղքերի համար Քեզ ընծայաբերած՝ զոհաբերած Աստվածային, բարեհաճ, անարյուն և բանական Զոհն ի հիշատակ մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի մաքրամաքուր, փրկարար չարչարանքների, հրաշափառ հարության, Երկինք Համբարձման և ահավոր Երկրորդ Գալստյան, հանուն որոնց աղաչում եմ Քեզ. սրբի՛ր բոլոր իմ մեղքերը, ջնջիր դրանք և ներիր, և օգնիր ինձ՝ կյանքիս բոլոր օրերում հիշելու Քո բարիքները և մաքուր խղճով Քեզ գոհություն և աղոթքներ վերառաքել՝ Անսկիզբ Հորդ, Քո Միածին Որդու և Ամենասուրբ, Բարի և Կենարար Սուրբ Հոգու հետ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից։ Ամեն։

(Սուրբ Հովհաննես Կրոնշտադցի)

Սուրբ Հովհաննես Կրոնշտադցու աղոթքը

Տե՛ր, Քո Անունն է Սէր. մի վանիր ինձ՝ մոլորյալիս։

Քո Անունն է Զորություն. զորացրու ինձ՝ ուժահատյալիս և խորտակվողիս։

Քո Անունն է Լույս. լուսավորիր իմ հոգին՝ կենցաղային կրքերից մթագնած։

Քո Անունն է Խաղաղություն. խաղաղեցրու անհանգիստ իմ հոգին։

Քո Անունն է Գթություն. մի դադարիր գթալ ինձ։

Գործ ձեռնարկելուց առաջ

Ուղղիր մեր ձեռքերի գործերը, Տեր, մեր ձեռքերի գործերը հաջողեցրու մեզ։

(Սաղմոս 89)

Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն
այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից։ Ամեն։

Կենդանիների հիվանդության եւ տառապանքի դեպքում

Ամենայն շունչ թող օրհնի Տիրոջը։

(Սաղմոս 150)

Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն
այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից։ Ամեն։

ՊԱՀՊԱՆԻՉ ԱՂՈԹՔՆԵՐ

Ջուրը չես ընկղմվի, հուրը չի այրի, գնդակը չի խոցի, և ռումբը չի պայթի, եթե սեփական աղոթական կանոնին առավոտյան, երեկոյան և ճանապարհից առաջ գումարես «Ուրախացի՛ր... Մարիամ» աղոթքը երեք անգամ, 26, 39, 50 և 90 սաղմոսները և վերջում՝ Խաչի պահպանության աղոթքը.

Ուրախացի՛ր Աստվածածին Կույս, շնորհընկալ Մարիամ, Տերը Քեզ հետ է։ Օրհնյալ ես Դու կանանց մեջ և օրհնյալ է Քո որովայնի Պտուղը, քանզի մեր հոգիների Փրկչին ես ծնել։

(երեք անգամ)

Սաղմոս 26

Տերն իմ լույսն է ու կյանքը, ումի՞ց վախենամ. Տերն իմ կյանքի ապավենն է, ումի՞ց ես դողամ։

Երբ չարագործ նեղիչներս ու թշնամիներս մոտեցան ինձ՝ մարմինս ուտելու, նրանք թուլացան ու ընկան։

Եթե իմ դեմ պատերազմ պատրաստվի, սիրտս չի սոսկա. եթե իմ դեմ ճակատամարտի ելնեն, միևնույն է, Տե՛ր, հույսս Քեզ վրա եմ դնելու։

Մի բան եմ խնդրել Տիրոջից, և նույնն եմ աղաչում, որ կյանքիս բոլոր օրերին բնակվեմ Տիրոջ տանը, տեսնեմ Տիրոջ վայելչությունը և հրաման տամ Նրա տաճարում։

Չար օրերին Նա ինձ թաքցրեց Իր խորանում, պատսպարեց ինձ Իր խորանի ծածկի տակ։

Ժայռից բարձր պահեցիր ինձ, այժմ էլ գլուխն իմ բարձրացրու թշնամիներիս վրա։

Շրջեմ և օրհնության պատարագ մատուցեմ Նրա վրանում, օրհներգեմ և սաղմոս երգեմ Տիրոջը։

Լսի՛ր ձայնն իմ, Տեր, քանզի Քեզ կանչեցի, ողորմի՛ր ինձ և ականջ դիր, քանզի սիրտն իմ Քեզ դիմեց, և երեսն իմ փնտրեց, փնտրեց Քո երեսը, Տե՛ր։

Մի՛ դարձրու երեսդ ինձնից և բարկությամբ մի՛ շրջվիր Քո ծառայից։

Իմ Օգնականը եղիր, Տե՛ր, և մի՛ անարգիր ինձ ու մի՛ լքիր, Փրկիչ Աստված իմ։

Իմ հայրն ու մայրը լքեցին ինձ, բայց Տերն ինձ ընդունեց։

Սովորեցրու ինձ, Տեր, Քո ճանապարհը և առաջնորդիր ինձ Քո ուղիղ շավիղներով։

Իմ թշնամիների պատճառով ինձ նեղողների ձեռքը մի՛ մատնիր. իմ դեմ մեղսագործ վկաներ ելան և չարախոսեցին ինձ իրենց անիրավությամբ։

Հավատում եմ, որ կտեսնեմ Տիրոջ բարությունը ողջերի երկրում։

Սպասի՛ր Տիրոջն ու քաջալերվի՛ր, սիրտդ թող ամրապնդվի, Տիրո՛ջը սպասիր։

Սաղմոս 39

Համբերությամբ սպասեցի Տիրոջը, և Նա նայեց ինձ ու լսեց իմ աղոթքը։

Նա ինձ հանեց տառապանքի փոսից, ցեխից

ու տիղմից. ոտքերս ժայռի վրա հաստատեց և ուղղեց իմ քայլերը։

Բերանս դրեց մի նոր օրհներգ՝ օրհներգը մեր Տեր Աստծո։ Շատերը պիտի տեսնեն ու վախենան և իրենց հույսը դնեն Տիրոջ վրա։

Երանի՛ այն մարդուն, որի հույսը Տիրոջ Անունն է, և որը ունայնությանն ու սուտ մոլորությանն ուշ չի դարձրել։

Բազում են Քո սքանչելիքները, Տեր իմ Աստված, Քո խորհուրդներում ոչ ոք նման չէ Քեզ։ Պատմեցի ու խոսեցի դրանց մասին, բայց դրանք անթիվ են։

Զոհերն ու ընծաները հաճելի չեղան Քեզ, ինձ լսողություն տվեցիր և ողջակեզներ ու մեղքի զոհեր չպահանջեցիր։

Այն ժամանակ ասացի, թե՝ «Ահա գալիս եմ ես, գրքի գլուխներում գրված է իմ մասին։ Ուզեցի կամքդ կատարել, Աստված իմ, և օրենքդ, որ իմ ներսում է»։

Մեծ հավաքներում ես Քո արդարությունն ավետեցի, և արդ շրթունքներս չեմ կտրում Քեզնից։

Տեր, Դու գիտես, որ Քո արդարությունը, Քո ճշմարտությունն ու փրկությունը ծածուկ չեմ պահել իմ սրտում, պատմել եմ և մեծ հավաքներից չեմ թաքցրել Քո ողորմությունն ու ճշմարտությունը։

Իսկ Դու, Տե՛ր, գթությունդ հեռու մի՛ պահիր ինձնից, Քո ողորմությունն ու ճշմարտությունը միշտ պահապան լինի ինձ։

Ինձ պաշարեցին չարիքներ, որոնք անթիվ էին. անօրենություններս ինձ վրա հասան, և ես չկարողացա նկատել. գլխիս մազերից ավելի շատ եղան դրանք, և սիրտս ինձ լքեց։

Կամեցի՛ր փրկել ինձ, Տեր, նայիր, որ օգնես ինձ, Տեր։

Թող խայտառակվեն ու ամոթահար լինեն նրանք, որ ուզում էին կործանել ինձ. թող ետ դառնան ու ամոթով մնան ինձ չար կամեցողները։

Թող շուտափույթ անարգանք կրեն նրանք, որ չարախնդում էին իմ դեմ։

Թող Քեզանով ցնծան և ուրախանան բոլոր նրանք, որ փնտրում են Քեզ, Տեր։ Քո տված փրկությունը սիրողներն ամեն ժամ թող ասեն՝ «Մեծ է Աստված»։

Ես աղքատ եմ և տնանկ, Աստված, հո՛գ տար իմ մասին. իմ Օգնականն ու Պաշտպանը Դու ես, Աստված իմ, մի՛ ուշացիր։

Սաղմոս 50

Ողորմիր ինձ, Աստված, ըստ Քո մեծ ողորմության, ըստ Քո առատ գթության քավիր իմ անօրենությունները։

Առավել լվա ինձ իմ անօրենություններից և մաքրիր ինձ իմ մեղքերից։

Իմ անօրենությունները ես ինքս գիտեմ, և իմ մեղքերն իմ առջև են ամեն ժամ։

Քո դեմ միայն մեղանչեցի, Տեր, և Քո առջև չարիք գործեցի, այնպես որ արդար կլինես Քո խոսքերում և հաղթող՝ դատելիս։

Անօրենությամբ հղացավ և մեղքի մեջ ծնեց ինձ իմ մայրը։
Դու, Տեր, ճշմարտությունը սիրեցիր, անհայտներն ու ծածկվածները Քո իմաստությամբ հայտնեցիր ինձ։
Ցողիր ինձ մշտիկով, և ես մաքուր կլինեմ, լվա ինձ, և ես ձյունից էլ սպիտակ կլինեմ։
Լսել տուր ինձ ցնծություն և ուրախություն, և կցնծան ոսկորներն իմ տառապած։
Դարձրու երեսդ իմ մեղքերից և քավիր իմ բոլոր անօրենությունները։
Սուրբ սիրտ հաստատիր իմ մեջ, Աստված, և ուղիղ հոգի նորոգիր իմ ներսում։
Մի զրկիր ինձ, Տեր, Քո երեսից, և մի հանիր ինձանից Քո Սուրբ Հոգին։
Տուր ինձ Քո փրկության ցնծությունը և Քո Տիրական Հոգով զորացրու ինձ։
Անօրեններին կսովորեցնեմ Քո ճանապարհը, և ամբարիշտները դեպի քեզ կդառնան։
Փրկիր ինձ արյունահեղությունից, Աստված, Աստված իմ փրկության, կցնծա իմ լեզուն Քո արդարությամբ։
Տեր, եթե իմ շուրթերը բանաս, իմ բերանը կերգի Քո օրհնությունները։
Թե կամենայիր, զոհեր կմատուցեինք, բայց Դու ողջակեզներն իսկ չհաճեցիր։
Զոհն Աստծուն խոնարհ հոգին է, սուրբ սիրտն ու խոնարհ հոգին Աստված չի արհամարհում։
Բարի արա, Տեր, Քո կամքով Սիոնին, և թող շինվեն Երուսաղեմի պարիսպները։
Այնժամ կհավանես արդարության զոհերը, երբ զվարակները՝ որպես ուխտի պատարագներ, բարձրացնեն Քո սեղանին։

Սաղմոս 90

Ով ապրում է Բարձրյալի աջակցությամբ, երկնքում կհանգչի Աստծո հովանու տակ։

Տիրոջը կասի. «Դու էս ինձ ընդունողը, ապավեն իմ Աստված, Որի վրա եմ դրել իմ հույսը»։

Նա ինձ կփրկի որսորդի թակարդից ու խռովեցուցիչ խոսքերից։

Իր թիկնամեջով կպահի կպաշտպանի քեզ, և դու ապահովություն կունենաս նրա թևերի հովանու տակ։

Նրա ճշմարտությունը որպես զենք քո շուրջը կլինի։

Դու չես վախենա գիշերվա զարհուրանքից և ոչ էլ ցերեկվա սլացող նետից, խավարում շրջող բանից, և կեսօրին դևի գայթակղությունից։

Քո կողքին հազարներ կընկնեն, և քո աջին՝ տասնյակ հազարներ, բայց քեզ ոչինչ չի մերձենա։

Բավական է, որ քո աչքով նայես, և դու կտեսնես մեղավորների ստացած հատուցումը.

քանզի Դու, Տեր, իմ հույսն ես։ Բարձրյալին քեզ ապավեն դարձրիր։

Չարիքը չի հասնի քեզ, և տանջանքները չեն մոտենա քո տան հարկին։

Իր հրեշտակներին հրամայված է քո մասին, որ պահպանեն քեզ քո բոլոր ճանապարհներին։

Իրենց բազուկների վրա պիտի վերցնեն քեզ, որ երբեք ոտքդ քարի չխփես։

Դու կքայլես իժերի ու քարբերի վրայով, ոտքով կկոխոտես առյուծին ու վիշապին։

Քանի որ հույսն Ինձ վրա դրեց, Ես կփրկեմ նրան, նրան հովանի կլինեմ, քանզի Անունս ճանաչեց։

Ինձ ձայն կտա՝ ու կլսեմ նրան, և նրա հետ կլինեմ նեղության մեջ. կփրկեմ ու կփառավորեմ նրան։

Բազում օրերով նրան կլիացնեմ ու ցույց կտամ նրան Իմ փրկությունը։

Աղոթք Խաչի պահպանության

Թող հառնի Աստված, և ցրվեն Նրա թշնամիները, և թող փախչեն Նրա հայացքից Նրան ատողները։ Ինչպես ծուխն է չքվում, թող այդպես չքվեն նրանք. ինչպես մոմն է հալվում կրակի ջերմից, այդպես թող կործանվեն դևերն Աստծուն սիրողների տեսքից, որոնք խաչակնքվելով բարբառում են ավե-

տաձայն. «Հրճվի՛ր, ամենապատվական և կենդանարար Խաչ Տերունական, որ հալածում ես դևերին քեզ խաչված, դժոխք իջած, սատանայի ուժը կործանած և բոլոր թշնամիներին վանելու համար մեզ քեզ՝ Իր պատվական Խաչն ընծայած մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի զորությամբ։ Ո՛վ ամենապատիվ և կենարար Խաչ Տերունական, օգնի՛ր ինձ մեր Տիրուհի և սուրբ Կույս Աստվածամոր և բոլոր սրբերի հետ հավետ։ Ամեն։

* * * * *

Աղոթք երեխաների եւ սանիկների համար

Ամենաքա՛ղցր Հիսուս, Աստված իմ սրտի, Դու ինձ պարգևել ես երեխաներ՝ ըստ մարմնի, նրանք Քոնն են՝ ըստ հոգու։ Ե՛վ իմ, և՛ նրանց հոգիները Դու ես քավել Քո անգին Արյամբ։ Հանուն Քո Աստվածային Արյան, Քաղցրալի՛ր Փրկիչ, աղաչում եմ Քեզ, հպվիր Քո շնորհով իմ երեխաների (անունները) և սանիկների (անունները) սրտերին, պաշտպանիր՝ պատնեշիր նրանց Քո Աստվածային երկյուղով, հեռու՛ պահիր նրանց հոռի և չար սովորություններից և հակումներից, ուղղորդիր նրանց ճշմարտության և բարու ճանապարհով, զարդարիր նրանց կյանքն այն ամենով, ինչը բարի է և փրկարար։ Կարգավորիր նրանց ճակատագրերը, ինչպես Ինքդ ես ցանկանում, և փրկիր հոգիները։ Նրանց ճակատագրերը Դու ես տնօրինում։ Ամեն։

Երեխաների ուսուցումից առաջ կարդացվող աղոթք

Տեր Աստված մեր և Արարիչ մեր, Դու մարդկանց զարդարեցիր Քո պատկերով, ընտրյալներիդ սովորեցրիր Քո Օրենքը՝ այնպես, որ դրան անսացողները հիանում են։ Երեխաներին բացահայտեցիր իմաստության գաղտնիքները, Սողոմոնին և իմաստության բոլոր որոնողներին այն շնորհեցիր։ Արդ, բաց Քո (անունները) ծառաների սրտերը, մտքերն ու շուրթերը, որպեսզի հասկանան Քո Օրենքի զորությունը և հաջողությամբ սերտեն իրենց դասավանդվող օգտակար ուսմունքը Քո Ամենասուրբ Անվան փառքի, Քո Սուրբ Եկեղեցու օգուտի և բարե-

զարդման և Քո բարի ու կատարյալ կամքն ըմբռնելու, ճանաչելու համար։ Տեր, հեռու պահիր նրանց դիվային բոլոր դավերից, պահիր Քրիստոսի հավատքի և մաքրության մեջ նրանց ողջ կյանքի ընթացքում։ Եվ թող նրանք լինեն հզոր՝ բանականությամբ և պատվիրանապահությամբ և այսպես սովորած՝ փառաբանեն Քո Ամենասուրբ Անունը, լինեն Քո Արքայության ժառանգորդները, զի Դու գթությամբ զորեղ Աստված ես, և բարի՝ զորեղությամբ, և Քեզ են վայելում պատիվը, բովանդակ փառքն ու երկրպագությունը՝ Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից։ Ամեն։

Աղոթք համաճարակի ժամանակ

Տեր Աստված մեր, Քո սուրբ Գահի բարձրունքից լսի՛ր մեզ՝ Քո բարեսրտությունը մեր մեղքերով բարկացրած և Քո բարեգթությունը հեռացրած մեղսավոր ու անարժան ծառաներիս, և մի հատուցիր մեզ պատժելով, այլ հեռացրու Քո ահավոր ցասումը՝ արդարորեն մեզ վրա հասած. դադարեցրու կործանարար պատուհասը, հեռացրու Քո սարսափելի սուրը՝ անտեսանելի և անժամանակ մեզ սրատող, և խնայի՛ր Քո թույլ, դժբախտ, և Քեզ՝ մեր պաղատանքները լսող և բարեփոխում շնորհող ողորմած Աստծուդ ապաշխարությամբ և նվաղկոտ սրտով շտապող արցունքահեղձ ծառաներիդ, և մի մատնիր մեր հոգիները մահվան։ Քանզի միայն Քոնն են ողորմածությունն ու փրկությունը, Աստվա՛ծ մեր, և Քեզ փառաբանություն ենք մատուցանում՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից։ Ամեն։

Աղոթք անորոշության դեպքում, թե ինչպես է պետք վարվել

Տե՛ր, ես մեղավոր մարդ եմ և չեմ կողմնորոշվում, թե ինչպես վարվեմ, սակայն Դու, Գթասի՛րտ, խոհեմացրու ինձ և ցույց տուր, թե ինչպես է պետք վարվել։

Աղոթքի ժամանակ ցրվածությամբ, անուշադրությամբ եւ անփութությամբ տառապող մարդու աղոթքը

Տե՛ր, հավաքիր իմ ցրված միտքը և մաքրիր իմ քարացած սառցե սիրտը՝ տալով ինձ ապաշխարություն, ինչպես Պետրոսին, հառաչանք, ինչպես մաքսավորին և արցունքներ, ինչպես պոռնկուհուն, և թող բարձրագոչ Քեզ կանչեմ. Աստվա՛ծ իմ, փրկի՛ր ինձ, քանզի Դու Միակն էս Բարեսիրտ և Մարդասեր։

Բանտարկյալի աղոթք

(բանտարկյալների համար կարդացվող)

ԿՑՈՒՐԴ

Ամենագթառատ Աստված, Դու աղոթքների սիրույն ազատեցիր Մանասեին կապանքներից և դառը բանտարկությունից. նույնկերպ և Քո աղոթակարոտ ծառային ազատիր շղթաներից և զնդանից, աղաչում ենք Քեզ, և փրկիր բոլոր չար իրավիճակներից ու պայմաններից, քանզի Միակդ էս Մարդասեր։

ԿՈՆԴԱԿ

Որպես գթության Աղբյուր և բարու Ծովանդունդ՝ Քրիստոս Աստված մեր, մի անտեսիր վշտերի և չարաբախտության մեջ Քեզ հավատով կանչողներիս, քանզի գթառատ ես, այլ ողորմիր և կապանքներից շուտով ազատիր, որպեսզի Քեզ երգենք՝ Ալելուիա։

ԱՂՈԹՔ

Տեր Հիսուս Քրիստոս, Աստված մեր, Դու առանց որևէ վնասի ազատեցիր Քո սուրբ առաքյալ Պետրոսին շղթաներից և զնդանից։ Խոնարհաբար պաղատում ենք Քեզ, Մարդասե՛ր Աստված. գթությամբ ընդունիր մեր խնդրանքը Քո բանտարկյալ (անունը/անունները) ծառայի/ծառաների մեղքերի թողության համար։ Նրա/նրանց աղոթքներով ազատիր ամենայն չարից և փորձանքից և ազատ արձակիր Քո ամենազոր աջով։ Ամեն։

Օպտինյան անապատի ծերերի ամենօրյա (առավոտյան) աղոթքը

Տե՛ր իմ, տուր ինձ հոգեկան հանդարտությամբ ընդունել այն ամենը, ինչ կբերի ինձ առաջիկա օրը։ Տեր, տուր ինձ ամբողջովին հանձնվել Քո սուրբ կամքին։ Այսօր՝ ամեն ժամ և ամեն ինչում խրատիր և աջակցիր ինձ։ Ինչպիսի լուրեր էլ որ ստանամ առաջիկա օրվա ընթացքում, սովորեցրու ինձ, Տեր, դրանք ընդունել անայլայլ հոգով և ամուր համոզվածությամբ, որ ամենուր և ամեն ինչում Քո սուրբ կամքն է կատարվում։ Բոլոր իմ խոսքերում և գործերում առաջնորդիր և ուղղորդիր մտքերս ու զգացմունքներս։ Տեր, բոլոր անսպասելի – անակնկալ պատահմունքներում մի թող ինձ մոռանալ, որ ամեն ինչ ուղարկված է Քեզանից։ Սովորեցրու ինձ ուղղամտորեն և ողջամտորեն վարվել ընտանիքիս յուրաքանչյուր անդամի հետ՝ չխռովելով և չդառնացնելով ոչ մեկին։ Տեր, ինձ ուժ տուր՝ հաղթահարելու հոգնությունն ու բոլոր միջադեպերն առաջիկա օրվա ընթացքում։ Առաջնորդիր իմ կամքը, Տեր, և սովորեցրու ինձ աղոթել, հավատալ, հուսալ, համբերել, ներել, գոհանալ և սիրել։ Ամեն։

Աղոթահամրիչով կարդացվող աղոթքներ

(Օրվա ընթացքում կարդացվող աղոթքների թիվը պետք է քննարկել և համաձայնեցնել հոգևորականի հետ)

Փրկչին. *Տեր Հիսուս Քրիստոս, Որդի՛ Աստուծո, ողորմեա՛ մեղավորիս։*

Աստվածամորը. *Ամենասրբուհի՛ Աստվածածին, փրկի՛ր ինձ։*

Սրբերին. *Սուրբ առաքյալ (նահատակ, քաջնահատակ, մարգարե, արդար, վանական) ..., աղաչի՛ր Աստծուն ինձ համար։*

Լուսավորիչ հայր մեր ..., աղաչի՛ր Աստծուն ինձ համար։

Սրբազնանահատակ հայր մեր ..., աղաչի՛ր Աստծուն ինձ համար։

Կամ, պարզապես՝ սուրբ (սրբուհի) ..., աղաչի՛ր Աստծուն ինձ համար։

Պահապան Հրեշտակին. *Իմ սո՛րբ Հրեշտակ, պահպանի՛ր ինձ։*

Աղոթքներ սրբերին և Տիրոջը՝ ըստ շաբաթվա օրերի

Երկուշաբթի. *Սուրբ Հրեշտակապետեր, աղաչե՛ք Աստծուն ինձ համար։*

Երեքշաբթի. *Մկրտի՛չ Քրիստոսի, աղաչի՛ր Աստծուն ինձ համար։*

Չորեքշաբթի, ուրբաթ. *Խա՛չ Քրիստոսի, փրկի՛ր ինձ քո զորությամբ։*

Հինգշաբթի. *Սո՛րբ առաքյալներ, աղաչե՛ք Աստծուն ինձ համար։*

Լուսավորիչ հա՛յր մեր Նիկողայոս, աղաչի՛ր Աստծուն ինձ համար։

Շաբաթ. *Համա՛կ սրբեր, աղաչե՛ք Աստծուն ինձ համար։*

Կիրակի. *Ամենասո՛րբ Երրորդություն, Աստված իմ, ողորմի՛ր ինձ։*

ՈՒԽՏԱԳՆԱՑԻՆ ՈՒՂԵԿԻՑ

Ճանապարհ ընկնելուց առաջ կարդացվող աղոթքներ

Երբ պատրաստվում ես ճանապարհորդել կամ մեկնել ուխտագնացության, ապա հարկ է կարդալ 26, 39, 50, 90 սաղմոսները (տես 116-120 էջերում) և հետևյալ աղոթքները.

Կցուրդ

Տե՛ր Քրիստոս, Դու ես Ճանապարհը և Ճշմարտությունը, Աստվածամոր աղոթքներով ուղարկիր հիմա Քո ծառաներին որպես ուղեկից Քո Հրեշտակին՝ ինչպես երբևէ Տովբիթին, որպեսզի նրանց պահպանի ամենայն չարից՝ պահելով անվնաս և կատարյալ բարեկեցության մեջ, վասն Քո փառավորման, Մի՛կ Մարդասեր։

Կոնդակ

Դու Ղուկասին և Կղեովպասին ուղեկցեցիր Էմմաուս, Փրկիչ, այժմ էլ Ուղեկից եղիր ճամփորդել ցանկացող Քո ծառաներին,

ազատելով նրանց ամենայն չարից և փորձանքից, քանզի Դու, Մարդասե՛ր, ամեն ինչ կարող ես, եթե կամենաս։

ԱՂՈԹՔՆԵՐ ՆԱԽԱՎԿԱ ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՈՍԻՆ

Կցուրդ

Զարչարանքների համար, որ կրեցիր հանուն Քրիստոս Աստծո, արքայական ապարոշով պսակվեց գլուխդ, անդրանի՛կդ մարտիրոսներից, Ստեփանո՛ս, քանզի, նշավակելով հրեական մոլուցքը, տեսար քո Փրկչին Հոր աջ կողմում. Նրան միշտ աղոթիր մեր հոգիների համար։

Այլ կցուրդ

Առաքյալներին օթևանակից և առաջինը նահատակված՝ հալածյալներից, Քրիստոսի սպասավոր բազմագո՛վ Ստեփանոս, դու, առաջինը ավարտելով կյանքդ սխրալի նահատակությամբ, անթիվ ազգերի բերեցիր սխրագործության Հիմնադիր Քրիստոսին։ Այս պատճառով քեզ՝ որպես առաքյալի և գերագույն նահատակի պատվելով, աղոթում ենք. աղաչիր Քրիստոս Աստծուն՝ մեզ շնորհելու մեծ ողորմություն։

Կոնդակ

Նախօրեին Տերը եկավ մեզ մարմնով, իսկ ծառան այսօր բաժանվում է մարմնից. երեկ Թագավորողը, մարմին առած, ծնվեց, այսօր ծառան քարկոծվում է։ Հանուն Թագավորի է մեռնում նախավկա Աստվածային Ստեփանոսը։

Այլ կոնդակ

Դու առաջինը սերմանվեցիր երկրում Երկնային Արարչից, ամենագո՛վ Ստեփանոս. երկրում առաջինը երանելիդ արյուն հեղեց հանուն Քրիստոսի։ Նրա կողմից առաջինը դու պսակվեցիր երկնքում հաղթանակի պսակով, կարապե՛տ նահատակների, պսակակի՛ր, առաջնե՛կ Քրիստոսի վկաներից։

ԱՂՈԹՔ ՆԱԽԱՎԿԱ ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՈՍԻՆ

Ո՜վ սուրբ նախավկա, առաքյալ, արքսարկավագ Ստեփանոս, խոնարհելով մեր հոգու և սրտի ծնկները, աղոթում ենք քեզ. կարկառիր քո ձեռքերն առ Տեր Աստված և աղաչիր ողջ մարդկային ցեղին Յավակից և մարդկանց համար Իր Որդու մոտ Բարեխոս Ամենասուրբ Կույս Մորը նաև մեզ համար (անունները), որ միշտ զայրացնում ենք Աստծուն մեղքերով և ծուլությամբ: Պաղատի՛ր մեր Բարի Փրկչին, որպեսզի ուղարկի մեզ Իր բարեպատեհ օգնությունը՝ ապաշխարելու շնորհը, և Իր Ամենասուրբ Մոր բարեխոսությամբ և քո թախանձանքներով չհիշեցնի մեզ մեր մեղքերն Իր ահեղ և արդար դատաստանի օրը, այլ Իր գթառատությամբ և հիշելով քո պաղատանքները, ասի մեր հոգիներին. «Ես էմ ձեր փրկությունը հավիտյանս հավիտենից»: Ամեն:

ՄԵԾԱՐՈՒՄ

Մեծարում ենք քեզ, քարկոծյալ սուրբ նահատակ Ստեփանոս և հարգում պատվական քո չարչարանքները, որոնց հանուն Քրիստոսի համբերեցիր:

ԱՂՈԹՔՆԵՐ ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐԱՊԵՏԻՆ

ԿՑՈՒՐԴ

Արդ արդարի հիշատակը հարգվում է գովքերով, և քեզ բավարար է Տիրոջ վկայությունը, Կարապե՛տ, և դու հիրավի երևացիր մարգարեներից պատվականագույն, քանզի արժանացար ջրերում մկրտելու Քարոզյալին: Ուստի, ճշմարտության համար ուրախությամբ չարչարվելով, դու դժոխքում գտնվողներին էլ ավետեցիր մարմնով եկած և մեզ մեծ ողորմություն շնորհող Աստծուն, Ով կրում է աշխարհի մեղքը:

ԿՈՆԴԱԿ

Քո մարմնով Գալուստից սարսափած՝ Հորդանանն ի հակառակ էր հոսում երկյուղով, իսկ Հովհաննեսը մարգարեական

ծառայությունը կատարելիս՝ ահուդողով խուսափում էր։ Հրեշտակային դասերը սարսեցին՝ տեսնելով Քեզ ջրերում մարմնով մկրտվելիս, և խավարում բոլոր գտնվողները լուսավորվեցին՝ գովերգելով Քո հայտնությամբ բոլորին Լուսավորողիդ։

ԱՂՈԹՔ ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐԱՊԵՏԻՆ

Մկրտի՛չ Քրիստոսի, պատվակա՛ն Նախակարապետ, ծայրագույն մարգարե, անդրանի՛կ նահատակ, պահեցողների և անապատականների խրատի՛չ, անապականության ուսուցիչ և Քրիստոսի մերձավո՛ր բարեկամ, քեզ եմ խնդրում և քեզ շտապում՝ մի՛ զրկիր ինձ քո բարեխոսությունից, մի՛ թող ինձ՝ բազում մեղքերից ընկածիս։ Վերականգնիր իմ հոգին ապաշխարությամբ, ինչպես երկրորդ մկրտությամբ, սրբիր ինձ՝ մեղքերով ապականվածիս, և նպաստիր հասնելու Երկնքի Արքայությանը, ուր պիղծ ոչինչ չի մտնում։

Գյումրիի «Յոթվերք» եկեղեցու նույնանուն սրբապատկերը

Աղոթքներ Տիրամոր «Յոթնասլաք» կամ «Չար սրտերի մեղմացում» սրբապատկերի (ալեքսանդրապոլյան ավանդույթում՝ «Յոթվերք») առջև

Կցուրդ

Մեղմացրու՛ մեր չար սրտերը, Աստվածամա՛յր, և մեր չարակամների ատելավառ նետերը հանգցրու և ամենայն սրտնեղություն և հոգեմաշություն ամոքիր։ Նայելով Քո սուրբ պատկերին՝ գորովվում ենք մեր հանդեպ Քո կարեկցան-

քով և գթասրտությամբ և համբուրում Քո վերքերը, իսկ Քեզ խոցոտող մեր մեղքերի նետերից՝ սարսափում ենք և սրտանց զղջում։ Թույլ մի՛ տուր, գթասի՛րտ Մայր, կորստյան մատնվել մեր կամ մերձավորների խստասրտության պատճառով, քանզի հիրավի Դու ես չար սրտերի մեղմացումը։

ԿՈՆԴԱԿ

Քո շնորհով, Տիրուհի՛, մեղմացրու չարագործների սրտերը, ուղարկիր նրանց ամենայն չարից զերծ պահող բարեգործների, որոնք ջերմեռանդորեն և հանդարտ սրտով աղոթում են Քո պատվական պատկերների առջև։

Աղոթք Տիրամոր «Յոթնասլաք» կամ «Չար սրտերի մեղմացում» սրբապատկերի (ալեքսանդրապոլյան ավանդույթում՝ «Յոթվերք») առջև

Ո՛վ բազմաչարչար Մայր Աստուծո, որ Քո մաքրությամբ և երկրի վրա կրած տառապանքների սաստկությամբ բարձր ես երկրի բոլոր դուստրերից. ընդունիր մեր տխրաշատ և սրտատոչոր թախանձանքները և պահպանիր մեզ Քո գթության հարկի տակ, քանզի Քեզանից բացի չունենք այլ ապաստան և ջերմ Բարեխոս, և Քեզնից Ծնվածի մոտ Դու ունես համարձակություն։ Օգնի՛ր և փրկի՛ր մեզ Քո աղոթքներով, և թող անսայթաք հասնենք Երկնքի Արքայությանը, որտեղ բոլոր սրբերի հետ կերգենք Սուրբ Երրորդությամբ Միակ Աստծո փառքը այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից։ Ամեն։

Աղոթքներ սրբազնանահատակ Գրիգորին՝ Մեծ Հայքի Լուսավորչին

Կցուրդ

Լինելով և՛ բարքով առաքյալներին առաքինակից, և՛ նրանց գահակից – ժառանգակից, Աստվածաշնո՛րհ այր, բարի գործերի վերելքով հասար բարձր հայեցման։ Այս պատճառով, ճշմարտության խոսքը ճշմարտորեն ազդարարելով՝ դու հանուն հավատի արնահեղ չարչարվեցիր, սրբազնանահատա՛կ

Գրիգոր, բարեխոսիր Քրիստոս Աստծո մոտ մեր հոգիների փրկության համար։

ԱՂՈԹՔՆԵՐ

(հատվածներ սուրբ Գրիգոր Լուսավորչին նվիրված Կանոնից)

Աղաչում եմ Կույսից ծնված Քրիստոսիդ. խորտակիր անկրքության խոր ծովահատակում փարավոնյան հզոր մարտակառքավարներին, որոնք պատկերն են հոգուս մեղքերի, որպեսզի կրքերին մեռած մարմնով, ինչպես ծնծղա գործիքով հաղթականորեն Քեզ գովերգեմ։

Պսակյա՛լ բարեխոս պաշտելի Սուրբ Երրորդության առջև. որպես արթուն հովիվ, որպես սուրբ նահատակ՝ ցրի՛ր քեզ գովերգողիս կրքերի մռայլ աղջամուղջը քո սուրբ աղոթքներով, երանելի՛ Գրիգոր։

Անմայրամուտ լուսատուն, մեծ նվիրապետը, բազմաչարչար, տառապակոծ հովիվը, փորձություններն արի հաղթող Հայաստանի պանծանքն այսօր հավատավորներին կանչում է մաղթերգման, և մենք՝ հավաքվելով նրան ենք երանում։

Կենաց ջրերի Հոգով լցված, երանելի՛ Գրիգոր, հոգևոր եղեմական գետի պես հոսելով՝ ոռոգում ես սուրբ Եկեղեցու դեմքն ու չորացնում մոլի կռապաշտության ճահճանդունդը։

Ո՛վ նվիրապետ, լուսաճաճանչ շողերով լուսավորելով քո հոգին լուսաբեր, առաքինություններով վառ լուսավորում ես երկրի կողմերը՝ սրտումդ ունենալով Քրիստոսին. և ինչպես անմայրամուտ արև, լուսավորում ես հեթանոս ազգերին. նահատակության բարի պտուղներով մեզ ևս դարձնում ես բարեբեր, իմաստությամբ գերազա՛նց Գրիգոր։

Կոնդակ

Մշտարթուն հովվին և աննկուն ուսուցիչ սուրբ Գրիգորին՝ համայն աշխարհի լուսատու կանթեղին և պաշտպանին, բա-

րի փառքի սրբազնապետին՝ որպես ճշմարտության համար հալածյալի, այսօր բոլոր հավատացյալներս սաղմոսերգություններով և հոգևոր երգերով փառաբանում ենք, քանզի նա աղոթում է Քրիստոսին մեր փրկության համար։

Հալածյալների մեջ մեծ՝ աստվածային կանթեղին, Հայաստանի հավատարիմ Հովվին և ուսուցչին ենք գովերգում և աստվածային երգերով նրան պսակ հյուսում, քանզի կռապաշտական անաստվածության խավարը ցրում է նա և դիվային բոլոր գործերը խորտակում։ Այդպիսով, համբերությամբ մաքառելով անսասան մտքով և շնորհով, այժմ էլ բարեխոսում է Քրիստոսի առջև մեր փրկության համար։

Ներսես Շնորհալի[1]

Ներբող սուրբ կույս Հռիփսիմեին

Հանճարեղ շնորհալիդ ընտրյալ է,
Հզոր արքաների տոհմից է,
Լատին արքայատնից մեզ պարգև է,
Հրաշագեղ հրեշտակ Հռիփսիմե։

Ռաբունի Քրիստոսին շտապող, երկնաճեմ,
Երկնային օրենքներին վարժ, խորագետ,
Գերադասեցիր անձդ, տանդ փառքերն արհամարհել,
Հրաշագեղ հրեշտակ Հռիփսիմե։

Իմաստուն, մեծարգո և սուրբ միանձնուհի
Որդու Սիրո հուրը գցելով երկիր՝
Դու վառեցիր լապտերը հավատի,
Հրաշագեղ հրեշտակ Հռիփսիմե։

Փեսային՝ Քրիստոսին մարմնացյալ
Անապակ կուսությամբ հարսնացյալ,
Անմատույց առագաստում բազմեցար,
Հրաշագեղ հրեշտակ Հռիփսիմե։

Սրբասնունդ սիրամարգ զմայլելի,
Նրբափայլ, ոսկեթել, ցանկալի,
Եռապսակ, Աստվածօծյալ, սքանչելի՛
Հրաշագեղ հրեշտակ Հռիփսիմե։

---

[1] Ներսես Շնորհալու՝ սուրբ Հռիփսիմեին նվիրված ներբողը բացառության կարգով ներառել և փոխադրել ենք գրաբարից, քանի որ չնայած այն հանգամանքին, որ սրբուհին Ողղափառ Եկեղեցում նույնպես պաշտելի է, նրան նվիրված կցուրդ կամ այլ աղոթք չգտնվեց ուղղափառ աղոթագրքերում:

Իսկուհուն Երկնից[1] դու ճախրող աղավնի
Նոր Նոյան Տապանն է քո լուսատեղին[2],
Օձասպան, չարխափան, արդար արագիլ,
Հրաշագեղ հրեշտակ Հռիփսիմե։

Մարտի ելած նահատակ երկնային,
Գործադրող Հոր Խոսքի զորության
Հնձանը լիակոխ արած քաջությամբ,
Հրաշագեղ հրեշտակ Հռիփսիմե։

Էակ չքնաղ, արնաներկ՝ բոսորագույն
Սաղարթագեղ, ինչպես խնձոր՝ կարմրագույն,
Հարս դու ազնիվ, նահատակիդ արյամբ քողավոր
Հրաշագեղ հրեշտակ Հռիփսիմե։

Սրբուհի Հռիփսիմե, նկ. Մայիս Մխիթարյան

[1] Միջնադարյան հոգևոր գրականության մեջ «Երկնից Իսկուհի» է անվանվել Ամենասրբուհի Տիրամայրը։

[2] Սուրբ Հռիփսիմե տաճարը, որտեղ էլ ամփոփված են սրբուհու մասունքները։

ԱՂՈԹՔՆԵՐ ՓՈՔՐ ՀԱՅՔԻ ՍԵԲԱՍՏԻԱ ՔԱՂԱՔԻ ՔԱՌԱՍՈՒՆ ՎԿԱՆԵՐԻՆ



Կցուրդ

Քրիստոսի քառասուն վկաներ՝ Սեբաստիա քաղաքում տոկունորեն չարչրկված, որ անցաք հրի և ջրի միջով և հասաք երանելի հավերժ հանգստին, աղոթեք Մարդասեր Տիրոջը մեզ

համար. թող Նա կյանքը պահի խաղաղությամբ և փրկի մեր հոգիները։

Կոնդակ

Աշխարհի ողջ զորահանդեսները թողած՝ Զորությունների Տիրոջը միացաք Երկնքում՝ Տիրոջ քառասուն քա՛ջ նահատակներ, քանզի հրի և ջրի միջով անցնելով, երանելինե՛ր, արժանիորեն ստացաք փառք Երկնքից և բազում պսակներ։

ԱՂՈԹՔ ՓՈՔՐ ՀԱՅՔԻ ՍԵԲԱՍՏԻԱ ՔԱՂԱՔԻ ՔԱՌԱՍՈՒՆ ՍՈՒՐԲ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻՆ

Ո՛վ սուրբ և փառավոր վկաներ Քրիստոսի՝ Սեբաստիա քաղաքում տոկունորեն խոշտանգված, ձեզ՝ որպես մեր բարեխոսների դիմում ենք ջերմեռանդորեն և խնդրում՝ աղաչեք Ամենապարգև Աստծուց ներում մեր մեղքերին և կյանքի արդար ընթացք, որպեսզի, ապաշխարությամբ և մեկմեկու հանդեպ անկեղծ սիրով ապրելով, համարձակությամբ ներկայանանք Քրիստոսի ահեղ դատաստանին և ձեր բարեխոսությամբ կանգնենք Արդար Դատավորի աջակողմում։ Ո՛վ սուրբ, Աստվածահաճո զորականներ, եղեք մեզ՝ Աստծո (անունները) ծառաներիս պաշտպաններ տեսանելի և անտեսանելի բոլոր թշնամիներից, և թող ձեր սուրբ աղոթքների ապահով ծածկի տակ ազատվենք բոլոր փորձանքներից, չարիքից և աղետներից մինչ մեր կյանքի վերջին օրը և փառավորենք Ամենակարող և Ամենաստեղծ Սուրբ Երրորդության՝ Հոր և Որդու և Սուրբ Հոգու մեծ և երկրպագելի Անունն այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից։ Ամեն։

ԱՂՈԹՔՆԵՐ ՔԱՋՆԱՀԱՏԱԿ ՍՐԲՈՒՀԻ ՎԱՐՎԱՌԱՅԻՆ

Համառոտագույն վարքը

Քաջնահատակ սրբուհի Վարվառան կրել է անթիվ տանջանքներ հանուն Քրիստոսի: Մահապատժից առաջ խնդրել է Տեր Աստծուն, որպեսզի յուրաքանչյուր ոք, ով կկանչի իր անունը և կհիշատակի իր կրած չարչարանքները, զերծ մնա անսպասելի, հանկարծահաս մահից և արժանանա խոստովանության և Սուրբ Հաղորդությանը:

Կցուրդ

Արդ նահատակ Վարվառային ենք պատվում, քանզի ամենապատիվ սրբուհին, թշնամու որսացանցերը կործանելով, թռչունի պես ազատվեց դրանցից խաչի զորությամբ և օգնությամբ:

Կոնդակ

Հետևելով Երրորդությամբ բարեպատշաճ սրբաբանյալ Աստծուն՝ հալածյա՛լ սրբուհի, դատարկուն արեցիր կռատներն ու կուռքերին, և երկնաչու կյանքիդ ընթացքում հույժ տառապելով՝ չսարսեցիր դահիճներիդ սպառնալիքներից, արի և իմաստուն սրբուհի՛ Վարվառա՝ անդադար սրբերգելով խրոխտաձայն. «Պաշտու՛մ եմ Երրորդությանը՝ Միասնական Միակ Աստծուն»:

ԱՂՈԹՔ ՔԱՋՆԱՀԱՏԱԿ ՍՐԲՈՒՀԻ ՎԱՐՎԱՌԱՅԻՆ

Ո՛վ Քրիստոսի քաջնահատակ սրբուհի Վարվառա. աղոթիր մեզ հետ և մեզ՝ Աստծո (անունները) ծառաներիս համար Իր բարեգթությունից պարտվող Աստծուն, որպեսզի ողորմածորեն լսի մեզ՝ Իր բարիքները խնդրողներիս, և չմերժի հանուն փրկության և կյանքի մեր բոլոր թախանձանքները, այլ շնորհի կյանքի քրիստոնեական ավարտ՝ անչարչար, ամոթազերծ, խաղաղ և անկարոտ Աստվածային Սուրբ Խորհուրդներից. և թող Աստծո շնորհով և քո ջերմ բարեխոսությամբ ապրենք հոգով և մարմնով միշտ առողջ՝ փառաբանելով մեզանից Իր օգնությունը չհեռացնող, Իր սրբերով սքանչելի Իսրայելի Տեր Աստծուն այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից: Ամեն:

ԱՂՈԹՔՆԵՐ ՍՐԲԱԶՆԱՆԱՀԱՏԱԿ ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՈՎԻՆ՝ ՄՈՍԿՈՎՅԱՆ ԵՐԵՑԻՆ

(Վլադիմիր Համբարձումովը՝ հայազգի քահանա, սրբադասված է Ռուս Ուղղափառ Եկեղեցու կողմից: Նահատակվել է 1936 թվականին մերձ-մոսկովյան Բուտովոյում)

Կցուրդ

Դեռատի հասակից Աստծուն եռանդուն որոնելով՝ ճշմարտությունը գտար Ուղղափառ Եկեղեցում և, հովվական ծառայության խաչը նախանձախնդրորեն վերցնելով, հալածանքների չար օրերին հավատավորներին սնուցեցիր հավատարմորեն: Ուստի և անաստվածների սպառնալիքներից չվախենալով, մինչև մահ դու հալածվեցիր, սրբազնանահատակ հա՛յր Վլադիմիր, աղաչի՛ր Ողորմած Աստծուն մեր հոգիների փրկության համար:

Կոնդակ

Սպառազինվելով արդարության զենք ու զրահով (Հռոմ. 13:12: 2 Կոր. 6:7)՝ դու հանուն հավատի խիզախորեն կրեցիր հալածանքներ, մարտիրոսություն և որպես Քրիստոսի ճշմարիտ քաջամարտիկ՝ ըմբոստացար քո դահիճների դեմ՝ ասելով. «Ժամանակավոր է իշխանությունը ձեր»: Արդ մենք կանչում ենք քեզ. «Ուրախացի՛ր, սրբազնանահատակ Վլադիմիր՝ Երկնքի Արքայությունում անթառամ պսակով Աստծուց պսակված»:

Աղոթք սրբազնանահատակ Վլադիմիր Համբարձումովին՝ մոսկովյան երեցին



Ո՛վ սրբազնանահատակ Վլադիմիր, ընտրյալ աշակերտ և հետևորդ Քրիստոսի։ Վաղ տարիներից Աստծուն ջերմեռանդորեն որոնելով՝ ճշմարիտ հավատն ընդունեցիր և Ավետարանի խոսքով, ինչպես ջահով քո կյանքի ողջ ուղին լուսավորելով, հալածանքների խավարչտին տարիներին հովվական խաչն աներկյուղ կրեցիր, և հավատացյալներին մխիթարող խրատատու և սրբասնունդ հովիվ լինելով՝ կյանքդ դրեցիր և սպանվեցիր հավատի համար։ Նույն կերպ և հիմա աղաչիր Տիրոջը՝ Քրիստոսին, որպեսզի Նա պահպանի ուղղափառ քրիստոնյաներին պառակտումներից, հոգևորականներին և վանականներին իրենց սխրանքներում հզորացնի, պատանիներին պաշտպանի կործանարար և դիվային ազդեցություններից, բոլոր հավատացյալներին ուղղափառության մեջ հաստատի և սուրբ հավատն անսասան պահի։ Եվ թող երկնքում քեզ հետ միասին փառաբանենք Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից։ Ամեն։

ԱՂՈԹՔ ՔՐԻՍՏՈՍԻ ՊԱՏՎԱԿԱՆ ԽԱՉԻՆ

Թող հառնի Աստված, և ցրվեն Նրա թշնամիները, և թող փախչեն Նրա հայացքից Նրան ատողները։ Ինչպես ծուխն է չքվում, թող այդպես չքվեն նրանք. ինչպես մոմն է հալվում կրակի ջերմից, այդպես թող կործանվեն դևերն Աստծուն սիրողների տեսքից, որոնք խաչակնքվելով բարբառում են ավետաձայն. «Հրճվի՛ր, ամենապատվական և կենդանարար Խաչ Տերունական, որ հալածում ես դևերին քեզ խաչված, դժոխք իջած, սատանայի ուժը կործանած և բոլոր թշնամիներին վանելու համար մեզ քեզ՝ Իր պատվական Խաչն ընծայած մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի զորությամբ։ Ո՛վ ամենապատիվ և կենարար Խաչ Տերունական, օգնի՛ր ինձ մեր Տիրուհի և սուրբ Կույս Աստվածամոր և բոլոր սրբերի հետ հավետ։ Ամեն։

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Աղոթարարին՝ հորդորական

Ինձանից էր այդ[1]

Երբևէ դու մտածե՞լ ես,
որ քեզ վերաբերող ամեն ինչ
վերաբերվում է նաև Ինձ։
Քանզի քեզ առնչվող ամեն ինչ
առնչվում է Իմ աչքի բիբին։

Դու թանկ ես Իմ աչքին, թանկագի՛ն,
և Ես սիրելով սիրեցի քեզ,
և այս պատճառով Ինձ համար
հատուկ, մեծ ուրախություն է
քեզ դաստիարակել – կերտելը։

Երբ ընդդեմ քեզ փորձություններ կփոթորկվեն,
Եվ թշնամին կընթանա հորդահոս գետի պես,
Ես ուզում եմ, որ գիտենաս՝
Ինձանից էր այդ։

Եվ որ քո անզորությունն
Իմ զորության կարիքն ունի,
որ քո ապահովությունը
կայանում է նրանում,
որ տրվի Ինձ հնարավորություն՝
քեզ պաշտպանելու։

Դժվա՞ր կացության մեջ ես,
դժվարին հանգամանքներո՞ւմ՝
մարդկանց մեջ,

---

[1] Գրվել է սուրբ Սերաֆիմ Վիրիցկու կողմից. այն աղոթական զրույց է Տիրոջ հետ: նա փոխանցել է Տիրոջ խոսքերը սերունդներին, որ լսել է Նրանից լարված և սրբակրոն աղոթական կյանքի արդյունքում:

որոնք քեզ չեն հասկանում,
հաշվի չեն առնում այն,
ինչը հաճելի է քեզ,
որոնք վանում են քեզ.
Ինձանից էր այդ։

Ես քո Աստվածն եմ՝
հանգամանքները տնօրինող,
դու պատահական չես հայտնվել
քո տեղում, այնտեղ, որտեղ դու ես.
դա հենց այն տեղն է,
որտեղ ես եմ քեզ նշանակել։
Դու չխնդրեցի՞ր, որ ես քեզ սովորեցնեմ
լինել հեզ և խոնարհամիտ.
ահա ես քեզ դրել եմ
հատուկ այն միջավայրում՝
անցնելու այն դպրոցը,
ուր այդ դասն է սերտվում։

Քո միջավայրն ու քեզ հետ ապրողներն
ընդամենը իմ կամքն են կատարում։
Դրամական դժվարությունների մե՞ջ ես,
ծայրը ծայրին դժվա՞ր ես հասցնում,
գիտցի՛ր, որ
Ինձանից էր այդ։

Քանզի Ես եմ տնօրինում
քո նյութական միջոցները,
Ես ուզում եմ, որ դու գաս,
դիմես Ինձ և գիտենաս, որ
կախված ես Ինձանից և իմ կարիքն ունես։
Իմ պաշարներն աննվազ են, անհատնում։
Ես ուզում եմ, որ համոզվես
Իմ հավատարմության մեջ, որ
Իմ խոստումներում լինես համոզված։

Եվ թող չլինի այնպես,
որ կարենան քեզ ասել
քո կարոտության ու կարիքի մեջ.
«Չհավատացիք դուք ձեր Տեր Աստծուն»:
(Երկրորդումն Օրինաց, 8: 12-13)
Վշտերի գիշե՞րն է քեզ համակել,
զատվա՞ծ ես դու մտերիմներից,
սրտակից հարազատներից՝ բաժանված.
Ինձանից էր այդ:

Ես էմ՝ Այր տառապանաց և վշտերի,
Ես կրեցի հիվանդություններ կարեվեր,
Ես թույլ տվեցի այդ ամենը, որպեսզի
դու դարձի գաս՝ դառնաս դեպի Ինձ
և կարողանաս Ինձանում գտնել
սփոփանք մշտնջենի:
Սխալվե՞լ ես դու ընկերոջ հարցում,
խաբվել սրտամոտ մեկից՝
ում հետ եղել ես դու սրտաբաց.
Ինձանից էր այդ:

Ես թույլ տվեցի՝ այդ հիասթափությունը
վրա հասներ քեզ,
որպեսզի դու հասկանաս՝
քո լավագույն Ընկերը
Տերն է:
Ես ուզում եմ, որ դու
ամեն ինչ բերես Ինձ
և պատմես Ինձ:
Զրպարտե՞լ է մեկը քեզ,
հանգստացի՛ր, Ինձ հանձնիր,
և թող Իմ տնօրինմանը դա.
Ինձ ավելի մոտեցիր՝ ամբողջ հոգով
պինդ փարվիր քո Ապաստանին,
որպեսզի պատսպարվես լեզուների

հերյուրանքից՝ բանսարկու և վարկաբեկ,
զի Ես այնպես կանեմ, որ արդարությունդ երևա
ինչպես լույս, և իրավունքդ՝ ինչպես ցերեկ։
(Սաղմոս 36:6)

Քանդվել են ծրագրերը քո.
գլխահակ ես դու, հուսահատ և հոգնած.
Ինձանից էր այդ։

Քեզ համար ծրագրեր էիր կազմում,
ունեիր մտադրություններ դու,
և ինքդ էիր Ինձ բերում
հղացումներդ՝ դրանք օրհնելու։
Բայց Ես շատ եմ ուզում,
որ Ինձ տաս հնարավորություն՝
տնօրինելու և կառավարելու
հանգամանքները քո կյանքի.
այդ դեպքում պատասխանատվությունն
ամենի համար կլինի Ինձ վրա,
քանզի չափազանց ծանր է քեզ համար,
և միայնակ՝ ուժերդ չեն պատի՝ հաղթահարելու այդ,
քանի որ դու գործիք ես միայն և ոչ թե գործող անձ։

Հանդիպեցի՞ն քեզ
ձախորդություններ անսպասելի, կենցաղային,
տրտմաթախիծ վհատությամբ պարփակվեց
քո սիրտը. արդ, իմացի՛ր, որ
Ինձանից էր այդ։

Քանզի Ես ուզում եմ, որ
քո սիրտն ու հոգին
հանապազ լինեն բոցավառ
Իմ աչքի առջև
և հաղթեն Իմ անվամբ
ամեն մի փոքրոգության։

Երկար ժամանակ լուր չես ստանում
քեզ մերձ և թանկ մարդկանցից.
այստեղից՝ փոքրոգություն, թերահավատություն,
հետևանքը՝ տրտունջ և հուսահատություն,
սակայն, գիտցիր՝ Ինձանից էր այդ։
Քանզի ոգու այդ անձկությամբ
Ես փորձում եմ հավատիդ ամրությունն
Իմ անանց խոստման անխախտության հանդեպ
և սիրելի ու մտերիմ մարդկանց համար
քո համարձակ աղոթքի ուժը։
Քանզի դու չէի՞ր, որ նրանց մասին հոգսերդ
հանձնեցիր Իմ նախախնամ Սիրուն։
Դու չէի՞ր, որ նրանց իսկ հանձնեցիր
Իմ Անարատ Մոր Հովանու պաշտպանությանը։

Քեզ բաժի՞ն հասավ
ծանր հիվանդություն՝
կարճատև կամ անբուժելի,
և դու դարձար
քո մահճին գամված.
Ինձանից էր այդ։

Քանզի Ես ուզում եմ, որ դու ճանաչես
Ինձ ավելի լավ ու խոր
քո մարմնական տկարության մեջ,
և չտրտնջաս այս փորձության համար
որ ուղարկվել է քեզ,
որպեսզի դու չձգտես թափանցել՝
զանազան ուղիներով
մարդկային հոգիների փրկության
Իմ ծրագրերի մեջ,
այլ անտրտունջ ու հնազանդ
գլուխդ խոնարհես քո հանդեպ
Իմ բարության ներքո։

Երբևէ երազե՞լ ես
Որևէ հատուկ գործ ձեռնարկել,
արարել Ինձ համար,
սակայն փոխարենը գամվեցիր
ցավի և տկարության մահճին.
Ինձանից էր այդ։
Քանզի այդ դեպքում դու
կընկղմվեիր քո գործերի մեջ,
և Ես չէի կարողանա գրավել՝ դարձնել Ինձ
քո մտքերը զբաղված,
այլ Ես ուզում եմ սովորեցնել քեզ
Իմ ամենախոր մտքերին ու տալ դասեր,
որպեսզի դու Ինձ մոտ ծառայության լինես։
Ես ուզում եմ սովորեցնել քեզ՝ գիտակցելու,
որ առանց Ինձ ոչինչ ես դու։

Իմ լավագույն
գործակիցներից են նրանք,
ովքեր կտրված են
կենսագործունեությունից,
որպեսզի սովորեն
տիրապետել անդադար
աղոթքի զենքին։

Հանկարծակի կանչվա՞ծ ես դու՝
կանգնելու բարդ և պատասխանատու
դիրքում, գնա անվեհեր՝ հենված Ինձ վրա։
Ես քեզ եմ վստահում դժվարություններն այդ,
և դրա համար
կօրհնի քեզ
քո Տեր Աստվածը
քո բոլոր գործերում,
քո բոլոր ուղիներում, այն ամենով,
որ ի բարին է կատարվելու
քո ձեռքերով։

Այս օրը ես քո ձեռքն եմ
հանձնում սրբազան յուղի այդ անոթը։
Ազատորեն դու այն կիրառի՛ր, զավա՛կ իմ։

Ամեն մի
ծագող դժվարություն,
քեզ վիրավորող ամեն մի
խոսք ու դատապարտում,
աշխատանքիդ մեջ ամեն մի շեղում – խանգարում,
որն ի զորու է առաջացնելու նեղության և
հուսախաբության զգացում,
քո անճարության և չունակության ամեն մի
բացահայտում – դրսևորում թող
օծված լինեն այդ յուղով.
Ինձանից էր այդ։

Հիշի՛ր, որ ամեն մի խանգարում
Աստծո ուսուցումն է,
ուստի և սրտիդ մեջ դի՛ր
խոսքերն այս,
որոնք ես քեզ խոսեցի
այսօր.
Ինձանից էր այդ։

Պահի՛ր դրանք, իմացի՛ր
ու հիշի՛ր դու միշտ՝
ուր էլ որ լինես, որ
ամեն մի խայթ թուլանում է՝
դառնում է բութ, երբ դու սովորես
ամենուր Ինձ տեսնել։
Ամենն ուղարկված է Ինձնից
քո հոգու կատարելագործման համար.
Ինձանից էր այդ։

Վլադիմիր Նաբոկով

(Դոստոևսկու մահվան տարելիցին)

Այգում քայլում էր Քրիստոսն աշակերտների հետ...[1]
Վարդաստանում՝ թփերի մեջ՝ արևավառ ավազին,
մոտակայքում՝ ոչ շատ հեռու, փռված էր մի շան դի՝
ակնաբներից դուրս թռած աչքերով սիրամարգի։

Ատամները փայլում էին սևաթույր ծալքի տակից.
անդ ժահահոտ մահն էր պարում՝ չարախինդ, լկտի՝
խեղդելով ու ճնշելով եթերայուղ, խունկ մրտենի,
որոնք քաղցր ու հեշտաբույր ծխում էին այս ու այն դին։

Ճաքած դիակը փքուն՝ լի որդերով,
նեխում էր խլրտուն, լպրծուն ճճիներով,
Հովհաննեսը, աղջկա պես ընկրկելով,
ործկաց. մռայլվեց Մատթեոսն ակնկոր։

Դատում էին նողկանքով առաքյալներն իրար մեջ.
«Ջար էր շունը, չար մահով էլ սատակեց»
Քրիստոսն էլ հուսկ ավելացրեց մտածկոտ ու կիսաձայն.
«Իսկ ատամները նրա մարգարտից էլ են սպիտակ»։

1921 թիվ

---

[1] Տեր Հիսուս Քրիստոսի երկրային կյանքի վերոբերյալ դրվագը բացակայում է Ավետարաններում։ Այն տեղ է գտել պարականոն ավետարաններում և... Ղուրանում։ Երիտասարդ Նաբոկովը, օգտվելով այդ պատումից, ստեղծագործել, առակաբանել է գեղեցիկ բանաստեղծությամբ։ Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Տիրոջ կյանքի այս դրվագը Ավետարանում բացակայելու պատճառով անհայտ է հավատացյալ լայն շրջաններին, որոշեցինք հրատարակել բանաստեղծությունն Աղոթագրքում՝ որպես ուսուցողական և շահեկան առակ։

Աղոթարարին օգնական

Ինչպես աղոթել («Հայր մեր...»)

Ղուկ. 11:1 *Եվ եղավ որ Հիսուս մի տեղ աղոթքի էր կանգնած. և երբ վերջացրեց, Նրա աշակերտներից մեկն ասաց Նրան. «Տէր, մեզ աղոթել սովորեցրու...»:*

Մատթ. 6:9-13 *Եվ արդ, դուք այսպէս աղոթեցէք.*

Հայր մեր, որ Երկնքում ես, սու՛րբ թող լինի Քո անունը. Քո Թագավորությու՛նը թող գա. Քո կամքը թող լինի երկրի վրա, ինչպես որ Երկնքում է. մեր հանապազօրյա հացը տուր մեզ այսօր. և ներիր մեզ մեր հանցանքները, ինչպես որ մենք ենք ներում նրանց, որ հանցանք են գործում մեր դեմ. և մի տար մեզ փորձության, այլ փրկի՛ր մեզ չարից. որովհետև Քո՛ն է Թագավորությունը և զորությունը և փառքը հավիտյանս. ամեն:

«Հայր մեր» աղոթքի մեկնությունը սուրբ Գրիգոր Նարեկացու կողմից[1]

Ինչո՞ւ է ասում «Հայր մեր, որ երկնքում ես»։

[Հայր]՝ Քաղցր, ախորժելի և շնորհառատ անուն, որ հյուսվել է չորս գրով իբրև մեկ բառ. որպես և է-ն [մեկ բառ է], որով երեք Անձանց դավանում ենք [մենք]։ [Ընդ որում]՝ ոչ թե [անջատաբար ենք դավանում՝ իբրև] ադամյաններ ու եւայաններ, [կամ] արուներ ու էգեր, այլ [իբրև] քրիստոսյաններ՝ [միասնաբար], ինչպես որ Աստված Ինքը Միակն է, չորս գրից բաղկացած [Հայր] անվամբ։ [Եւ] այդպես է, Քանզի [Հայրը]՝ Միակը, պատճառն է Երկուսի, իսկ Երեքը Մի են բնությամբ և Աստվածությամբ և զորությամբ և մեր նկատմամբ ընտանությամբ և հայրագորով կամքով։ Եւ ինչպես որ Ինքը (Աստվածությունը) մի է և անբաժանելի, նույնն [ակնկալում] է [նաև] տիեզերասփյուռ սուրբ Եկեղեցուց. այն է՝ լինել անքակտելի։ Դրա համար, եթե անգամ անապատում մեկն աղոթքի կանգնի, չի կարող ասել՝ «Հայր իմ, որ երկնքում ես», այլ պետք է արտասանի՝ «Հայր մեր»՝ [իր արտաբերած «մեր» բառի մեջ] ներառելով համայն քրիստոնյաներին՝ [բոլոր նրանց], որ ծովում են և ցամաքում, եկեղեցական են և աշխարհական... [Բոլորին], որ անդամներն են Քրիստոսի [Մարմնի], որն ամբողջանում է Իրենով՝ Քրիստոսով, որ գլուխն է [Եկեղեցու, այն Եկեղեցու], որ կազմված է բոլոր ժամանակներում ապրած, ապրող և գալիք քրիստոնյաներից՝ սկսած առաջին նահապետներից և մարգարեներից, քանզի նրանք ևս քրիստոնյա էին և կոչվում էին «օծյալ», և [զուրկ] չէին Քրիստոսից։

«Հայր մեր, որ երկնքում ես»։

Որքա՜ն հարուստ ենք [մենք, որ], ունենք բազում եղբայրներ, [ուրախակիցներ] ու ցավակիցներ. և այս բազմաբյուր

[1] Մեծն Նարեկացու այս փոքրածավալ ստեղծագործությունը մեզ է հասել միակ ձեռագրով (Մաշտոցյան Մատենադարան, ձեռագիր 5753. XIV դար, թերթ 37ա - 41ա)։

ազգական-բարեկամների [աղոթքների շնորհիվ է], որ սրբերին բարեխոս ունենալով առ Աստված՝ նմանվում ենք քաղաքային կուռ բերդապարսպով և հաստատուն աշտարակով ամրացած հզոր թագավորության՝ անվախ և սրտապինդ թշնամիների հանդեպ, որովհետև ինչպես մեր հարազատներն են մեզ հետ [մեր] աղոթքի ժամին, երբ սրտից և շուրթերից [բխող] երկնասլաց աղերսը ճախրում է առ Հայր, նույնպես և մենք վստահաբար նրանց հետ ենք [իրենց] աղոթքի պահին և ամենայն բարի գործերում։

Եւ այս պատճառով է, որ ասում ենք.

«Հայր մեր, որ երկնքում ես»։

Եւ ասում ենք Նրան՝ «Երկնքում ես», ոչ թե միայն այնտեղ սահմանափակելով անբովանդակելի Բնությունը, որի Խոսքը վեր է բարձրացրել ամենայն երևելի և աներևույթ արարածներին ասես մարգարտի մի հատիկ, մինչդեռ ինքը խորքում է՝ ներսում, ինչպես Ինքը սահմանեց՝ «[Ես] մերձավոր [Աստված եմ], և ո՛չ հեռավոր» (Երեմ. ԻԳ. 23)՝ ըստ Սեփական խոսքի՝ թելադրված մարգարեին։ Այլ որպեսզի երկրային ցնորքներից և անցավոր աշխարհի պատրանքներից մեզ հեռացնի և մեր հայացքն ու միտքն ուղղի դեպի Երկինք, որն անմահների վայրն է և հավիտենական է։ Այստեղ է, որ Տերը հրամայեց պահել գանձը՝ անմաշելի քսակում, որը հասանելի չէ ո՛չ գողին, ո՛չ ցեցին (Մատթ. Ե. 19)։ Պողոսը նույնպես պատվիրում է «Վերինը խորհել միշտ, ուր և անձեռագործ ստեղծված և հավիտենական տաճարն ունենք» (տե՛ս Կողոս. Գ. 2), այնտեղ, դրախտում, ուր և գտնվում էինք, երբ անմեղ էինք։ Դրախտը Պողոսն անվանում է երկրորդ երկինք (տե՛ս Բ. Կոր. ԺԲ. 2), քանզի նա մասն է երկնային բարիքների և վիճակն է անմահների և ո՛չ մեղքերով [հոգեպես] մեռածների, որի մասին ասում էր անառակ որդին. «Մեղանչեցի երկնքի և Քո առաջ» (Ղուկ. ԺԵ. 18), դեպի ուր և զղջացյալ [սրտով] նա դարձավ՝ առ Հայր, մեծ զվարակի մորթմամբ ստանալով առաջին պատմուճանը, անցնելով բազմատեսակ հանցանքների միջով, դեպի երկինք հառած աչքերով և բաղձանքով նայելով երկնից

երկնքին՝ դեպի արևելք, որտեղ և երկրպագություն մատուցանելու հրաման ստացավ՝ իբրև հայրենիք և հարազատ գավառ՝ հույսով Ողորմածին ձայնելով.

«Սո՛ւրբ թող լինի *Քո անունը»։*

Այս է ճշմարիտը և սիրելի է Որդու համար. նախ և առաջ Հոր փառքը խնդրել և ոչ այլ ինչ։ Պետք է հասկանալ այնպես, ինչպես ասաց [Տերը]. «Կտեսնեն ձեր բարի գործերը և կփառավորեն» (Մատթ. Ե. 16)։ Քանզի մեր բարի վարքը տեսնողներին [դա] ստիպում է Աստծուն փառավորել, ինչպես չարագործությամբ պատճառ է հանդիսանում հայհոյության, ըստ այն խոսքի, որն ասում է մարգարեն. «Վա՜յ է ձեզ, քանզի ձեր պատճառով Իմ անունը հայհոյվում է հեթանոսների մեջ» (Ես. ԾԲ. 5)։ Ուստի, որ գործերը որ տեսնեն, կասեն, թե՝ դա է նրանց օրենքը՝ Աստծուց ստացած։ Դարձյալ, այն է անունը որդիության, որ շնորհեց մեզ սուրբ Եկեղեցին, ընդ որում՝ հատուկ, այսինքն՝ ճշմարիտ, որը մենք ստանում ենք հայրերից։ Եվ մի՛ եղեք հեռացած որդիներ՝ վայի արժանի։ Այլև ասելի է, թե [թող փառավորվի] Քրիստոսի անունը, որն առկա է սուրբ Գրքերում, և Ինքն [իսկ] ասաց Իր անունը՝ Ճանապարհ և Ճշմարտություն և Լույս և Կյանք, Դուռ և այլն։

«Սո՛ւրբ թող լինի Քո անունը*»։*

Եվ թող արդյունացնի, արժանացնի մեզ, որպեսզի գնանք առ Հայր՝ Ճշմարտությամբ լուսավորված կյանքով, որպեսզի գթածին գթա և ողորմածին ողորմի և բարին բարով հատուցի։

«Քո Արքայությո՛ւնը թող գա*»*

Այսպես, օրինակ, նրանք, որ պատերազմում են, և որոնց նեղում են գերակշռող թշնամիները, երբ սրանց թագավորն իմանա այդ մասին, այդժամ անբավ զորքով օգնության կմեկնի։ Եվ մինչդեռ նա հեռավորության վրա է, կերևա նրա բանակը հակառակորդներին, և այդ ժամին նրա զորքի անբավության ահից իսկույն փախուստի կմատնվեն թշնամիները։ Նույնպես և մենք, երբ մերձ լինենք դևերին կամ ինչ-ինչ ախ-

տերի, և մեր անմահ Թագավորից հավատով գութ հայցենք և խնդրենք, որ մեզ օգնության գա անբավ զորությունը Նրա։ Եւ երբ հասնի, կփախչեն և կչքվեն մեր բոլոր հակառակորդները։

«Քո Արքայությո՛ւնը թող գա»։

Դարձյալ ասում ենք. թո՛ղ չիշխեն մեղքերը մեր մահկանացու մարմիններին և «թո՛ղ չտիրեն բոլոր մեղքերը» (Սաղմ. ՃԺԸ. 133) ըստ Դավթի։ Քանի որ յուրաքանչյուրը, որ մեղք է գործում, մեղքերի ծառան է։ Այլ Դու, Տե՛ր, Թագավո՛ր մեր, Աստվա՛ծ, Քո քաղցր և կենսաբեր լուծը և թեթև բեռը դիր, և թո՛ղ չկարողանա մեզ իշխել բանսարկուն, որ ասում էր. «Բարձունքներում կդնեմ աթոռն իմ և կլինեմ Բարձրյալին նման» (Եսայ. ԺԴ. 13—14), այլ նկուն և ոտնակոխ կլինի որպես օձերն ու կարիճները՝ Քո շնորհած ուժով և իշխանությամբ զորացած առաքյալների ոտքերի տակ (հմմտ.Ղուկ. Ժ.)։

«Քո կա՛մքը թող լինի երկրի վրա, ինչպես որ Երկնքում է»։

Ճարտարաբույժ և գիտակ բժիշկներն Ասում են, թե մեր [մարմնի] ջերմության, պաղության, խոնավության և ցամաքության հատկությունների համակցության խաթարումներն են, որ հիվանդություն են առաջացնում, երբ սրանք կա՛մ պակասում են, կա՛մ ավելանում։ Նույնն է նաև հոգու կազմվածքի և Պատվիրանի պարագային. [հոգին] ի սկզբանե Աստված կազմել է [որպես] մեր բնությունը՝ անեղծ և անարատ, և որպես [անխաթարության] պահապան դրել է Պատվիրանը։ Եթե սրանից պակասում է կամ ավելանում՝ հիվանդանում ենք հոգով։ Ինչպես որ սատանան և Ադամը, որ կամեցան առավել փառք և պատիվ առնել, քան Աստծուց տրվածն էր, նույնկերպ և Կայենը և Եսավը պակասեցրին անդրանկության ծնրությունը, և Հուդան՝ [պակասեցրեց՝ ընկավ] առաքելական աստիճանից, և հրեաները՝ Երրորդությանը խոստովանելուց։ Արդ, երբ ասում ենք՝ «Քո կամքը թող լինի»՝ կատարյալ առողջություն ենք խնդրում, որն էլ Աստծո կամքն է։ Քանզի չի ասում հրեաներին, թե՝ «Իմ կամքը ձեզ հետ չէ, և ոչ էլ պատարագներ եմ ընդունում ձեր ձեռքերից»։ Մեզանից յուրաքանչ-

յուրին Աստված երբեմն հանձնում է [մեր կամքին], որպեսզի ընթանանք մեր կամքի համաձայն և լինենք բարկության որդիներ՝ առնելով մարմնի և մտքի կամքը։ Այս պատճառով և եկավ Քրիստոս՝ մեր բնությունն առնելով, և [այն] առողջացրեց և ուսուցանեց մեզ զգուշանալ՝ աղոթքներում հայցելով Աստծո կամքը, թե՝ ինչպես որ երկնքում է Քո կամքը՝ հրեշտակներին հաճո, նույնպես և թող Քո կամքը լինի երկրավորներիս մեջ։ Որպես օրինակ՝ լուսեղենների դասերը երկնքում՝ ոչ թե Աստծու կամքի մի մասին են ենթարկվում, իսկ մյուս մասից՝ խոտորվում, այլ՝ [ենթարկվում են] բովանդակին, այն [ամենին], որ Աստծու կամքով է, որպեսզի ամբողջովին և կատարելապես ենթարկվեն աստվածային կամքին և նրանում միշտ մնան անխոտոր՝ աջ կամ ձախ չխոտորվելով։ Այսպես ենք ասում՝ թո՛ղ երկրում նույնպես սահուն, առանց որևէ հակառակության լինի Քո կամքը, [թո՛ղ] պակասեն մեղավորները և ամբարիշտները երկրից և այլևս չգտնվեն նրանում, և քարոզվեն Ավետարանները ողջ տիեզերքում, [որպեսզի] բոլորը դառնան քրիստոնյա՝ արդար, հեզ և խոնարհ և Քո՝ մեր Աստծու խոսքերից դողացող, որպեսզի [Քո] կամքի հաճությամբ հաստատվես բոլորի [սրտերում]։

«Մեր հանապազօրյա հացը տո՛ւր մեզ այսօր»։

Նախկինում ասված պաղատանքի խոսքը, թե՝ թող Քո կամքը լինի. այսինքն՝ ինչպես որ հրեշտակներն են երկնքում, նույնկերպ և թո՛ղ մարդիկ լինեն երկրում։ Եվ քանի որ հրեշտակներն անկարոտ բնությամբ են [օժտված]՝ Աստծուց հաց չեն խնդրում։ Իսկ մենք, մարմնի տկարության պատճառով կարոտացյալ լինելով, հացի սակավապետությամբ կարող ենք նմանվել նրանց, ինչպես որ դրախտում առաջնաստեղծ մարդը բավականանում էր միայն մրգով, որ Աստծուց պարգևված էր նրան, և որն անմեղների կերակուրն էր։ Իսկ նրա դրախտից ելնելուց հետո հացը տվեց մեղանչածներին ի կերակուր՝ հրամայելով երեսի քրտինքով [վաստակել իրավունքն] այն ուտելու (տե՛ս Ծննդ. Գ. 19)։ Թեպետ և իր պատվիրանազանցությամբ մարդը զրկվեց առաջին կերակուրից, որն անմեղներին

հրամայվեց ուտել, սակայն երկրորդ կերակրով, որն [Աստված] հրամայեց քրտինքով [վաստակել]-ուտել՝ նա զարդարվեց փառքով, ինչպես առաջին [պտղով], որը կարող էր երանելի դարձնել։ Ըստ այնմ, թե՝ «Դու քո ձեռքի վաստակը պիտի ուտես. երանի՜ քեզ, դա բարի կլինի քեզ համար» (Սաղմ. ՃԻԷ. 2), և դա այն դեպքում, երբ ձեռք չի բերվի զրկանքներ [պատճառելով] կամ էլ հափշտակությամբ, համաձայն խոսքի. «Մշակն արժանի է իր վարձքին» (Ղուկ. Ժ. 7 և Ա. Տիմ. Ե. 18)։ Եվ հացը միայն խնդրելով և այլ ամենայն ավելորդություններն արգելելով [սովորեցնում է], որպեսզի միայն հարկավորը հոգանք և զանազան համերից և տեսակ-տեսակ [արտաքին] պաճուճազարդերից հրաժարվենք։ Քանզի փորձիչը՝ սատանան է այդպիսիներին խորհրդակից, ինչպես որ մեր Տիրոջը և Աստծուն էր առաջարկում, թե՝ «Ասա՛ այս քարերին, որ հաց դառնան» (Մատթ. Գ. 3)։ Իսկ «հանապազօրյա»՝ ասել է, թե՝ օրըստօրե, որ տվել է [Աստված] և տալիս է ըստ օրերի կարգի, ըստ այդմ էլ «այսօրն» է ավելացնում, որպեսզի անօգուտ հոգսերից և տառապանքից հեռու մնանք։ Ինչպես և մեկ այլ տեղ ասաց. «Վաղվանը մի՛ հոգացեք» (Մատթ. Զ. 25), քանի որ [կյանքի] պանդխտության ժամանակն անցավոր է և առօրեական։ Իսկ Հացը, որ իջնում է Երկնքից՝ Աստծուց, կյանք է տալիս աշխարհին, որը նաև «Իմաստություն» է անվանվում. սրանով հրեշտակներն են հանապազ կերակրվում՝ ուսանելով Աստծուց, Սուրբ Գիրքն էլ այն կոչում է «հրեշտակների հաց» (Սաղմ. ՀԷ. 25)։ Եւ եթե Աստուծո Որդու մարմինը, Որը, [ճառագայթակերպ լինելով]՝ վայել է անաղարտ հրեշտակներին, երբ մեկն ուտի սրբությամբ՝ առհավետ մահ չի տեսնի՝ ըստ Տիրոջ վկայության (Հովհ. Զ. 51-52)։ Թող ամեն ոք այս բանին արժանի լինի՝ աղոթքներով Աստծուն խնդրելով գիշեր ու զօր։

«Թող մեզ մեր պարտքերը, ինչպես և մենք ենք թողնում»

Ըստ բնության բոլոր արարածները պարտապան են գովության և օրհնության ծառայություն մատուցանել Արարչին, որ պահանջում են և՛ մեծն Դավիթը (տե՛ս Սաղմ. ՃԾ. 1-6) և՛

հնոցի մեջ նետված քաջ նահատակները (տե՛ս Դան. Գ. 57-86)՝ հրամայելով [այդ անել] դաս-դաս արարածներին, երկնքին և լուսատուներին, ծովին և ամենքին, որ սրանցում են՝ շնչավոր և անշունչ։ Իսկ հոգևոր էակները՝ մարմնավորներս և անմարմին՝ իմանալիները, առավել ևս պարտական ենք Աստծուն՝ բանականությամբ օժտված լինելու պատվի և ամենը տրամադրելու համար՝ ի հնազանդություն և ի սպասավորություն պետքերի։ Քանզի ում շատ տվեց, շատ էլ պահանջում է նրանից [աստվածային] Շնորհատուն։ Եվ կա՞ մի բան, որ գերազանցել է Աստծո մարդասիրությանը, որ մարդացավ և մահվան անպարտական լինելով՝ մեռավ մեզ համար. ընդ որում ի՞նչ կարող է վճարել և հատուցել մարդը, ուստի, թեպետ և ոմանք մեռան հանուն Նրա, սակայն մահկանացու լինելով՝ մեռան անցողական մարմնով։ Իսկ Տերը, լինելով անմահ՝ հավիտենական, մեռավ Իր մարմնով, և այն էլ՝ թշնամիների և ատողների համար, որոնք պաշտեցին արարածներին և ոչ Արարչին։ Իսկ անհատապես գործած հոգու և մարմնի մեղքերի և հանցանքների պարտքե՞րը, որոնցով յուրաքանչյուր ոք մեղանչեց հոգուն և մարմնին բնորոշ զգայություններով. արդյո՞ք խոսքերը կբավեն, կամ միտքը կիմաստավորի և կհիշի դրանք, որոնց ծանրությունը կապարյա ծանրածանր բեռներից էլ ավելին է, որոնք անդնդախոր մութ վիհերից էլ ավելի խորն են, սև են՝ ինչպես խափշիկը և անլվանալի, ընձառյուծի մորթու պես բծավոր՝ անմաքրելի և ո՛չ անբիծ։ Սրանց թողությունը և մոռացվելն ենք հայցում հավատացյալներս, քանզի մարդկանց համար անհնարին բաները հնարավոր են Աստծու համար, որովհետև Նրանն է զորությունը, նույնպես և Աստվածության անճառելի մեծությունը։ Նույնը և արարչական ողորմությունը և հայրական գութը՝ անեզր և անսահման, ինչպես և ասում է մարգարեն իսկ, որ եթե՝ «Ձեր մեղքերը լինեն այծի մազի պես սև, կամ որդան կարմիրի պես՝ կդարձնեմ ձյան նման ճերմակ, և ասրի պես մաքուր (բնագրում՝ սուրբ), եթե հրաժարվեք չարից և սովորեք բարություն անել և այրիների և որբերի իրավունքը պաշտպանել, և ողորմություն տալ՝

մինչ որևէ բան աղերսելը» (տե՛ս Ես. Ա. 17-19), ինչը և այս աղոթքում խոստանում ենք տալ՝ ասելով.

«Թող մեզ մեր պարտքերը, ինչպես և մենք ենք թողնում մեր պարտապաններին»*։*

Այնքա՜ն [մեծ] է աստվածային սիրո և խնամատարության հորդությունը, որ կամենում է, որպեսզի բոլորը գան ճշմարտության գիտությանը։ Եվ այս է ապրելն ու ճշմարտության գիտության գալը՝ որ բնավ չունենանք ատելություն և մախանք միմյանց հանդեպ և չմտապահենք մեկմեկու հանցանքները։ Ինչպես և գթության և ողորմության անդունդների Տերն աղոթում էր Հորը մեզ համար՝ «Որպեսզի լինեն մի, ինչպես Մենք Մի ենք» (Հովհ. ԺԷ. 11), «Որպեսզի ամենքը մի լինեն. ինչպես Դու, Հա՛յր, Իմ մեջ, և Ես՝ Քո մեջ» (Հովհ. ԺԷ. 21)։ Այդպես ասելով, [մեզ] պարտավորեցնում է, որ մեր թողությունը լինի ի սրտե, անկեղծ և ո՛չ երեսպաշտորեն։ Այդպիսով մենք ենք [դառնում] թողության տերը և դատավորը, և Աստված հետևում է մեր [գործերին]։

«Մի՛ տանիր մեզ փորձության, այլ փրկիր մեզ չարից» *ի կյանք հավիտենական։ Փորձիչ է կոչում սատանային։ Արդ, ինչպես որ Տերը Լույս է կոչվում և Լուսավորություն, անվանվում է Կյանք և Կենդանություն, նույնպես և սատանան՝ փորձիչ և փորձություն։ Ահա ինչու մենք խնդրում և աղաչում ենք փրկել. որպեսզի եթե սատանան խնդրի Աստծուց մեզ իր ձեռքը մատնել՝ փորձելու, ինչպես [երբեմն] Հոբին, ապա [Նա թող] չհանձնի մեզ, քանզի չունենք բազմատեսակ առաքինությունների զորությունը Հոբի, որ արդար էր և ճշմարիտ աստվածապաշտ՝ զատված և հեռացած ամենայն չարից, չար գործերից՝ ըստ վկայության։ Այս առաքինությունները նրա [հոգևոր] զենքերն էին և համբերության պատճառը։ Այս գիտենալով, մեր Տերը հրամայեց աղոթքով ապրել՝ ամեն ժամ աղոթել, որպեսզի փորձության մեջ չմտնենք։ Քանզի Հոբի փորձության տեսակը, որ [ընդգրկում է] ոչ միայն ինչքի կորուստ, զավակների մահ և մարմնի հիվանդություն, այլև՝ փորձությունների բյուր ճանա-*

պարհներ և չարի այլևայլ մեքենայություններ, երբ շնության ճանապարհն է բացում, կամ սպանության, կամ գողության, կամ հերձվածի։ Վերջինս չարագույն է, քան մնացյալը, քանի որ մեղքերի մյուս տեսակները մարդուն հակում են զղջման և խոնարհության՝ մերձեցնելով Աստծուն, իսկ հերձվածը հեռացնում է Աստծուց և դարձնում աներկյուղ՝ զղջալու համար, նաև հանգեցնում է ամբարտավանության, ինչպես Արիոսին, Մակեդոնին, [Պողոս] Սամոստացուն, Նեստորին և այլոց։ Այս պատճառով խնդրում ենք. «այլ փրկիր չարից», որը նույն փորձությունն է, որ նաև կոչվում է «չար», և [որոշյալ] հոդով ասելիս դառնում է հատուկ և առանձնաբար բնորոշ սատանային. և երբ մեկը նկատի ունենա սատանային, կասի՝ «չարը», քանի որ նա է անձնական և այլոց չարիքների պատճառը և, առավել ևս՝ հորինողը։

«Քանզի Քոնն է Արքայությունը և զորությունը և փառքը հավիտյանս. ամեն»

Սա խոստովանությունն է, որ հնչում է Մեր աղերսների ավարտին։ Քանզի ասում ենք. այն, ինչ Դու ունես բնությամբ և Քոնն է, դա հայցեցինք. եթե՝ թո՛ղ դա Քո Արքայությունը՝ որն անսկզբնաբար և հավիտյան ունես, և ունենալով՝ տալիս ես մեզ։ Եվ զորություն, այսինքն՝ կարող ես թողնել մեր պարտքերը, ինչն էլ խնդրում ենք, քանզի դա օտար չէ Քո զորությանը։ Որովհետև ոչ ոք չի կարող ներել մեղքերը, այլ միայն Աստված։ Նույնպես և կարող է՝ ինչպես և մենք ենք կամենում, չտանել փորձության և մեր բոլոր կարիքների պետքերը հոգալ։ Եվ հավիտյան փառքն ունես, որով փառավորում ես Քեզ փառավորողներին հավիտյան, և ոչ թե անցավոր և առօրյա պատվով, սրան արժանի արա Եկեղեցու մանուկներին այժմ և հավիտյանս. ամեն։

(Աշխարհաբար փոխադրություն գրաբարյան բնագրից՝ «Մատենագիրք Հայոց», Ժ. հատոր, Ժ. դար, Երևան 2011. էջ 1106 – 1110)։

Սուրբ Գրիգոր Նարեկացու մեկնության մասին
(Վերջաբանի փոխարեն)

Կարդալով Նարեկացու փոքրիկ երկը, հասկանում ես, որ այն մեծապես նման է հանճարեղ «Մատյան ողբերգությանը»: Ինչպես և «Մատյանը», այն սեղմ է, գերխիտ, և պարունակում է ամբողջ տիեզերք. անհուն է, բարձր՝ բազմոլորտ՝ հասնող հոգևորի ոլորտը, բազմաշերտ և բազմանիստ: Համոզված ենք, որ այն նորից ու նորից է գրավելու հետազոտողների ուշադրությունը, որ այն դեռ շատ է օգնելու հավատացյալին նրա կյանքի ընթացքում: Նարեկացու «Մեկնությունն» ասես բացահայտելով տարածում է գալարված ճանապարհը՝ քրիստոնյայի անցնելիք ճանապարհը. այն ուղեցույց է մեզ համար, նաև օգնություն, որ առնվազն օժանդակելու է՝ ապրելու և պայքարելու այս դժվարին դարում: Այն դեռ կնպաստի հառնելու մոխրից՝ հառնելու և ճախրելու: Այս փոքրիկ տիեզերաքարտեզը բացահայտում է Արարչի և կեցության հարաբերության կերպը, նաև բացահայտում է մարդուն որպես կեցութենակերտ գործոն և Արարչի հետ նրա փոխհարաբերությունը:

Մեկնությունն ինքնին ենթադրում է դիալեկտիկական մոտեցում մեկնաբանվող տեքստին: Իմաստային առումով մեկնությունը և բաժանում է, մասնատում՝ վերլուծում, և համադրում է՝ ամբողջացնում: Գրաբարում «մեկնութիւն» բառի նշանակություններն են՝ «բաժանում», «անջատում», միաժամանակ ունենալով «մեկն» արմատը՝ «պարզ», «ճշգրիտ», «հասկանալի» և իհարկե, «մեկ» իմաստներով: Փորձենք մեծն Նարեկացու օգնությամբ դիտարկել Տերունական աղոթքը որպես *ամբողջություն:* Ամբողջությունն, իր հերթին, պետք է արտահայտել մեկ բառով: Նարեկացին՝ մեծ մտածողը, օգնում է գտնելու այդ բառը՝ չգրված բառը. Ուխտ: Նա իր մեկնությամբ օգնում է մեզ հասկանալ, որ Տիրոջ սովորեցրած աղոթքն ըստ էության *Նոր Ուխտի* կնքումն է նոր ժողովրդի հետ՝ Նոր Ուխտի ժողովրդի հետ: Հետևենք Նարեկացու մտքի ընթացքին:

Աղոթքը սկսվում է «Հայր» բառով, որը մեզ քաջալերում է դիմել Աստծուն, և այն էլ՝ որպես որդիներ, համարձակաբար: Երկ-

որոդ բառը՝ «մեր», վերաբերվում է մեզ՝ մարդկությանը, ավելի ճիշտ՝ քրիստոնյաներիս: Աղոթքի հետագա շարադրանքը նախանշում և կարգավորում է Աստված – մարդ փոխհարաբերությունը. հուշում է այն աստվածակամ հարաբերությունը, որի դեպքու՛մ է գործելու Ուխտը: Վերջինս մեզ կդարձնի Ուխտի զավակներ, Երկնային Հոր որդիներ: Այս ուխտ–աղոթքը սահմանադրում և գծագրում է քրիստոնեական կյանքի ընթացքը, տալիս է գիտելիք, իմաստություն, թե որն է Աստծո կամքը, որի համաձայն էլ մենք ապրելու ենք, գործելու, մեղքից հրաժարվելու, ինչ ենք խնդրելու, և որն է խնդրանքները ստանալու պայմանը: Այս ամենը Ուխտի դրվագներն են: Այն պարունակում է ա) գիտություն, բ) մեր խոստումը, գ) խնդրանքներ և դ) պայման՝ մեր խոստումները կատարելու համար օգնություն, առողջություն և ուժ ստանալու և աղերսանքների իրականացման:

Հայր մեր, որ Երկնքում ես: Աղոթքի առաջին տողը տալիս է գիտություն Աստծո մասին: Այն նաև հուշում է, թե ինչպիսին է լինելու Քրիստոսի Եկեղեցին և որն է նրա վերաբերյալ Աստծո կամքը: «Որ Երկնքում ես». քանի որ որդիներ ենք, ուրեմն և պետք է ունենանք «մեր»՝ «երկրային Երկինքը», որպես Երկնավոր Հոր զավակներ: Այդ «երկրային Երկինքը» Դրախտն էր, որը, ինչպես նկատում է Նարեկացին, Պողոս առաքյալն անվանել է «Երկրորդ Երկինք»: Ադամական մեղքի պատճառով աղճատվում է Դրախտը: Այնտեղ տեղի է ունենում ողբերգություն: Այն իր հերթին բերում է ողբերգությունների անվերջ շարան. առաջին զենումը Դրախտում՝ մարդկանց կաշվեղեն շորերով հանդերձավորման համար, արտաքսումը Դրախտից, Կայենի եղբայրասպանությունը, համաշխարհային ջրհեղեղը և այլևայլ ողբերգություններ: Ջրհեղեղից հետո Տեր Աստված հավաքում է Ուխտի ժողովուրդ՝ Հին Ուխտի ժողովրդին: Նարեկացին պատմության այս անցքերին անդրադառնում է «Անառակ որդու» առակի միջոցով: Այն մարդու անկման, Դրախտից արտաքսման, զղջման և ապաշխարության պատմությունն է, առակաբանված Տիրոջ կողմից: Նարեկացին առանձնահատուկ ուշադրություն է դարձնում մեծ զվարակի զենման խորհուրդին, որը ներկայացնում է Հին Ուխտի արյունազեղ զոհաբերությունը:

Սուրբ թող լինի Քո Անունը: Մաղթանք է. այստեղ, երկրի վրա, թող սուրբ լինի Տիրոջ Անունը (մեր ջանքերով): Սա միաժամանակ խոստում է և պաղատանք: Մենք խոստանում ենք բարի վարքով, ապրած կյանքով օրինակ ծառայել, փառավորել մեր Երկնային Հոր Անունը, միաժամանակ խնդրելով օգնություն՝ ուժ և կարողություն բարին արարելու համար: Նարեկացին համոզում է, որ առ Հայր վերադարձի միակ ճանապարհը Քրիստոսով է. «Ինքն [իսկ] ասաց Իր անունը՝ *Ճանապարհ* և *Ճշմարտություն* և *Լույս* և *Կյանք*», որից հետո ավելացնում է. «Եվ թող արդյունացնի, արժանացնի մեզ, որպեսզի *գնանք*_առ Հայր՝ *Ճշմարտությամբ լուսավորված կյանքով*, որպեսզի գթածին գթա և ողորմածին ողորմի և բարին բարով հատուցի»: Նա այստեղ, ըստ էության, արծարծում է արդարության գաղափարը, Արդարություն, որը ենթադրում է պատիժ հանցանքի համար, ընդհուպ՝ մեղքի դիմաց արյունահեղում, ինչն էլ իր հերթին աղերսվում է Հին Ուխտի հետ: Այնուհետ նա բացատրում է, թե մենք երբ կստանանք Աստվածային օգնությունը անտեսանելի և տեսանելի թշնամիների դեմ պայքարում: Որպես օգնությունը ստանալու պայման Նարեկացին տեսնում է մեր կողմից՝ չմեղանչելու ձգտումը և Պատգամի համաձայն ապրելը. «Այլ Դու, Տե՛ր, Թագավոր մեր, Աստված, Քո քաղցր և կենսաբեր լուծը և թեթև բեռը դիր», որն էլ մեզ կազատի մեղքի իշխանությունից և նրան ծառայելուց, քանզի «չի կարողանա մեզ իշխել բանսարկուն»: Դեռ ավելին, նա խոսում է Տիրոջից տրված զորության մասին, որն օգնում է հաղթելու և ընդոտնելու չարին: Պատգամապահությունն է Տիրոջից օգնություն, զորություն և իշխանություն ստանալու պայմանը: Ակամա հիշում ես սուրբ հայրերի «սիներգիա» եզրի մասին, որն արտահայտում է Աստծո և մարդու փոխհամագործակցությունը, մեկմեկու ընդառաջելը:

Քո կամքը թող լինի երկրի վրա, ինչպես որ Երկնքում է: Հաջորդ հատվածում Նարեկացին սահունորեն անցում է կատարում Պատգամից Պատվիրանին: Վերջինս ավելի մասնակի է: Այն ուղղակիորեն հայտնում է Աստծո կամքը: Տիրոջ կամքը Նարեկացին բացահայտում է մեզ: Նա գրում է. «Երբ խնդրում ենք՝ «Քո կամքը թող լինի»՝ կատարյալ առողջություն ենք խնդրում, որն էլ Աստծո կամքն է»: Սակայն կատարյալ առողջությունը Աստծուց չի

տրվում մեղսագործության համար, այլ՝ Նրա կամքը *կատարելու:* Աստծո կամքի այս մասն էլ է Նարեկացին բացահայտում.«*...և քարոզվեն Ավետարանները ողջ տիեզերքում, և բոլորը դառնան քրիստոնյաներ»:*

Մեր հանապազօրյա հացը տուր մեզ այսօր. Այս Հացը նախանշում է Նոր Ուխտի կնքումը: Աղոթքի այս բառերով մենք խնդրում ենք Աստվածային օգնություն, ուժ և կորով՝ աստվածահաճո ապրելու, Աստծուն նմանվելու, առողջ լինելու, նաև՝ առողջանալու, մեղքից ազատվելու համար: Հին Ուխտի երկնային հացը մանանան էր, որից մի փոքր մաս պահվում էր Ուխտի Տապանակում: Սակայն ճշմարիտ Կյանքի Հացը հենց Քրիստոսն է՝ Տիրոջ խոսքի համաձայն. «Ես եմ Երկնքից իջած Հացը»: Նոր Ուխտի Հացը. Նոր Ուխտի, Որը կնքվելու է Հացի բեկանմամբ՝ Զոհի զենմամբ, Նրա Արյունով:

Եվ թող մեզ մեր պարտքերը.«և» շաղկապով մեղքերի և պարտքերի թողությունը կապվում է Հացի հետ, ինչպես Հին Ուխտում մեղքերի թողությունը կապվում է զոհաբերվող զվարակի հետ:

Ինչպես և մենք ենք թողնում մեր պարտապաններին: Սա մեղքերի թողության *Պայմանն* է, այդ պայմանի գիտությունը: Սա արդեն Նոր Ուխտն է, բեկանված Հացի՝ արյունաքամ Մարմնի՝ Քրիստոսի հեղված Արյան Նոր Ուխտը: Չէ՞ որ սուրբ Եկեղեցու խստագույն հրամայականն է, որպեսզի Քրիստոսի սրբագույն Մարմնին և Արյանը՝ այդ ահեղ, հրեղեն և մաքրամաքուր Խորհուրդին հաղորդվելուց առաջ յուրաքանչյուր ոք շտապի հաշտվելու իր պարտապանների հետ ՝ նրանց, ում հետ չլուծված խնդիրներ ունի, տարաձայնություններ, վիրավորանք և այլն:

Եզրակացնենք. Տերունական աղոթքը սովորեցնում է՝ լուսավորում, թե ինչպես ապրել, ինչպես գործել, ինչպես խնդրել և ինչպես ստանալ խնդրանքները, և ինչպես փրկվել՝ ի կյանք հավիտենական:

Կարեն Գևորգյան

Օգտագործված գրականության ցանկ

Канон за болящего. Москва, 2015. Издательство “Благовест”.

А. А. Дмитриевский, «Евхологион IV века Серапиона, епископа Тмуитского». Киев, 1894

Православный молитвослов (на всякую потребу). Минск, 2013. Свято – Елисаветинский монастырь.

По стопам Христа: наставления отца духовного сестрам Марфо – Мариинской обители милосердия. Москва, 1994. Сестричество во имя Преподобномученицы Великой Княгини Елизаветы.

Акафист Сладчайшему Господу Нашему Иисусу Христу. Москва, 2015. Издательство Сретенского монастыря.

Акафист «Слава Богу за всё», без места и года издания.

Աղոթագիրք. Երևան, 1992, «Գանձասար» հանդես:

Գրիգոր Նարեկացի, *«Մատյան Ողբերգության»,* Երևան, «Սովետական գրող» հրատարակչություն, 1979:

«Դավթի Սաղմոսների Գիրքը». Ե. 2013:

«От Меня это было», М. 2012.

Владимир Набоков: *«Круг»,* Ленинград, 1990.

Նոր Կտակարան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1992:

"Молитвослов, акафисты", М. 2003.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կազմողի նախաբանը 5

Աստվածաշունչ մատյանն աղոթքի մասին..... 9

Աղոթական կանոններ
Առավոտյան աղոթական կանոն 13
Երեկոյան աղոթական կանոն.....21
Աղոթական կանոն հիվանդի համար 31

Աղոթքներ հիվանդների համար
Աղոթք հիվանդների համար..... 44
Աղոթք, որ կարդացվում է հիվանդների ձեթի, հացի կամ ջրի վրա 46
Աղոթք ծնրադրման..... 46
Աղոթք բերքատվության համար 47

Հիվանդի կողմից կարդացվող աղոթքներ..... 48
Հիվանդի աղոթք..... 48
Աղոթք հիվանդության ժամանակ 48
Աղոթք Տիրամորը Նրա «Ամենաթագուհի» սրբապատկերի առջև 49
Այլ աղոթք Տիրամորը Նրա «Ամենաթագուհի» սրբապատկերի առջև.. 50
Աղոթք վշտերի եւ հիվանդության ժամանակ.....51
Գոհության աղոթք 51

Հայր Միտրոֆան Սրեբոյանսկու հոգևոր խորհուրդներն ու
աղոթքներն իր հոգեզավակներին՝ գթության քույրերին 52
Մենաստանի խոստովանահոր գրած աղոթքներն իր
հոգեզավակների համար..... 56
Աղոթքներ գինեմոլությունից, թմրամոլությունից և մյուս
կախվածություններից ազատվելու համար 57
Աղոթք Ամենասուրբ Աստվածամորը Նրա «Անցամաքելի
Գավաթ» սրբապատկերի առջև..... 58
Այլ աղոթք Ամենասուրբ Աստվածամորը Նրա «Անցամաքելի
Գավաթ» սրբապատկերի առջև..... 59
Սուրբ Միքայել հրեշտակապետին ուղղված աղոթքներ..... 60

Սուրբ Միքայել Հրեշտակապետին ուղղված աղոթքի մասին 60
Աղոթք Միքայել Հրեշտակապետին.....61
Մեծարում Երկնային անմարմին Դասերին 61
Ակաֆիստներ..... 62
Փառք Աստծուն ամեն ինչի համար 63
Ակաֆիստ ամենաքաղցր Հիսուսին 78
Ակաֆիստ Ամենասրբուհի Աստվածամորը (Մեծ ակաֆիստ) 85
Ակաֆիստ սուրբ եւ քաջ նահատակ հաղթաբեր Գևորգին 98

Ամենօրյա և տարբեր հանգամանքներում կարդացվող աղոթքներ 112
Հիսուսյան աղոթքը 112
Ամենաբարի իմ Թագուհի 112
Աղոթք ամեն գործ ձեռնարկելուց առաջ.....112
Աղոթք գործի ավարտից հետո 113
Աղոթք Քրիստոսի Պատվական Խաչին 113
Աղոթք կողակցի ընտանիք վերադառնալու համար 113
Աղոթք ուտելուց առաջ.....114
Աղոթք ուտելուց հետո 115
Աղոթք աշխարում ամենայն չարի (աղետներ, պատերազմ,
համաճարակ և այլն) դադարեցման..... 115
Աղոթք միաբանությամբ 115
Աղոթք բերքատվության համար 115
Անզավակ ամուսինների աղոթքը 116
Աղոթք ննջեցյալ ծնողի/տատի/պապի համար 116
Աղոթք ննջեցյալ զինվորների համար.....117
Աղոթք յուրաքանչյուր քրիստոնյա ննջեցյալի համար.....117
Երեխաների ամենօրյա օրհնություն. ծնողի աղոթքը 118
Երախտագիտության աղոթք Աստծո յուրաքանչյուր
բարերարության համար 119
Աստվածային Սուրբ Պատարագից հետո բերվող
շնորհակալական աղոթք 120
Սուրբ Հովհաննես Կրոնշտադցու աղոթքը 120
Գործ ձեռնարկելուց առաջ.....120
Կենդանիների հիվանդության եւ տառապանքի դեպքում.....121
Պահպանիչ աղոթքներ.....121
Աղոթք Խաչի պահպանության.....125
Աղոթք երեխաների եւ սանիկների համար 126

Երեխաների ուսուցումից առաջ կարդացվող աղոթք.....126
Աղոթք համաճարակի ժամանակ 127
Աղոթք անորոշության դեպքում, թե ինչպես է պետք վարվել.....127
Աղոթքի ժամանակ ցրվածությամբ, անուշադրությամբ
եւ անփութությամբ տառապող մարդու աղոթքը 128
Բանտարկյալի աղոթք (բանտարկյալների համար կարդացվող) 128
Օպտինյան անապատի ծերերի ամենօրյա (առավոտյան) աղոթքը.....129
Աղոթահամրիչով կարդացվող աղոթքներ 129
Աղոթքներ սրբերին և Տիրոջը՝ ըստ շաբաթվա օրերի 130
Ուխտագնացին ուղեկից 130
Աղոթքներ նախավկա սուրբ Ստեփանոսին..... 131
Աղոթքներ սուրբ Հովհաննես Կարապետին 132
Աղոթքներ Տիրամոր «Յոթնասլաք» կամ «չար սրտերի մեղմացում»
սրբապատկերի (ալեքսանդրապոլյան ավանդույթում՝ «Յոթվերք»)
առջև 133
Աղոթքներ սրբազնանահատակ Գրիգորին՝ Մեծ Հայքի Լուսավորչին.....134
Ներսես Շնորհալի. Ներբող սուրբ կույս Հռիփսիմեին 137
Աղոթքներ Փոքր Հայքի Սեբաստիա քաղաքի Քառասուն վկաներին.....139
Աղոթք քաջնահատակ սրբուհի Վարվառային 141
Աղոթքներ սրբազնանահատակ Վլադիմիր Համբարձումովին՝
մոսկովյան երեցին.....142
Աղոթք Քրիստոսի Պատվական Խաչին 144

Հավելվածներ

Աղոթարարին՝ հորդորական
Ինձանից էր այդ 146
Վլադիմիր Նաբոկով *(Դոստոևսկու մահվան տարելիցին)*
Այգում քայլում էր Քրիստոսն աշակերտների հետ 153

Աղոթարարին օգնական
Ինչպես աղոթել («Հայր մեր...») 154
«Հայր մեր» աղոթքի մեկնությունը սուրբ Գրիգոր Նարեկացու կողմից 155
Սուրբ Գրիգոր Նարեկացու մեկնության մասին
(Վերջաբանի փոխարեն) 164

Օգտագործված գրականության ցանկ.....168

ՓՈՔՐԻԿ ԱՂՈԹԱԳԻՐՔ

Նաև աղոթքներ հիվանդների համար
և հոգևոր օգնություն հիվանդապահներին
և խնամողներին

Թարգմանությունը եկեղեցասլավոներենից և ռուսերենից՝ Կարեն Գևորգյանի

Խմբագիր՝ Մարիետա Խաչատրյան

МАЛЕНЬКИЙ МОЛИТВОСЛОВ

(На армянском языке)

Перевод с церковнославянского и русского языков
Карена Геворгян

Էջմիածին - 2022

Չափսը՝ 60x84 1/16, թուղթը՝ 80 գ.,
ծավալը՝ 172 էջ, տպ. 500: